

«DROSCHAK»  
REVUE MENSUELLE  
Organe  
de la F. R. A. D.

# ԴՐՕՇԱԿ

№ 5  
M A I  
1931  
PARIS (France)

«ՀԱՅ ՏԵՂԵՓՈՒԹԵԱՆ ԴԱՂՆԱԿՑՈՒԹԵԱՆ» ՕՐԴՆԵ

## Զ Ա Ն Գ Ե Զ Ո Ւ Ր Ի Ա Ղ Է Տ Ը

### ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐ.

Մեր Հայրենիքի ընդարձակ մեկ մասը՝ գրեթե ամբողջ Զանգեզուրի գաւառը ենթարկւած է երկրաշարժի մեծ դժբախտութեան: Գորիս, Սիսիան, Ղափան, Արեւիք, Գողթն քաղաքներն են եղած: 51 գիւղ ակերւած, 390 մարդ սպանւած, 7420 վիրաւոր, մօտ 10,000 անասուն կոտորւած: Եւ այս դեռ առաջին, հապնեպով հաւաքուած թւերն են: Կարելի է երեւակայել, թէ ի՞նչ տհաւոր համեմատութիւններու կը հասնի աղէտին պարզած իրական պատկերը:

Արդէն, ամէն կողմէ կը լսին օգնութեան ազաղակներ, կը խնդրեն նիւթական օժանդակութիւն, առողջապահական նիւթեր, դեղ ու վիրաբուժական գործիքներ, հագուստ, մեքենաներ, վրան: Կարիքը սուր է եւ անյետաձգելի:

Որքան ալ ծանր ըլլայ արտասահմանի հայութեան ներկայ վիճակը, իբրեւ հետեւանք տնտեսական համատարած տագնապի, Հայաստանէն հասնող օգնութեան քիչերը չեն կրնար մնալ անբեղի: Նոյնիսկ ամենահամեստ, բայց ժամանակին հասցւած, օգնութիւնը մեծ սփոփանք պիտի ըլլայ երկրի աղիտահար ժողովուրդին համար:

Կոչ կուղղենք բոլոր հայրենակիցներուն եւ հանրային մարմիններուն արձագանգել Հայաստանէն արձակուած օգնութեան ազաղակներուն:

Օգնեցէ՛ք ինչով եւ ինչպէս որ կարող էք:

Հ. Յ. Գ. ԲԻՒՐՕ

# „ ԴՐՕՇԱԿ՝ Ի ՔԱՌԱՍՆԵԱՄԵԱԿԸ

Այս ամիս լրանում է «Դրօշակ»ի քառասնամեակը:

1891թ. մայիսին լոյս տեսաւ «Դրօշակ»-ի առաջին թիւը եւ, տասնամեայ դադարից յետոյ մեծ պատերազմի առթիւ, մինչեւ այսօր շարունակում է հրատարակել կանոնաւորաբար, իբրեւ Հ. Յ. Դաշնակցութեան կենտրոնական օրգանը:

Իր գոյութեան չորս տասնամեակների ընթացքին, «Դրօշակ»-ը միշտ միեւնոյնը չի եղել. ժամանակի ու պայմանների հետ միասին փոխել է եւ նրա բովանդակութիւնը, նիւթերի բնոյթն ու խմբագրելու ձևը: Մինչ առաջին շրջանում, մինչեւ Օսմանեան Սահմանադրութիւն, տիրողը մարտական գործի անմիջական հրահրումն էր, յուզական թափն ու կուր մղումը, 1908 թւից սկսած, մինչեւ պատերազմի առաջին տարին, «Դրօշակ»-ը դառնում է գերազանցապէս պատմական նիւթերի ու յուշերի, գրական կտորների ու քաղաքական տեսութիւնների շտեմարան: Պատերազմի նախօրեակին միայն, երբ հրատարակութիւնը սահմանափակ կարգերից համակում է ամենքին, «Դրօշակ»-ը նորից ձեռք է առնում մարտի շեփորը:

Վերջին շրջանում, 1925 թւից մինչեւ այսօր, «Դրօշակ»-ը առաւելապէս միջոց է քաղաքական-ընկերային նիւթերի մշակման, ու հարցերի առաջադրութեան, ժամանակակից կեանքի վերլուծութեան ու լուսաբանութեան եւ Երկրի ղեկավարի տեղեկատուութեան: Զգացմունքից աւելի նա դիմում է մտքին, խօսում է աւելի ուղեղին, քան սրտին, աշխատում է մշակել պայքարի խնդիրները եւ ձեւակերպել գաղափարները: Իր այս յատկութեամբ «Դրօշակ»-ը որոշ չափով մօտենում է արդի եւրօպական կուսակցութեանց կենտրոնական օրգաններին, ա՛յն տարբերութեամբ, որ վերջինները գործում են ազատ կարգերի խաղաղ պայմաններում, մինչ «Դրօշակ»-ը հարցերը մշակում է յեղափոխական գործունէութեան հետակադրով:

Կայ մի յատկանշական տարբերութիւն անցեալի եւ ներկայի միջեւ: Անցեալում «Դրօշակ»-ն ունէր միայն արտաքին թշնամի. նրա պայքարը, գրեթէ բացառապէս, համիրեան բռնակալութեան եւ ցարական սանձարձակութեան դէմ էր: Ներքին ուժերից միայն սակաւաթիւ դաւաճաններն ու մատնիչներն էին ըզրաղեցնում նրան, իսկ պահպանողական-հակայեղափոխական տարրերը, հակառակելով հանդերձ յեղափոխական շարժման, շատ յա-

ճախ, արտաքին թշնամու հանդէպ կանգնած էին միեւնոյն ճակատում յեղափոխականների հետ: Այսօր էլ պայքարը ուղղւած է, ըստ էութեան, նոյն երկու ուժերի դէմ — Համախի փոխարէն Մուսթաֆա ֆեմալն է թշնամին, ցարի փոխարէն՝ բոլշեւիկեան իմպերիալիզմը: Բայց սրանց կողքին կայ եւ մի երրորդ գործոն՝ հայ բոլշեւիկը, որ առաջ գոյութիւն չունէր եւ որ նոյնքան մոլեռանդ ու կատաղի թըշնամի է հայկական դատին, որքան եւ բոլշեւիկ ռուս ու քեմալական թիւրքը, որոնց մտերիմ բարեկամն ու գործակիցն է:

Միայն թշնամին չէ, հիմնապէս կերպարանափոխւած են եւ միջավայրի պայմաններն ու գործունէութեան ձեւերը. եթէ է առաջ կուր գլխաւոր գէնը ռումբ ու հրացանն էր, յեղափոխական խիզախութիւնն ու անհատական քաջութիւնը, այսօր նոյնքան անհրաժեշտ է եւ մտաւոր ու գաղափարական պայքարը: Հակառակորդը հայ կեանք է մտնում ձեւակերպւած նշանախօսքերով, Հայաստանում՝ կիրառւում են ընկերային որոշ ծրագիրներ, փորձում են օգտագործել գիտութեան տեսլիներ — նոյն գէնքերը հարկաւոր են եւ մեզ համար: Գիտութեան պէտք է հակադրել գիտութիւն, գաղափարական գէնքին՝ գաղափարական գէնք:

Կայ եւ մի այլ կարեւոր հանգամանք. առաջւայ «Դրօշակ»-ի մտասեւեռման առարկան բացառապէս Հայաստանն էր — Երկիրն ու երկրի ժողովուրդը: Պատերազմից յետոյ, հայութեան մէկ երրորդը երկրից դուրս է: Համարեա ամբողջ թիւրքահայութիւնը՝ բունի հեռացւած իր հողից ու տնից, խռովւած հոգով ու հայրենաբողձ՝ անհամբեր սպասում է վերադարձի օրան: Այս զանդւածի կեանքն ու քաղաքական-ազգային ապրումներն եւս չեն կարող վրիպել «Դրօշակ»-ի ուշադրութիւնից:

Եւ, վերջապէս, առաջ է եկել մի ուրիշ նոր երեւոյթ: Բացի Օսմանեան Սահմանադրութեան հետ կապւած կարճատեւ ժամ շրջանից, հին «Դրօշակ»-ներում հազուադէպ են հայ յեղափոխականների եւ թիւրքիայի իսլամ տարրերի համերաշխութեան ղէպերը. քաղաքական ջրբարշխի շրջանն եւ ռազմաճակատը հային բաժանում էր մահճեղականից. հայ յեղափոխականը՝ մի կողմ, թիւրքն ու քրեղը՝ միւս: Այսօր զատորոշող այդ գիծը անցնում է ոչ թէ կրօնական, այլ ազգային սահմանով, եւ հայն ու քրեղը այժեպ պայքարի մէկ ճակատում են թիւրքական տիրապետութեան դէմ:

Կարելի է մատնանշել եւ ուրիշ տարբերութիւններ անցեալի եւ ներկայի միջեւ, բայց

այսքանն էլ բաւական է՝ տեսնելու համար, թէ հնի համեմատութեամբ ի՞նչ լուրջ փոփոխութիւններ են առաջ եկել կեանքի եւ գործունէութեան նորագոյն պայմաններում: «Դրօշակ»-ը, որպէս բերանը գործօն յեղափոխական կուսակցութեան, ի հարկէ, չի կարող հաշի չափնել կատարած փոփոխութիւնները: Այստեղից՝ եւ այն տարբերութիւնը, որ կայ անցեալ եւ ներկայ «Դրօշակ»-ների միջև: Ճիշտ է, խորքով, ընկերային ըմբռնումներով ու ազգային-քաղաքական գաղափարների սեւեռումով, ինչպէս եւ յեղափոխական ոգով եւ աւանդութիւններով «Դրօշակ»-ը այսօր էլ նոյնն է, ինչ որ էր երէկ. առաջին համարից սկսած մինչեւ վերջինը նոյն աշխարհահայեացքն է իշխողը ու նոյն ոգին: Իայց գաղափարների ձեւակերպումն ու նիւթերի զարդացման՝ եղանակը, գործունէութեան դաշտն ու թշնամունք հարածելու ձեւերը, անշուշտ, ընդարձակած ու փոխւած են: Որովհետեւ փոխւած են կեանքն ու միջավայրը, փոխւած ու լայնացած են ե՛ւ մտքի ու գործի հորիզոնները:

«Դրօշակ»-ը գաղափարական կեանքի ասպարէզ իջաւ, երբ հայ հասարակութիւնը դեռ նոր էր ոտք դնում յեղափոխական պայքարի ասպարէզ: Իայց գրեթէ հէնց առաջին քայլից նա բռնեց որոշ ու հաստատուն ուղղութիւն, որին անշեղորէն հետեւեց եւ այնուհետեւ: Պայծառը ոչ միայն Հ. Յ. Իշնակցութեան

գաղափարների պայծառութիւնն ու տոկունութիւնն էր, այլ եւ նրա հիմնադիրների ու վարողների մտքի յասակութիւնն ու բազկի ամբողջութիւնն էր: Պէտք է յիշել միայն, թէ գաղափարի ու կամքի որպիսի տիտաններ էին «Դրօշակ»-ի հիմքը դնողները, ովքեր էին «Դրօշակ»-ի խմբադիրներն ու մերձաւոր աշխատակիցները — Ռոստոմ, Քրիստափոր, Զաւարեան, Արամ Արամեան, Պետօն, Յովհան Դաւթեան, Ա. Վռամեան, Ս. Մինասեան, Գ. Սաժակ, Արմէն Գարօ, Հրաչ:.. Սրանց անմահական շնչի տակ հասակ առաւ «Դրօշակ»-ը, սրանց մտքի հարստութիւններով ու ճանաչաւ ու ճոխացաւ, սրանց ցանած գաղափարներից մը ստաւոր սնունդ ու յեղափոխական դաստիարակութիւն ստացան ամբողջ սերունդներ, որոնց շարքերից դուրս եկան հայ յեղափոխական մարտիկների շքեղ փաղաղները:

Այսօր էլ, քառասուն տարի յետոյ, «Դրօշակ»-ը շարունակում է ապրել ու՝ ոգեւորել հիմնադիրների պարզած դրօշով ու քարոզած իդէալներով: Ռոստոմի, Քրիստափորի ու Զաւարեանի հանճարը, բարձրադիր փարոսի պէս, շարունակում է լուսատրել մեր ճանապարհը — ճանապարհը հայ յեղափոխութեան: «Դրօշակ»-ը այսուհետեւ էլ անվարան կը քայլէ այդ ճանապարհով՝ վստահ, որ վերջնական յաղթանակի օրը հեռու չէ:



ՔՐԻՍՏԱՓՈՐ ԵՒ ԼՈՒԻՆՎԵՎԻԶ (Արարատուկ)

# ԿՈՎԿԱՍԱՀԱՅԵՐԸ ԵՒ ԻՐ ՀԱՐԵՒԱՆՆԵՐԸ

Գրեց՝ ԴՈՍՏՈՎ

Հ. Յ. Գ. կենտրոնական Դիւանից առնելով՝ հրատարակութեան ենք տալիս «Դրոշակի» առաջին խմբագիր Դոստովի ներկայ գրածոքը: Ձեռագիրը կիսատ է, և մեզ յայտնի չէ, թէ արդեօք որևէ տեղ տպւած է: Յօդւածը գրւած է 1905 թիւն, Կովկասում տեղի ունեցող դէպքերի տպադրութեան տակ և այսօրայ համար էլ դեռ հնացած չէ: ԽՄԲ.

Երբ Դանակցութիւնը, իբրև կազմակերպւած կուսակցութիւն, երևան եկաւ Տաճկաստանում, առաջին քայլից յայտարարեց, որ նրա կուրբ բացարձակապէս բռնակալ կառավարութեան դէմ է և ոչ զբացի ազգութիւնների, ինչպէս ևն տաճիկները և քրիտոքրերը: 15 տարւայ փորձերը ցոյց տւին, սակայն, որ Դանակցութեան տրամադրութիւնը բաւական չէ եղած խորը շարժումները խորտակելու և իր կուրբ միմիայն բռնակալութեան դէմ կենտրոնացնելու: Դեռ մինչև այսօր մենք ստիպուած ենք մեր ուժերը ջլտահել, դիմադրելով և վայրենի քրիտոքական ցեղերին և թալանի ծարաւ ու մոլեռանդ թիւրք ամբոխին:

Սկսելով մեր կուրբ Կովկասում, մենք մեզ աւելի բարեյաջող պայմանների մէջ էինք համարում: Չէ թէ այլ և այլ հաշիւներ չունէինք մեր դրացիներէ հետ, չէ, բայց այն հանդամանքը, որ կովկասեան ցեղերի մէջ աւելի զիտակցութիւն կայ, քան Թիւրքիայում, որ բոլորն էլ անխտիր զուրմ են իրենց վրա ծանրացած միապետութեան լուծը, որ յաճախ դժգոհութիւնը արտայայտուած է բողբոջ այլ և այլ ձևերով, այս բոլորը լուրջ դրաւական էր համարում, որ միապետութեան դէմ յայտարարելիքը կուրբ մէջ բոլորն էլ պատրաստ կը լինեն միաստու և փոխադարձ հաշիւները մոռանալու: Հայ ժողովուրդը, որ յանդգնութիւն ունեցաւ առաջինը գէնքը ձեռնի զուրս դալու ընդհանուր թըշնամու դէմ, այն էլ բռնակալութեան ամենագործող օրերին, երբ դեռ չկար պատերազմ և ամբողջ Ռուս կայսրութիւնը կաշկանդուած էր Պէլէյի ճանկերում, այդ ժողովուրդը իրաւունք ունէր սպասելու, որ նրա արած գոհողութիւնները կը զնահանայ վիճակակից ցեղերի կողմից և մոռացութեան կը տրւին մանր ունը հաշիւները: Երբ հսկայի դէմ կուրբ էր դուրս դալիս մի ժողովուրդը, որ փոքրաթիւ էր միւսների շարքերում, մինչև այդ ժամանակ վախճուած համար էր հանել, որ ընդունակ էր համարուած միմիայն տնտեսապէս կեղծեցելու ասպարէզի մէջ, երբ դէնքի է դիմում իր իրաւունքները պաշտպանելու համար, մի ժողովուրդը, որ դարբերով ստրկութեան մէջ էր սպրել, պէտք էր սպասել, որ աւելի նպաստաւոր պայմանների մէջ ապրած նրա դրացիները ո՞ր միայն համակրէին, այլ և հետեւելով նրա օրինակին, աւելի առաջ անցնէին: Բայց այդպէս չեղաւ:

Համակրանք մեզ չզղացան, այդ մենք տեսանք

բազմաթիւ օրինակներով: Հետեւելու փորձեր էլ եղան, նոյնիսկ մահմեդական ամբոխի կողմից: Բայց հետզհետէ դարութիւնը սկսեց փոխել, և այսօր մենք տեսնում ենք, որ բռնակալութեան տակ ճնշւած, իր իրաւունքների մէջ վերջին ծայր տեղւած մահմեդական ազգաբնակչութիւնը իր մէջից դուրս է հանում տարբեր, որոնք կոյր գործիք դառնալով բռնակալութեան ձեռքին, մոլեռանգար քրոջակուղմ են հայրի վրա: Ուշադրութեան արժանին այն է, որ այդ կոյրերը իրենց թշնամութիւնը պատճառաբանում են նրանով, որ հայ ժողովուրդը յեպագիտական է, որ նա ըմբոստանում է կառավարութեան դէմ, այն կառավարութեան, որին իրենք միաբերուն անիծում էին մինչև հիմա: Տեսնում ենք մի ուրիշ, աւելի անսպասելի երևոյթ, — վրացիներն էլ սկսել են իրենց ատամները արել: Մենք կարևորութիւն չտւինք այն հանգամանքին, որ Բաւարայ դէպքի ժամանակ Թիֆլիսում ևն ցրեցին վրացիների կոչեր, որով հրաւիրուած էին նրանց ևս յարձակել հայրի վրա: Դրանից յետոյ վրաց ազգային օրգան «Քովէրիայում» երևացին պահանջներ՝ քշելու Սև Մոզի ափերից այնտեղ ժամանակաւորապէս բնակութիւն հաստատած հայ դադթականներին, դրա վրա արգէշ չէր կարելի կանգ չառնել, բայց վերջերս իր շո՞վինիստական մի խմբակի թիւում տրամադրութեան, դարձեալ ուշադրութիւն չդարձրինք, հաւատացած լինելով, որ ինդեր հանդուները իրենք կամային և կը լռեն, իսկ եթէ չլռեն էլ, զա կը մնայ միայն «Քովէրիայի» էջերում և քրոջանգ չի գտնիլ վրաց հասարակութեան մէջ: Բայց այսօր լսում ենք, որ Գուրթայտում, նահանգապետի տան առջև, ինչ որ ժողովրդական ցոյց է եղել, ուր պահանջել են քշել նահանգից բոլոր հայրերն: Ի հարկէ, լուրը չարիքանցութիւն է, բայց չկայ ծուխ առանց կրակի, նշանակում է մի բան պատրաստում է, և զարմանալի չի լինիլ, եթէ, օրինակ, Բաթումում տեղի ունենան արիւնահեղ ընդհանրամենք նոյնիսկ մեր և վրացի բանուորների մէջ:

Այս բոլորից պարզ է, որ հակառակութեան, թըշնամութեան որոշ պատճառներ կան: Մենք միշտ կառավարութիւն ենք պատճառ բռնում, հայտնում ենք վէլիչկոյին\*, Գալիցիներին, սպանում ենք Նակաշիճէներին, բայց սրա հետ միասին պարզ պէտք է լինի, որ որպէսզի կառավարութիւնը կարողանայ յարողութիւն ունենալ, պէտք է, որ պատշաճ հող գտնի իր պրոպագանդի համար: Թէ ինչո՞ւ է կառավարութիւնը մեզ թշնամի, դրա վրա չարժէ կանգ առնել, խօսենք այլ օրէկտներէ մասին:

Մեր դրացիները. Մահմեդականներ: (Այստեղ ձեռագիրը վերջանում է):

\* «Կակազ» պաշտօնաթերթի խմբագիր և Գալիցիների հայակեր գործակիցը:



Չ Օ Ր Ա Վ Ա Ր Ե Ա Ջ Ա Ր Թ Է Գ Ե Ա Ն

Այս տարւոյ փետրուար-19-ին, Թիֆլիսում, 76 ոտ-  
րկկան հասակում, վախճանեց Հայաստանի Հանրա-  
պետութեան անդրանիկ և միակ սպարապետը՝ զօր-  
Թովմատ Նազարբէգեան: Բացի բոլշեակներէից, ամբողջ  
Հայ ժողովուրդը իր բոլոր քաղաքական հոսանքներով,  
մի պահ համախմբեց նրա գերեզմանի շուրջ՝ երկիւղա-  
ծուութեամբ ու պատկատանքով զլուրի խոնարհած նրա  
յիշատակի առջև:

Զօր-Նազարբէգեանի կեանքը բաժանուած է երկու  
մասի. առաջինը՝ մինչև համաշխարհային պատերազմի  
սկիզբը՝ պատկանում է ուսուսանողի ու ռուս պետու-  
թեան: Երկրորդը՝ սեփականութիւնն է Հայ ժողովուրդի  
և անդիլիօրէն կապուած է Հայաստանի Հանրապետու-  
թեան պատմութեան հետ:

Մեծած 1855թ. օգոստ. 1ին, Թիֆլիսում՝ Նազար-  
բէգեանը ստանում է ուսուսանողի կրթութիւն, աւարտում  
է Ալեքսանդրեան Զինուորական Վարժարանը և իրրև  
սպալ Երևանեան նշանաւոր գնդի՝ մասնակցում է  
1877-78թ. ուսուսանողական պատերազմին: Արդահանի  
բերդի պաշարման ժամանակ, որպէս համահարց զօր-  
Հէյմանի, աչքի է ընկնում բերդի գրաւման միջոցին,  
որի համար վարձատրուած է քաղութեան նշաններով:  
Ռուս-ճապոնական պատերազմին, զնպաստի պաշտօ-  
նով, որպէս հրամանատար հետևակ գնդի, իր ցոյց  
ուած քաղութիւնների համար ստանում է ոսկի օսր:

Պատերազմից յետոյ առաջարկութեամբ է ստանում  
բրիգադի հրամանատարութիւն ընդունել Ռուսաստա-  
նում, բայց նա ուզում էր ծառայել Կովկասում: Ռուս  
կառավարութիւնը մերժում է կատարել նրա ցանկու-  
թիւնը, որովհետև նա պիտոյրկաններին, առհասարակ,  
արգելում էր հայ գիւնտարկաններին, առհասարակ  
բէգեանը թողնում է գիւնտարկան ծառայութիւնը և  
պահևտի զօրավարի աստիճանով տեղափոխուած Թիֆ-  
լիս, ուր և մնում է մինչև ընդհանուր պահերազմի  
սկիզբը:

Ինչպէս տեսնում ենք, սովորական բարեխիղճ ու  
քաջ ուսուսանողական էր Նազարբէգեանը: Հայ կեան-  
քի հետ ուշինչ չէր կապում նրան: Հայերէն անգամ  
չգիտէր: Մտառայում էր ուսուսանողին ու ուսուսանողի  
նկրթին:

Համաշխարհային պատերազմի յեղաշրջեց շատ  
րան, ու շատ մտքեր ու հպիներ այլափոխեց: Շատ  
օտարացած հայեր հայացան, դարձան դէպի իրենց  
մայր ժողովուրդը: Նազարբէգեանը դարձաւ շարքում  
առաջիններից էր ու ամենէն փայլունը: 1914 թիւ րմա-  
կան ևս նորից գլխի տակ առնեց և նշանակեց 2րդ  
Կովկասեան Հրացանաձիգ Դիվիզիայի պետ, պարսկա-  
կան ճակատում: Այստեղ նա աչքի ընկաւ Ռախիլ փա-  
շայի գէժ մղած փառաւոր ճակատամարտով:

1915թ. գարունն էր: Վանը պաշարուած էր և հեր-  
սական զինադրութիւն էր ցոյց տայիս: Սարըզամիշի  
տակ ջախջախած՝ Էնփէր փաշան փորձում էր նոր  
ռազմախաղով ո՛չ միայն ուղղել կրած պարտութեան  
աւերները, այլև շեշտակի հարած տալ ուսանելի  
կտրելով Թիֆլիս-Բազու երկաթուղագիծը և կովկաս-  
եան ուսուսանողի թիկունքում առաջ բերելով մահմե-  
դական ասպատակութիւններ: Ռախիլ փաշայի 30,000-  
նոց զօրքը շարժուած է դէպի Ատրպատական, որտեղից  
պիտի մտնէր Ազրբէջան, ոտքի հանելով Կովկասի թա-  
թարներին ու լեռնականներին: Կովկասին պիտի յա-  
ջորդէր մահմեդական Թուրքիստանը: Ի՞նչ հրապուրիչ,  
արեցնող հեռանկարներ...

Մրազիլը խեղա յանդուգն էր, բայց ոչ առանց  
իրական հաշի: Ռուս զօրամասերը պարսկական ճակա-  
տում շատ նօսր էին, իսկ կովկասեան մահմեդականու-  
թիւնը նախապատրաստուած էր համախմբական քարո-  
զով ու ջիհադի գրգռումներով: Բաւական էր ոտքի տակ  
տալ Նազարբէգեանի ուժերը, ճեղքել Արաքսն ու մըտ-  
նել Գանձակի ու Բալայ նահանգները, և ամէն ինչ  
իրար կը խառնէր: Բայց Ռախիլ փաշայի խելայեղ յան-  
դգնութիւնը հանդիպեց զօր-Նազարբէգեանի — ինչպէս  
թիւրքերն էին ասում՝ «Նազար փաշայի» երկաթէ պող  
վճառականութեան: Մի բուրբ ուսուսանողներով և Ան-  
դրանիկի քաջերով մի կարծք տեղեց թշնամուն, Իլ-  
անի դաշտում, Աւարայրի պատմական դաշտից ոչ  
շատ հեռու: Ճակատամարտը եղաւ արիւնոտ: Շատերն  
ընկան: Նազարբէգեանը մնաց անյողզող, փայտի պէս  
ամուր:

Հետեանքը յայտնի է. — Ռախիլ փաշան, պարտուած  
ու ամօթահար, փախուտակի դիմեց՝ հագրե փրկելով իր  
բանակի բեկորները: Կովկասեան ճակատը ապառեց  
ծանր մղձաւանջից:

Իրկմանի ճակատի համար Նազարբէգեանը ստացաւ  
Գլորիան խաչ և Փրանսական գիւնտարկան բարձրա-  
դոյն պատանշանը: Բայց, անտարակոյս, մեծագոյն  
վարձատրութիւնը նրա համար եղաւ Վանի փրկութիւ-  
նը: Վանը ապառեց Իրկմանի յաղթանակի հետեան-  
քով: Քիչ յետոյ Արարատեան կամաւորական ջոկատի  
այրուձին Ռէշօի թառջնորդութեամբ մտնում էր Վան  
հայ ազգաբնակչութեան ցնձազին ծախերի տակ...

Իրկմանից յետոյ էր, որ Նազարբէգեանը դարձաւ  
հայ, մանաւանդ երբ աւելի մօտ չիւեց հայկական շըր-  
ջանների հետ, տեսաւ թիւրքական բարբարոսութիւն-  
ները, թիւրքաճալ քաղաքները և զիւրերի աւերը: Նրա  
զօրամարտը զորձում էր թիւրքահայաստանի արեւելեան  
գաւառներում: Պատմական յիշատակները և նոր կեան-  
քի սարսափները չէին կարող չազդել նրա վրա: Այդ  
ազդեցութիւնը դառնում էր աւելի և աւելի տիրական:

Գուցէ և իրեն համար անկատելի ձևով նա դառնում էր հայ իրականութեան գործօն դէմքերից մէկը: Նա-  
 դարբէզեանի իսկական հոգին, նրա զայտարարական  
 մեծութիւնը երևան եկաւ այն օրերին, երբ ոռու բա-  
 նակը, տարերային թափով, լքեց ուղղամտականը և  
 շարժեց «գէշի տուն»:

Հեռացող ոռու զորքերի տեղը մնում էր բաց: Հա-  
 յոյ Աղայային Խորհրդի գերագոյն ճիւղերով ծնունդ ա-  
 ուու Հայկական Կրօնութիւն, որի պատ նշանակեց զօր.  
 Նազարբէզեանը: Պաշտօն չէր այլ, այլ՝ ծանր խաչ,  
 որ Նազարբէզեանը տարաւ դարձանալի համբերու-  
 թեամբ ու կրօնով: Միայն նրա պէս մտքով հանդարտ,  
 հաւատարակչիւ, խորթաբանց յարատե ու անվհատ,  
 խուճապ ու վախ չճանաչող մէկը կարող էր փրկել այն  
 օրերի կացութիւնը: Եւ եթէ հայ Նորածիլ բանակը  
 բոլորովին չփրկեց էլ հայ ժողովրդին, մեծապէս մեղ-  
 մացրեց վերահաս աղէտը:

Նազարբէզեանը, ի հարկէ, մենակ չմնաց: Նա  
 բախտաւոր բնաւորութիւն ունէր շրջապատելու իրեն  
 ընտիր ուժերով: Նրա անմիջական գործակիցներն էին  
 Ստ. Մամիկնիշեանի, Արամի, Դրօի, Ս. Մանասեանի,  
 գնդ. Մամարցեանի, զօր. Միլիկեանի նման քաղաքա-  
 ցիական ու գինորական տաղանդաւոր գործիչներ:  
 Զինուորութիւնը նրան սիրում ու հաւատում էր: Եւ  
 միայն այդ համակրանքի ու վստահութեան շնորհիւ էր,  
 որ, ընդհանուր աւերի ու քաօսի մէջ, կարելի եղաւ  
 կերտել Մարդարապատը, Բաշ Արարանն ու Ղարաբա-  
 իխան, առանց որոնց Հայաստանի Հանրապետութիւնը  
 գոյութիւն չէր ունենայ:

Եւ զարմանալի չէր բնաւ, որ, երբ ծնունդ առաւ  
 Հայաստանի Հանրապետութիւնը, հայոց սպարապե-  
 տութեան «բարձն ու պատիր» ինքնաբերաբար անցու  
 զօր. Նազարբէզեանին: Որեւէ մէկի մտքովն անգամ  
 չէր անցնի առարկել: Բնական էր, այդպէս էլ պէտք է  
 լինէր. զօրավայր Նազարբէզեան Սպարապետ Ամենայն  
 Հայոց:

Եւ այդ պաշտօնում Նազարբէզեանը մնաց մինչև  
 անկախութեան խորտակումը բոլշևիկ - ջեմալական  
 հարածներին - տակ: Տեսաւ ուրախութեան ու վշտի  
 վայրկեաններ: Հայ ժողովրդի հետ միասին ապրեց  
 յուզումի օրեր: Եւ հայ ժողովրդի հետ միասին ջամեց  
 դառնութեան բաժակը մինչև վերջին կաթիլը:

Հանրապետութեան անկումով վերջանում է Նա-  
 զարբէզեանի գործօն կեանքը: Այնուհետև նրան վի-  
 ճակում է միայն տանջանք ու դանդաղ մահացում: Նա  
 տեսաւ իր իղէալների փրուզումը: Աքսոր, անարգանք,  
 սով, հիւանդութիւն — ճաշակեց կեանքի բոլոր զար-  
 հուրանքները: Եւ երբ փետր. 19-ին մեռնում էր, մե-  
 նակութեան մէջ, իր մութ ու խոնաւ խցում, դուրսը՝  
 դեռ խելայեղօրէն ոտնում էր քաղաքական խտտաշունչ  
 փոթորիկը: Մտածո՞ւմ էր արդեօք նա, աչքերը յաւի-  
 տենապէս փակելիս, թէ այս փոթորիկից յետոյ էլ կը  
 ծագէ պայծառ արևը և կեանքը նորից կը ծաղկէ շքեղ  
 փարթամութեամբ...

Անհատները չեն, ի հարկէ, կեանքի հեղինակները,  
 բայց անհատի դերը շատ մեծ է հասարակական կեան-  
 քի զարգացման մէջ: Անհատներ կան, որոնց անունը,  
 բարձր փարոսի պէս, լուսաւորում է ընդարձակ տա-  
 րածութիւններ: Զօր. Նազարբէզեանը այդ անուններից  
 է մեր կեանքում:

Նրա մուտքը հայկական կեանքի ասպարէզ եղաւ  
 լուռ ու անաղմուկ: մի օր էլ, յանկարծ, ամենքը տես-  
 ան, որ զօր. Նազարբէզեան կայ, որ պլխաւորում է  
 հայոց մարտական ոյժը: Ոչ ոք չսասց՝ ո՞վ է նա, ին-  
 չո՞ւ պիտի դրի այդ բարձր ու պատասխանատու պաշ-  
 տօնին: Բնական էր, զօր. Նազարբէզեանը պէ՛տք է  
 լինէր:

Նոյնպէս անաղմուկ էլ հեռացաւ: Գուցէ ոչ ոք չը-  
 լուէր էլ նրա մահը, եթէ մի պատահական հեռագիր  
 չիմացնէր: Հայաստանի ու թիֆլիսի մամուլում մի սող  
 անգամ չզրուեց: Մի թիւրք փաշայի մահւան մասին կը  
 զրուէր, բայց Հայոց Սպարապետի...

Բայց որքան էլ «կատաղի ու գայրանայ շարութիւ-  
 նը», դաճածները կերթան ու կը մոռացնին, իսկ  
 Նազարբէզեանների անունը կապրի յաւիտենապէս, քա-  
 նի կենդանի է ազատութեան տենչը հայ ժողովրդի  
 մէջ: Հայոց Սպարապետ Նազարբէզեանը այդպէս պատ-  
 մական դէմք է, Հայաստանի անկախութեան խորհրդ-  
 դանիչ և ազատատենչ սերունդերի ներշնչման կենդանի  
 աղբիւր:

Ս. ՎՐԱՑԵԱՆ

### ՄԱՐԳՍԻՉՍԸ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԸ

Ազգութեան էութիւնն ու նրա զիտական սահմանումը, նրա լուծումը մեր օրերում եւս մնում է որպէս գործնական քաղաքականութեան և տեսական յորպրտումների գլխաւոր խնդիր: Յետպատերազմեան քաղաքական միտքը միայն նոր ձևաւորում տւեց նրան, սակայն, դեռ շատ հետու է այն օրը, երբ նա գիտականօրէն և միջպղպայի քաղաքականութեան տեղակէտից բաւարար լուծում ստացած կը լինի:

Նախորդ դարում ազգային հարցը, իբրև ուսումնասիրութեան խնդիր և որպէս քաղաքականութեան հարց, գտնուում էր մարքսիզմի խորունկ ազդեցութեան տակ: Պատմազիտական այս սեսութիւնը, որի փիլիսոփայական և հասարակազիտական հիմունքները մըշակուած էին 30-60ական թւականներին, իբրև ամենից տարածուած ուսմունքը՝ ոչ միայն հասարակազիտական տեսութիւն էր, այլև իրենով պայմանաւորում էր ժողովրդական լայն գանգաձանների վարքագիծը, ամենօրեայ քաղաքականութիւնը: Արդի մտածողութիւնը, պատերազմի և յեղափոխութեան շխմարիչ ազդեցութեան տակ, զերթէ հրատարակեց մարքսիտական պատմահայեցողութիւնից: Եւ այժմ վերաքննութեան նիւթ է ոչ միայն Մարքսի ազգութեան մասին արտայայտած տեսակէտները, այլև մարքսիզմն ընդհանրապէս, որպէս պատմափիլիսոփայական և հասարակազիտական դրութիւն: Միջպղպային ընկերավարական միտքը, որ չուրջ կէս դար զբէթէ նոյնանում էր մարքսիզմի հետ, այժմ որոնում է այլ ուղիներ իր տեսական-գաղափարական հիմնաւորումների և գործնական քաղաքականութեան համար, այլ ուղիներ, քան այն, որ ցոյց է տալիս Մարքս-էնգելսեան վարդապետութիւնը: Եթէ մարքսիզմի հիմունքները նախորդ դարի ձձական թրականին մշակուում էին Հեգելեան փիլիսոփայական դպրոցի և Անգլիայի քաղաքատեստեսական առևտրա-արդիւնաբերական անմիջական կենտրի ազդեցութեան տակ, ժամանակակից ընկերավարական միտքը՝ ազատագրելով մարքսիզմի մենտալ-րութիւնից՝ սերտօրէն յարակցուում է մեր օրերի փիլիսոփայական-բարոյազիտական դրութիւնների և ժամանակակից դամիկավարութեան հետ: Իոկ այսօրայ իմաստասիրութիւնը շատ զիչ առնչութիւն ունի Մարքսի նիւթապաշտ և Հեգելի բանապաշտ վարդապետութիւնների հետ: Ապացոյց թէ ընկերավարական միտքը ինչքան հետացած է մարքսիզմի ակունքներից՝ ահա Հենրիխ դը Մանի «Ընկերավարութեան Ոգին» գիրքը, որ ժխտելով մարքսիզմը՝ բացատրական վերաբերում չունի զեպի ընկերավարութիւնը, այլ փորձում է լայնօրէն հիմնաւորել նրան ժամանակակից փիլիսոփայութեան և հասարակազիտութեան աւետարների վրա: Որով մարքսիզմը դառնում է ընկերավարական մտքի գար-

աջման մի փուլը: Որպէս այլպիսին՝ նա պայմանաւորած էր իր ժամանակի քաղաքատեստեսական և իմաստասիրական դրութիւններով, և մեզ համար դառնում է լոկ պատմական երևոյթ՝ պայմանաւորած որոշ ժամանակի և տարածութեան սահմաններով:

Սակայն, այդպէս չէ մարքսիզմը համայնավար կուսակցութեան համար: Եթէ արևմտեան Եւրոպայում դասական մարքսիզմը դարձնէ քստմոքեան նիւթ, Եւրոպայի հասարակական քաղաքական մտքի անցած փուլը, այդպէս չէ բնաւ արևելեան Եւրոպայի ծաւալուն ստեպներում, ուր մարքսիզմը պետական ուժի մի հզօր բազուկով՝ յայտարարուած է միակ և ճշմարիտ հասարակազիտական դրութիւնը: Նա ներազդործել է, որպէս պաշտօնական ուսմունք խորհրդային հանրակարգի: Այլ ուսմունք — հասարակազիտական և փիլիսոփայական — զոյութիւն չունի այդ աշխարհում: Եւրոպայի սրբազորումները, որ անում է այժմ արևմտեան մարքսիզմն ու ոչ-մարքսիտական ընկերավարութիւնը Մարքս-էնգելսեան վարդապետութեան նկատմամբ, նրան թուում են դաւանանութիւն «պրոլետարիատի դատի հանդէպ»: Իրենց այդ քայլով այլամիտները վաճառքի են հանում իրենց «միտքն ու խիղճը ընկերավարութեան թշնամիներին»: 70-90 տարի առաջ Մարքսն ստել է ու կրահել ամէն բան. ու եթէ արդի գիտութիւնը, իմաստասիրական որոնումները առում են նոյնը, ինչ որ Մարքսն ու էնգելսը, նշանակում է աւելորդ են, իսկ եթէ հակառակն են պնդում, ապա վնասակար են: Մարքսիային որոնող, կառուցանող ու քանդող միտքը, խուզարկու ու անհանդիստ հոգիին նրա ստեղծագործող թռիչքը և յլացումի պատուծիւնը երբեք այնպէս զերուած ու կաշկանկած չեն եղել, որքան մեր օրերի «քաղաքակիրթ» Եւրոպայի արևելքում, այդ մայր ցամաքի 35% զրա:

Մարքսիզմի հետ կապուած բազմաթիւ խնդիրներից, որոնք այժմ իրենց իսկ մարքսիտների բանակում վերաքննութեան նիւթ են դառնում, ազգային հարցը ամենէն կարևորն է: Նա ընկերավարական մտքի գլխաւոր առնցքն է՝ դամիկավարութեան խնդրի հետ միասին: Եւ զարմանալի չէ, որ այդ երկուսը միշտ միասին են երևան դալիս. ազգային հարցը առանց դամիկավարութեան տեսութեան, իսկ վերջինս առանց մարքսիայնութեան ուսմունքի լուծել հնարաւոր չէ: Սակայն, համայնավարութիւնը, որպէս հասարակական ու քաղաքական միտք, կառուած մնալով դասական մարքսիզմի վարդապետութեան՝ մի քայլ առաջ չի գնացել ազգային հարցին աւելի իրական և գիտական հիմնաւորում տալու տեսակէտից: Աւ եթէ հազարապիտ դէպքերում նա արել է խոշիմաստ յայտարարութիւններ, որդեգրել է ազգութեանց ինքնորոյման սկզբունքը, այդ յայտա-



լարութիւնները երբեք չեն պարտադրեցրել նրան համապատասխան քաղաքականութիւն վարելու և անյարբիր են իրենց ուսուցչի պատմագիտական ուսմունքին: Համայնավարների բնասպետութեան տակ ազգութիւնների հարցը նոյնքան հրատապ է ու չլուծւած, որքան միապետական կայսրութեան դժգոհ իշխանութեան տակ:

Ահա թէ ինչու՝ խօսել մարքսիզմի ազգային խնդրի նկատմամբ մշակած տեսութեան մասին, չի նշանակում լուր մտքի պլյուսում կատարել, այլ, Նինչհակառակը, նրտակում է խօսել մի վերին աստիճանի դործնական արժէք ունեցող և հասարակութեան ամենալայն խաւերի մտքը յուզող խնդրի մասին: Այդ իսկ պատճառով, թող ներքի մի մի քանի դիտողութիւններ անել ազգային հարցի և նրա մարքսիստական ըմբռնման մասին:

\* \* \*

Կ. Մարքսն ու Ֆ. Էնգելսը իրենց հասարակական աշխատանքի և դրական վատասկները մէջ ազգային հարցի հանդէպ երբեք սկզբունքային վերաբերում չեն ունեցած: Իրենց սահմանած ընկերվարութեան զաղտփարկ շեռ ազգութիւնը կապւած է ինչ որպէս անկախ սերտ կապերով, այլ եղել է մի հարց, որը կարող էր այս կամ այն չափով նպաստել ընկերվարական հանրակարգի շուտափոյթ իրականացման, կամ խանգարել ու յետաձգել նրա անխուսափելի ընթացքը: Նրանց համար ազգային հարցը աւելի շուտ գործելակերպի, գործնական քաղաքականութեան առարկայ էր, քան սկզբունքի հարց՝ բնած իրենց ընկերայինփիլիսոփայական դաւանանքից: Ուստի և գործանալի էլ, որ նրանք միևնոյն ժամանակ տարբեր ազգերի մասին և տարբեր ժամանակ միևնոյն ազգի մասին արել են հակասական յայտարարութիւններ: Միայն 19րդ դարի 70ական թւականներից յետոյ տեղի ունեցող ազգային շարժումները Աւստրո-հունգարական, ռուսական կայսրութեանց և օսմանեան պետութեան սահմաններում ստիպեցին մարքսիստներին լրջօրէն դրողւել ազգային հարցով և մշակել որոշ վերաբերմունք: Այս հարցի նըկատմամբ մարքսիզմի գաղափարախօսութեան վերաքննութիւնը սկսուեւ է Աւստրո-հունգարիայում, ուր Բրլինի խորհրդաժողովը ընկերվարական մտածողութեան մէջ կազմուեւ է մի դարձակէտ ազգային հարցի վերաբերմամբ: Նոյն ատարիական ընկերվար-մարքսիստական դրակիտութիւնն է, որ լոյս հանեց երկու խոշոր աշխատանք՝ Բաուէրի և Շարիխգէր-Սինոպտիկուսի դրչին պատկանող հատորները: Չնայած այն գործնական թելադրանքներին, որ անում էր յատկապէս Սինոպտիկուսը լուծելու համար ազգային հարցը աւտարիական կայսրութեան մէջ, երկու մտածողների երակէտը մնում էր նորէն մարքսիզմը և նրա պատմագիտական ուսմունքը: Այնուհետև Կ. Կաուցկին՝ դասական մարքսիզմի լուադոյն տեսարանը՝ փորձել է հիմնաւորել ազգային հարցը Մարքսի ուսմունքով, սակայն, նա էլ աստիճանաբար հերձուած է մարքսիզմից, և, ի վերջոյ, ստիպուեւ է լինում ընչուեւել ազգութեան ուրոյն ազգակ լինելը պատմահասարակական կեանքում: Սա նշանակուեւ է անտեսական, արտագրական

ուժերի կողքին դնել մի հոգեւոր ընոյթ կողոյ ոյթ, որ բնաւ վերլուծելի չէ նիւթական տեսչներով: Ազգային հարցը յատուկ քննութեան նիւթ է դառնում նաև ռուսական ընկերվարական կուսակցութիւնների մօտ, որոնցից սոցիալ-դեմոկրատականը ունեցել է ժխտական վերաբերմունք դէպի այդ հարցի սկզբունքային լուծումը:

Կարելի է ասել՝ չկայ թէ թէ շատ ակահաւոր ընկերվարական դէմք, որ իր մտքի ոյթը և գրչի թափը փորձած չլինի ազգային հարցի բնագաւառում: Սակայն, հին ու նոր մարքսիստների մէջ կան ընդհանուր շիման կէտեր և այդ այն է, որ նրանց բոլորի համար երակէտ է ծառայում Մարքսի հասարակագիտական ուսմունքը: Մարքսիզմը նրանց համար միակ ճշմարիտ և աւարկայօրէն մշակած պատմագիտական տեսութիւնն է, որը միայն ի վիճակի է հանրային կեանքի բոլոր բարդ և բազմազան խնդիրները լուսարանելու ճշմարտապատում ձևով: Ըստ այսմ՝ պատմութեան միակ դոյակը (սուբստանս) անտեսական սահմաններում՝ պէտք է որոնել արտագրական միջոցների և նըրանց փոփոխութեան ու նրանցից բխած հասարակական ուժերի փոխյարաբերութեան մէջ: Ուստի և հասարակական բարդ մարմնի մէջ, ազգութիւնը, որպէս ուրոյն պատմական գործօն, դէր լուծի. նա զոյակ» էլ, այլ այդ ճիւղի յատկանիչը. ազգութիւնն ինքը տարբարուծելիք խնդիր է. նա բացատրելի է միայն տեսալ դարաշրջանի դասակարգային ուժերի փոխյարաբերութեամբ: Շատ բնական է, որ այս հայեցակէտը հիմնովին պիտի ժխտել և նրա տեսակէտները, որոնք պատմական կեանքի միակ իրական, մնայուն ու կայուն դոյակ համարում էին ազգութիւնը: Այդ հարւածը ամենից առաջ տրւում էր Հեգելին, ըստ որի բացարձակ ոգին ազգայնօրէն կազմակերպուած պետութեան մէջ է, որ առարկայանում է իր ըզլանդակ ծաւալով — ազգը դառնում է ոգու կրողը, ազգութիւնը՝ պատմութեան ուսումնասիրութեան առարկայ: Ազգութեան սկզբունքը դասակարգայինի վերածելով՝ մարքսիզմը դրանով էլ շրտակահայտու: Եթէ ազգութիւնը դասակարգային յարաբերութեան և նրա գաղափարախօսութեան մի ուրոյն արտայայտութիւնն է, ապա մարքսիզմը նրան կապեց բուրժուազիայի հետ: Ըստ այսմ ազգութիւնն ու ազգային հարցը առաջացել են պատմական կեանքի աւելի նոր շրջանում: Եւրոպայի պատմութեան մէջ 15-16րդ դարերում տեղի է ունեցում մեծ յեղաշրջում, սաղմնաւորում է դրամատրական տնտեսութիւնը, ծնւում է մի նոր դասակարգ՝ բուրժուականը: Այնուհետև նորագոյն պատմութեան երեք գործօնները՝ ազգութիւնը, պետութիւնը և տնտեսութիւնը՝ ընթացած զուգահեռ ու միասին՝ ստեղծելով ժամանակակից մեծ ազգային պետութիւնները և դրամատրական բարդ ու հասունացած տնտեսութիւնը: Ուրեմն, ըստ այս տեսակէտի, կայ ժամանակի նոյնութիւն և մի ներքին պատճառակցութիւն նորագոյն առւտրա-արդիւնաբերական ձևերի և ազգութեան ծագման մէջ: Դրամատրութիւնը կենտրոնացնող ոյթ ունի — միջնադարեան քաղքեհիւութիւնը ձևապարծ է աստիճանաբար, որպէս բուրժուազիա — լայն հոգային սահմաններում, գարկ է տալիս և կազմակերպում է մեծ պետութիւնը, երկնում է մի

զօդող, «ժխտորիչ» դազափար՝ ազդութեան դազափար, որը դառնում է նոր պետութիւնների կառուցման մղիչ ոյժը: Աղբյուրներն, ուրեմն, նոր ժամանակների և նրա պայմանների ծնունդն է:

Յաճախ, ոչ մարքսիստական բանակից անդամ պընդում են՝ որ նոր դարերում ազդութեանց զարթոնքն է տեղի ունենում, նորագոյն շրջանում նա կազմապարուս է որպէս պայծառ դազափար, 19րդ դարում աստիճանաբար իրականանում է ձևաւորելով որպէս ազգային քաղաքական միութիւններ՝ պետութիւններ: Նման մըտածողները, կարծէք, անուղղակի կերպով ուզում են ապացուցանել մարքսիզմի հիմնական սկզբունքը: Այդ տեսակետն պաշտպանները, լիք է անդամ Համաձայն չեն տեսակտան-արտադրական ուժերով մեկնաբանելու արդի ազգութիւնը, գտնում են, որ նա, իբրև պատմական գործոն, նորագոյն դարերումն է Հանդէս գալիս, և կապում է նոր դարերի մեծագոյն յեղափոխութիւններից մէկի՝ բարենորոգչութեան (րեֆորմացիոնի) հետ: Վերջինիս յայտարարած կերպունքը, եկեղեցու և անհատի ինքնալարութիւնը, հետեղականօրէն պիտի յանգէր ազգութեանց ինքնալարութեան սկզբունքին, որ, իբր թէ, հետեղի է նոյնիսկ բարենորոգումների շրջանում: Թէ բարենորոգչութեանը նոր դարերի մեծագոյն յեղափոխութիւններից մէկն է, թէ նա շատ խոշոր չափով ազդել է Եւրոպական ժողովուրդների ազգային ղիտակցութեան խորացման վրա՝ այդ, ի հարկէ, կասկածից վեր է: Սակայն, այդ ազգային գիտակցութիւնը՝ պարուրած կրօնական շղարշով և կրօնով գունատուած՝ չի տանում իրական հիմնաւորում, ինչ որ միայն նախորդ դարի գործն է: անդամ նրան էլ պակասում է բարոյական հիմնաւորումը, և, ընդհանրապէս, ժամանակի մտածողների մօտ ազգութիւնը, որպէս ուրոյն հարց՝ անկախ կրօնականից, ազգայնացած կեղեցուց և պետութեանից՝ Հանդէս չի գալիս: Բարենորոգչութիւնը նպատակ է ազգութեան գաղափարին անուղղակի ձևով՝ հիմնաւորելով պետութեան անկախ Հաստատութիւն լինելը, որի հետևանքն են ազգային պետութիւնների Հանդէս գալը, ազգային կեղեցուն չէնքի կառուցումը, աշխարհիկ-ազգային լեզու է գրականութեան ստեղծումը: Բարենորոգչութեան ամենէն աչքատու փաստը այն է, որ նա շարժման մէջ գրեց ժողովուրդական հոծ գանգաններին: Եւ այս գանգանները ընթացակցելով ազգային կեղեցու, պետութեան, լեզու և գրականութեան՝ աստիճանաբար կերտեցին աշխարհիկ, դասկալար-ժողովուրդական ազգութիւնը:

Սակայն, այս էլ դեռ բուարար հիմք չէ ազգութիւնը նոր դարերի գործ հոշակիւր համար: Այսպէս մտածել նշանակում է բովանդակ պատմութիւնը բաժանել երկու հակադիր մասերի: Նորը և նորագոյնը՝ վեր է ածուում ազգերի պատմութեան, Հինը և միջնադարը, ինչ անուն կուպէք ասէք՝ լինի ցեղերի, թագաւորական տների, կայսրութեանց, քաղաք-պետութիւնների՝ պատմութիւն, ազգութիւնների պատմութիւն չի լինի: Ըստ այսմ, ազգութիւնների ընդգրկում է պատմական կեանքի մի շատ կարճ ժամանակամիջոցը, սկսած 15-17րդ դարից: Այս տեսակէտը, որ յատուկ է ամենէն շատ մարքսիզմին, կամայ թէ ակամայ, պիտի

ժխտի պատմական կեանքի յաջորդականութիւնը, որն այնքան խիտ չէլուած ձևով երևան է զարխ պատմամշակութային ստեղծագործութեան բոլոր ձևերի մէջ: Իսկ Հասարակական Ժառանգականութեան-պատմական յաջորդականութեան սկզբունքի ժխտումը մեծագոյն բացն ու պակասութիւնն է ամէն պատմագիտական տեսութեան, որը և կարող է կասկած պատճացնել, թէ արդեօք այդ արւած է փաստօրէն, պատմութեան կողմի՛ր զեպքերի հետադարձութեան վրա, նրանց խորագնին ուսումնասիրութեան հետևանքով է, թէ՞ որ է վերացական, կանխորոշւած միտք է դիկավարել պատմագէտին:

Ընդունելով Հանդերձ մարքսիզմի մէջ պարունակւած որոշ ճշմարտութիւնները, մենք միանգամայն ժխտում ենք նրան, որպէս պատմագիտական ուրոյն տեսութիւն և փիլիսոփայական դրութիւն: Նիւթապաշտութիւնը, և մարքսիստական նիւթապաշտութիւնը ժամանաւորապէս անկարող է յարակցել ժամանակակից իմաստասիրական դրութիւններին և պատմագիտական տեսութեանց հետ: Եւս առաւել նա անկարող է մեկնաբանել ազգութեան բարդ խնդիրը: Մարքսիզմի՝ ազգային տեսակէտները յանգում են այնպիսի եզրակացութիւնների, որոնց հանդէպ յաճախ կանգ են ածուում անգամ մարքսիստներն իրենք: Եթէ ազգութիւնը պատմական կեանքի որոշ վայրկեանում է ծագել, ապա, ուրեմն, պատմական կեանքի որոշ վայրկեանում է՛լ պիտի գտնի իր վախճանը: Այս ըմբռնումով՝ ազգութեան խնդիրը մարքսիզմի համար պատմական երևույթ է: Այս սխալից հետո չմնացին նաև ոչ մարքսիստները, որոնք նոր դարը միայն յայտարարեցին ազգութեան գարգացման շրջան: Թէ մարքսիստական այդ տեսակէտը որքան արժատացած էր լայն մտաւորական խաւերի մէջ, երևում է այն բանից, որ անգամ ռուս սոցիալիստ-յեղափոխականներից ոմանք երբեմն յարել էին այդ տեսակէտին: 1907 թիւն Իրուստտանի Արզալան ընկերվարական կուսակցութեան Համագումարում հսէրներից շատերը պնդում էին, թէ «ազգութիւնը Հասարակական կեանքի միայն անցողական ձևն է»: «ազգային մշակոյթը իր ամբողջութեամբ ընկերվարութեան Համար անարժէք փաստ է, մենք չենք կարող պայքար մղել ազգային մշակոյթի ճոխացման և ամբացման համար»: «Պայքարելով ազգային իղէպիլի համար՝ դուք կը Հասնէք ոչ թէ զասակարգային Հակամարտութեան սուր բնոյթ տարւն, այլ նրանց հարթութուն, աշխատարկ ժողովուրդի դասակարգային գիտակցութեան մթաղնման»: Եւ այսպէս արտայայտուած էին ներկայացուցիչները մի կուսակցութեան, որ Հետագայում այնպէս լայնօրէն պիտի գարգացնէր ընկերվարական ազգայնութեան ստեղծագործիչ գաղափարը:

Ըստ այս կերակցութեան և ըստ մարքսիստների՝ ազգութիւնը երկէ է, կայ և, գուցէ, երկար ժամանակ էլ լինելու է որպէս փաստ, որպէս գոյութիւն, բայց որպէս պատմական երևույթ պիտի ունենայ իր վախճանը, որից յետոյ կը ստեղծուի մշակոյթի արտայայտութեան մի այնպիսի եղանակ, որ ազգային չի լինի, այլ, եթէ կուզէք՝ գեր-ազգային կամ ապագային, կամ, ինչպէս ասուում է, միջազգային: Սա նշանակուած է, որ ազգային ձևը անհրաժեշտութիւն չէ մշակոյթի առար-

կայացման և դրսևորման համար: Ազգային տեսալ-  
ձևը հետևանք է նոր պատմութեան մէջ տեղի ունեցող  
որոշ քաղաքա-տնտեսական յեղաշրջման, եթէ այդ  
հիմքը վերանայ, արտայայտութեան ձևն էլ կը փոխ-  
ւի: Հետաքրքրականը այն է, որ ոչ-մարքեդիստներն էլ  
միջազգայնութեան շտապօրիններ են, յաճախ, սակայն,  
տաանց յատարեղէն պարզաբանում միջազգայնութեան  
գաղափարը, իսկ մարքեդիստները այդ երկու սկզբունքը  
գրեթէ միշտ հակադրել են իրար. միջազգայնութիւնը,  
նրանց կարծիքով, ժխտումն է ազգութեան, նա աւելի  
բարձր սկզբունք է և անյարբի ազգութեան հետ:

Ըստ այսմ, ազգութեան և բուրժուակային մէջ կայ  
ոչ միայն ծագման, այլ և վախճանի ժամանակացու-  
թիւն, որը վեր է անուամ ներքին սերտ պատճառակցու-  
թեան: Եթէ նրա ծագումը կապւած է դրամատիրական  
անտեսութեան և բուրժուակայի հետ, ապա վերջինիս  
հասարակական վախճանը պիտի աւետի նաև ազգու-  
թեան վախճանը: Ուրեմն, ազգութիւնը իբրև պատմա-  
կան երևոյթ, սերտօրէն կապակցւում է ու բախտակից  
է նոյնպիսի պատմական երևոյթի՝ բուրժուակայի  
հետ: Բուրժուակայի մասը, որպէս որոշյալ դասակարգ-  
ի, միաժամանակ յաղթանակն է նոր դասակարգի՝  
բանւորութեան, որը կերտում է նոր՝ ընկերակարգի  
հանրակարգ: Ուստի և սրանից հետևում է, որ մարքե-  
դիստները մտնելու է նոր՝ ընկերակարգի հանրակար-  
գը առանց ազգային դունաւորումների ու երանգաւոր-  
ումների: Ընկերակարգութեան դառնում է ուսումնաբ. մի-  
հանրակարգի, ուր ազգութիւնը տեղ չունի. ընկեր-  
վարութիւնը ազգութեան ժխտումն է: Այս տրամաբա-  
նական եղբակցութիւնը անհրաժեշտաբար բխում է  
մարքեդիստի նախադրելից:

Սակայն, այս տեսակէտը մշակել է ոչ թէ պատ-  
մական կեանքի խորագնին ուսումնասիրութեան հե-  
տևանքով, այլ արդիւնք է քաղաքական նպատակների  
հետապնդման: Պատմականորէն ճիշտ է, որ նոր դարե-  
րում ազգային զարթոնքը և ազգութիւնների պայքարը  
սերտօրէն զուգակցւում է բուրժուակայի զորանալու և  
կատարած նաճումներին հետ: Մարքսն ու մարքեդիստ-  
ները պատմական այս զուգադիպութիւնը համարեցին  
ներքին տրամաբանական կապ: Եւ հէնց այստեղ է  
նրանց սխալը: Նոր դարերի քաղաքա-տնտեսական զար-  
գացումը վերին աստիճանի խորացնում և ընդարձա-  
կում է ազգութեան կեանքով սպողը և միևնոյն մշա-  
կոյթի պատկանող մտքական թիւը: Ազգութիւնը, որ  
միջնադարում շատ սեղմ շրջանակի բաժին էր ընկած,  
ընդգրկում է նոր խաւեր, որոնք մինչ այդ թմրած  
դրութեան մէջ էին: Միջնադարեան ազգութիւնը իր  
մէջ պարփակում է աւատատէր դասը, հողերակախու-  
թիւնը, որ ժամանակի մտաւորականութիւնն էր, քաղ-  
քեցիներ, որ ունէր մտքի և տնտեսութեան շատ նեղ շր-  
ջանակ: Մրանք իրարից անջատւած էին իրաւական-  
սովորոյթի պատնէշներով, հաւաքական աշխատանքի  
գործակցութեան սահմանափակ շրջան, շահերի  
շատ քիչ զուգակցութիւն: Միջնադարի երկրորդ կեսից  
ծնւում է ժամանակակից բուրժուակայի նախատիպը,  
որ աստիճան առ աստիճան տեղ է բռնում հասարակա-  
կան կեանքի ապարհզում, դրսևում է նոր դերքեր,  
գործակցում նոր ծնւող միապետութեան հետ և դառ-

նում է տնտեսական ու քաղաքական ոյթ: Ամենից  
չուտ, որպէս ներթափանցաւ ապահով և մտաւորապէս  
լուսաւոր դաս, նա է, որ հասնում է ազգային դիտակ-  
ցութեան: Սակայն, նրա ազգային ըմբռնումը գերա-  
դասցօրէն տնտեսական էր, ինչպէս միապետութեանը՝  
քաղաքական: Այս երկուսը՝ տնտեսական ու քաղաքա-  
կան ազգութիւնը՝ դունաւորում են 15-17-րդ դարերի  
պատմութիւնը: Միապետութիւնը հաւաքելով մէկ պե-  
տականութեան սահմաններում՝ մէկ լեզուով խօսող  
բարժութիւնները՝ անշուշտ, չի հետապնդում ազգային  
նպատակ, բայց այդ հաւաքումը ստեղծում է նպատ-  
ատար պայմաններ մէկ ազգութիւն ստեղծելու համար:  
Արդէ պետութիւնը վերացնում է միջնադարեան շատ  
հաստատութիւններ՝ քաղաքական, վարչական, օրէնս-  
դրական, բուրժուակայի վրա կրթնած հետամուտ է  
լինում մէկ տնտեսական քաղաքականութեան, ջնջում  
մարտային ներքին պատնէշները, բովանդակ էրկրից  
ստեղծում է մէկ տնտեսական միութիւն: Այս քաղա-  
քականութիւնը մօտիկ բարբառներով խօսող տարրերին  
միացնում է, ձուլում. յաճախակի չլինում՝ վաճառա-  
կանութեան, արտադրութեան, բանակի, դրականու-  
թեան միջոցով ստեղծում է գաղութարկանութիւն,  
շահակցութիւն. միտքի պայքար օտարի դէմ՝ առաջ  
է բերում փոխադարձ ճանաչութիւն, բախտակցու-  
թիւն: Այս բոլորի հետևանքով ստեղծւում է հողեր  
մօտիկութիւն, հողեկցութիւն, դիտակցութիւն մէկ  
հաւաքական-ազգային մարմնի պատկանելութեան: Այս  
հողեկցութիւնը, մշակութային ընդհանրութեան դի-  
տակցութիւնը ծաւալում է յատկապէս 19-րդ դարում,  
չնորհիւ հաղորդակցութեան միջոցների կատարելա-  
գործութեան: Յատկապէս քաղաքը՝ որպէս տնտեսա-  
կան և քաղաքական կենտրոն և հողեր մշակոյթի կեն-  
տրոն, հսկայական դեր է կատարում մշակոյթի ընդ-  
հանրացման և ժողովրդականացման գործում: Ազգու-  
թիւնը ընդգրկում է աշխատաւոր խաւը. ուսմիկը ստա-  
նում է արժէք, բերում է իր հետ նոր զոյններ, նոր  
երանգներ, հանդիսանում է անսպառ աղբիւր ստեղ-  
ծագործութեան: Ազգութիւնը ուսմիկաբարանում է  
միաժամանակ ստանալով շեշտած մշակութային բը-  
նոյթ: Եթէ առաջւայ ազգութիւնը քաղաքական երանդ  
ունի, բուրժուակայնը՝ տնտեսական, արդի ուսմիկաբար-  
ական ազգութիւնը՝ մշակութային է. տնտեսութիւնը  
և քաղաքական անթիքը իրենցով լուսարձակ բաղադրիչ  
մասերը՝ ծառայում են որպէս մշակութային միջոցն ու  
հիմքը՝ հողեմտաւոր մշակոյթի յղացումների և կեր-  
տման համար:

Ազգութեան գաղափարի և նրա կերպարանաւորման  
վերոյիշեալ ձևը մշակել և կատարել է մեծ չափով  
բուրժուակայի ստեղծագործ ուղեբով և դրամատի-  
րութեան խորունկ ազդեցութեան տակ: Անկարելի է  
ուրանայ այն դերը, որ նա խաղացել է ազգութիւնների  
հաւաքման, այդ գաղափարի ժողովրդականացման  
սովորոյթի պատնէշներով, հաւաքական աշխատանքի  
գործում: Որքան որ մարքեդիստ նկատարում է բուր-  
ժուակայի ունեցած դերը ազգութեան կազմակերպման  
գործի մէջ, նա արտայայտում է որոշ ճշմարտութիւն,  
բայց երբ փորձում է հասաստութեան նշան դնել ազ-  
գութեան, բուրժուակայի և դրամատիրութեան միջև,

սխալում է շարաշար: Փոխանակ ասելու, որ նոր տնտեսական ձևերի ստեղծումով և նոր բուրժուական դասակարգի ծագումով ազգութեան գաղափարը զար- ձաւ աւելի յստակ, ստացաւ աշխարհիկ բնաւորութիւն, ճորտացաւ և անհատականացաւ, արտայայտեց այնպէս գունաւեղ ձևով, որ նախորդ դարերին բնաւ ծանօթ չէր, մարքեղովք և նրա հետ շատ ոչ-մարքեղատներ ազգութիւնը համարեցին մի նոր, գեւ զոյրութիւն շու- նեցող երևոյթ, որ նոր էր ծնունդ առնում: Նախորդ և նոր դարաշրջանները բնութագրելիս նրանք որակի տարբերութիւն տեսան և ոչ քանակի: Բուրժուազիան իր էութեամբ դարձաւ ազգային, ազգութիւնը իր էութեամբ՝ բուրժուական:

\* \* \*

Այսպիսի սխալների մէջ չենք ընկնի, եթէ մենք կանդ տուննք այն տեսակետի վրա, ըստ որի ազգու- թիւնը մշակոյթի զարգացման միակ և անհրաժեշտ ձևն է, որ ազգութիւնը մշակութային միութիւնն է, ընդհանրութիւն: Սրա եզրակացութիւնը պիտի լինի այն, որ ուր կայ մշակոյթ, այնտեղ կայ և ազգութիւն. մարդկանց որոշ հասաքականութիւն, որ ունի արտա- յայտութեան ընդհանուր ձև: Ուրեմն, մենք մեր ուշա- դրութիւնը դարձնում ենք մշակոյթի առարկայացման ձևի վրա, որը միշտ ազգային է, իւրայատուկ համա- դրութիւնների արդիւնք, իսկ մարքեղովք ելակէտ ունի մշակոյթի բովանդակութիւնը, որը որոշ շփումը ընդ- հանուր է, միջազգային: Տեսալ մշակոյթի ազգային ձևը պայմանաւորած է որոշ ժամանակի և տարածու- թեան, նաև նախնիքներից ժառանգած հոգեմտաւոր, հասարակական ու քաղաքական ձևերի իւրայատուկ, եզրակի ու չիրկնող համարութիւններով: Ազգութիւնն այն ձևն է, որի մէջ մշակութային արժէքներն առար- կայանում են. ազգային ձևից դուրս մեզ ծանօթ չէ մշակոյթի արտայայտութիւն: Նա, այդ ձևը, բնաւ կապւած չէ մշակոյթի բովանդակութեան յարափոփոխ- րնթացքի հետ, ընդհանրապէս, իրենով պայմանաւոր- ւում և ձևաւորում է այն: Նա նոյնիսկ կապւած չէ այս կամ այն ազգու ազգութեան հետ: Ազգութիւննե- րը կարող են ծնւել և մեռնել. կարող են համաշխար- հային մշակոյթի մէջ ձգել իրենց լուծան, ապա այս կամ այն փուլումի հետևանքով լրիւնով դէպի անկում, «որպէս անպիտանացալ որբիք ժամանակի», սակայն, ազգութեան սկզբունքը մնայուն է: Սրա մէջ է խնդիրը: Մարքեղովքի սխալը հենց նրանումն է, որ ազգութեան գաղափարը, որպէս մշակոյթի առարկայացման ձև, նոյնացրեց աւետալ, եզրակի, շջափնիլ ազգերի դոյու- թեան հետ, որով, ի հարկէ, պիտի հասնէր սխալ եղ- րակացութիւնների:

Ասացինք, որ մշակոյթի բովանդակութիւնը պիտի արտայայտի որոշ ձևերի մէջ. այդ ձևը անհրաժեշտ մասն է մշակոյթի, որովհետև շկայ որեէ մարմին, որեէ բովանդակութիւն, որ արտայայտութիւն գտնէ և ձև չունենայ: Արտայայտել, մարմնաւորել՝ նշա- նակում է ձևաւորել: Ասացինք նաև, որ մշակոյթի առարկայացման ձևը ազգութիւնն է, իսկ ազգութիւնը պատմական զարգացման արդիւնք է, հետևապէս՝ ազ- գութեան խնդիրը պատմապիտանութեանն է վերաբերում:

այդ դիտութիւնն է, որ կարող է լրիւ և ճշմարտապա- տում պատասխան տալ նրա հետ կապւած բոլոր խնդ- րներին: Եթէ մշակոյթի զարգացման ձևը ազգու- թիւնն է, նշանակում է նա է, որ կարող է լինել պատ- մութեան ուսումնասիրութեան առարկայ: Մինչ ա- ժըմեան մշակութային արժէքները առարկայացել են ազգութիւնների միջոցով, ուրիմն պատմութիւնը մի- նչև այժմ գործ է ունեցել ազգերի հետ, որոնք ծնւել են, ստեղծագործել ապա կամ անցել պատմութեան դիրքը՝ ժառանգութիւն թողնելով հետնորդներին իրենց երկնած մշակութային արժէքները, կամ - ազգում են այժմս էլ ու ստեղծագործութեան աղբիւր հանդիսա- նում: Այս առումով պատմութիւնը մշակոյթի բացմա- պիսի ճիւղերի, տարբեր զարգացման մի շընգմիջոց շղթայակցութիւն է, որ հանդէս է դալիս ազգային ձևի մէջ: Ծիչտ է, մարդկային զարգացման նախնական շըրջաններում մենք ազգութիւն չգիտեսնք, սակայն, դրա հետ միասին, մարդկային համակցութեան այդ շըր- ջանում մշակոյթի տարբերն էլ այնքան հասարակ էին, այնքան անդոյն, որ դժւար էր նրանց գունաւորող, անհատականացնող, բնորոշիչ տարբերք գտնել ու մատ- նանշել: Անդէմ, անորոշ գանդաւորներ բարձր քաղա- քակրթութիւն չեն ստեղծում: Պատմական կեանքի զարգացումով՝ զարգանում է, բարդանում և բազմե- րանգ դոյն է ստանում նաև մշակոյթը: Առաջ է դալիս արևեստը, մարդն սկսում է փիլիսոփայել, ստեղծում է դիցաբանութիւնը, որ միտածանակ նախնական մարդու է՝ փիլիսոփայութիւնն է և՛ կրօնը և՛ բանա- ստեղծութիւնը: Հիմնաւորում են քաղաքական աւելի բարդ ձևեր, մարդկանց համակեցութեան իմբակները մեծանում են, շփումը՝ խաղաղ և ուզգմական՝ դառ- նում է յաճախակի և յարեստ. մարդիկ ցրւում են տարբեր բնաշխարհներում, խառնւում են այլ ցեղերի հետ, տնտեսական կեանքը շեքտաւորւում է - ստեղ- ծւում է մշակոյթի և նրա ձևերի տարբերութիւնը, որ աստիճան առ աստիճան աւելի խորանում է, շեշտւում է, ի վերջոյ, հասնում է ազգային ձևերի տարբերու- թեան: Եւ մարդկութեան ամբողջ պատմութիւնը եթէ մշակոյթի զարգացումն է, ճորտացումն, ապա միտա- մանակ է՝ և ազգայնացում - նա երևան է դալիս ազ- գային ձևի մէջ, շեքտաւորման է ենթարկւում ըստ ազգութեան, ստանում է ուրոյն գունաւորում, տեղա- յին, ազգային բնոյթ, ստեղծւում են տարբեր իւրա- յատուկ համարութիւններ, ազգային մտածելակերպ, պահածք, նկարագիր, գրականութիւն, արեստ, երգ, եղանակ, լեզու, խօսւածք, կենցաղ: Այս ձևով մշա- կոյթը որքան զարգանում, բարդանում է, նոյնքան և ազգայնանում է: Կայ մի ներքին կապ մշակոյթի և ազգութեան միջև: Նախնական մշակոյթը պարզ էր, որովհետև դեռ ազգային չէր. արդէ մշակոյթը բարդ է, հարուստ, որովհետև դերպանցօրէն ազգային է: Եւ պատմութեան ընթացքն այն իմաստ ունի, որ ան- դէմ անդոյն գանդաւորներին դիմաւորում է, գունաւոր- ւում, անհատականացնում, դարձնում է եզրակի, չը- կրկնող երևոյթ, ազգ է դարձնում: Եւ միայն ազգու- թիւն դառնալով է, որ այդ դանդաճները տեղ են դրւում պատմութեան մէջ:

Մեր տեսակետը թէ ազգութիւնը մշակոյթի, ընդ- A.R.A.R.®

հանրութեան ձևն է, ունի նաև այն առաւելութիւնը, որ գերծ է պահում մարքսիստներէ կողմտ սխալից՝ ժխտելով պատմական զարգացման յաջորդականութիւնը: Պատմութեան նիւթը կարող է լինել, ըստ մեր տեսակետի, մի մնայուն երևոյթ, որ իր էութեան մէջ յարափոփոխ մ'տուժ է նոյնը — այդ ազգութիւնն է: Ուստի և այդ մնայուն երևոյթի համար — ծնունդի և վախճանի խնդիրը սովորական իմաստով առած՝ իր նշանակութիւնը կորցնում է: Այս ելակէտը ունենալով՝ մենք ազգութիւնը կորոնենք նաև հին և միջին դարերում: Ի հարկէ, այդ դարերի ուսումնասիրութիւնը մեզ դուռ ևս չի բնծեռում այնքան առատ և ուղղակի նիւթեր, ինչպէս նոր դարի ուսումնասիրութիւնը՝ ազգութեան զարգացումը պարզ, յստակօրէն ցուցահանելու համար: Հին ազգերի պատմութիւնը և ազգութեան զարգացումը ուսումնասիրելիս, մենք պէտք է մեր Ժամանակակից չափանիւնից դեմը մնանք, որպէսզի կարողանանք թափանցել այն ինքնատիպ, յաճախ տարօրինակ համադրութիւններէ մէջ, որ ստեղծել է ու յատուկ է հին քաղաքակրթութիւններին: Կրկնում ենք՝ քաղաքական և, մասնաւոր, կրօնական դրութիւններէ ուսումնասիրութիւնը անվճելիօրէն հաստատում են, որ հին աշխարհը կազմակերպւած էր ազգայնօրէն և ազգային պայքարը աւելի ծաւալուն էր ու խորը, քան, դուցէ, նոր դարերում: Ազգութիւններէ զարթնողը շատ ուժեղ խթանում է քրիստոնէութեան վարդապետութիւնից, մանաւոր, արևելքում, Հռոմէական ու Բիզանդական կայսրութեանց շրջանակում: Շատ հետաքրքրական և շնորհակալութեան արժանի դործ կը լինէր, եթէ մէկը ուսումնասիրէր ազգութիւններէ պայքարը Մերձարեւ Արևելքում՝ Գրիտոսի առաջին դարերում: Այս աշխատանքը դժուար է, և էլ՝ աւելի դժուարանում է նրանով, որ վերոյիշեալ դարերում ազգութիւնը հանդէս չի դալիս անխառն, անհարգատ փոխադրումներից գերծ, այլ միշտ ենթակայ է դարի իշխող զարգափոխին:

Մի կէտի վրայ է պէտք է ուշադրութիւն դարձնենք: Ազգային հարցի ըրտը հետազոտողները համաձայն են, որ ազգութիւնը արտայայտւում է մշակոյթի տարրերի մէջ՝ լեզուի, արեւտի, գրականութեան, գիտական-փիլիսոփայական դրութիւնների, քաղաքատնտեսական ձևերի: Այս ըրտը հոգե-մտաւոր և նիւ-

թական ստեղծագործութիւնները՝ իրենք ևս ծնունդ տալիս, ստեղծում են ազգութիւնը, սակայն, մէկ անգամ ձևաւորելով՝ ազգութիւնն իրենով արդէն կադապարում է մշակոյթի բարդ կառուցւածքը: Եթէ այս ճիշտ է, եթէ ազգութիւնը միևնոյն պատմական միջավայրում ապրող մարդկանց ընդհանրութեան մի ձևն է, միևնոյն է՝ ինչ էլ որ լինի նրա «ներքնաչէնքը», ապա, ուրեմն, պէտք է ապացուցանել, որ հին և միջին դարերում մշակոյթը չկար. ու եթէ կար էլ, չէր համախմբում որչա թիւ մարդկանց և չէր ստեղծում մշակոյթի ընդհանրութիւն, որ այնքան անհրաժեշտ է ազգութեան ստեղծման դործում: Սակայն, այսօրի՛ք անհեթեթ եզրակացութիւններ ոչ ոք չի անում: Բայց եթէ նման եզրակացութիւններ ոչ ոք չի անում, ապա նոր դարերի մշակոյթին վերադրում են այնպիսի աւանձնայատուկ բնոյթ, որից դուրի է նախորդ դարաշրջանների մշակոյթը. կապում են այն մէկ դասակարգի՝ բուրժուազիայի ծագման ու զարգացման հետ, ու պնդում են, որ միայն նրա յառաջանալովն է, որ մշակոյթը դառնում է ազգային: Մենք տեսանք այս տեսակէտի սխալը. մշակոյթը ամենուրեք և ամէն Ժամանակ ազգային շրջանակէ մէջ է կազմակերպւում: Մտաւոր հաւասարութեան նշան կարելի է դնել բուրժուազիայի և մշակութային արժէքների ժողովրդակաւանցման մէջ, բայց ոչ երբեք բուրժուազիայի և ազգութեան: Բուրժուական ազգայնութիւնը լոկ մի հանդրան է, մի փոքր ազգութեան զարգափարի յուրեժական զարգացման, և, որպէս այդպիսին, հանդիսանում է պատմական երևոյթ: Ազգութիւնը, բնաւ պատահաւորաբար չէ այն յուրի, բիրտ, ազգայնամոլ բնոյթի համար, որ, յաճախ, ստացած է բուրժուականը: Այդպիսի ձևերը մաքուր առումով վերցրած ազգութեան զարգափարի հետ չեն հաշտուում: Ազգութիւնը ստեղծագործութիւն է, մտքի, հոգու, նիւթական ու քաղաքական ստեղծագործութիւն, իսկ զրա համար անհրաժեշտ է ազատութիւն, ազգային ուժերի լիակատար ազատութիւն: Ազգութիւններէ ազատադրութեան դործը դերազանցօրէն երաշխաւորում է ընկերակարական հանրակարգը, որը ժխտումը չէ ազգութեան զարգափարի, այլ ստեղծումը նրա զարգացման համար աւելի կատարեալ, նպատակալարմար պայմանների:

Գ. ԳԻՒՋԱԼԵԱՆ

# Թ Ի Ի Ր Ք Ի Ո Յ Շ ՈՒ Ր Ջ

Տակաւին չէրեւեցաւ դիրք մը որ առարկայօրէն, առանց ուղղակի կամ անուղղակի ապագրանքներու ներկայացնել արդէ Թուրքիան այնպէս ինչպէս որ կայ:

Մինչև իսկ արտասահման ապաստանած Թուրք ընդգրկմադիւնները, որոնք մէջ կը գտնուին բազմաթիւ պետական մարդիկ, որոնք մէկ օրէն միւսը կործանում

կը նախատեսին քննադատութեան համար, չկրցան, չեն կրնար տալ ամբողջական պատկերը իրենց երկրի ներկայ կացութեան: Անշուշտ ապացուցական փաստերով, Թւանչաններով և անձանօթ մնացած յայտնութիւններով: «Իրօշակ»-ի նախընթաց թիւով, մենք առիթ ունեցանք խօսելու Հաշիմ Նահիտ պէյի զբերակին վրայ: Բայց այդպիսի արդէն կարելի էր կազմել ստոր-

եայ տեղեկութիւններով: Թուրք մամուլին մէջ միշտ ալ կերեւան ուշադրաւ տեղեկութիւններ տիրող տաղ-նապի մասին, որ անուրանալի է:

\* \* \*

Բայց եթէ չկան փաստացի, անշառ, անտիպ նիւթերով կազմած գիրքեր, ընդհակառակն, իրարու կը յանդրդեն «սանձնարարած», արտաքին առևտուրի, արտածման յատկացած հրատարակութիւնները:

Ահաւասիկ վերջինը, « Ghazi Mustapha Kémal » ( La Résurrection d'un peuple ), par Dagobert Von Mikush: Գերմաներէ թարգմանած Փրանսէզէի, այս հատորը մաս կը կազմէ Les Contemporains Vas de Paris (Ժամանակակից Դիւնքը) մօտէն դիտած շարքին, ուր երեքսո՞ւ են արդէն, խառն ի խառն, «Քասափոթին», «Յեղափոխականի մը Յիշատակները» (Վէրա Յիկնկեր), «Դոտոտոյիվսիկ» (Գրեւո՞՛ իր կնոջ կողմէ), «Սէլիոթին» և «Օսկար Ուալլա»:

Ճօն Միքուշ փորձած է 325 էջերու մէջ ամփոփուել կենսոն ու գործը Մուսաթաֆա Քեմալի: Ինչ որ կը նշանակէ պատմութիւնը արդէ Թուրքիոյ, անոր միա-նձեան իշխանաւորին զոյրոցական օրերէն մինչև մեր օրերը, ուր վերջոյցած կը համարէ «կազիին ստաքե-լութիւնը»:

Երևու՞թապէս անկողմնակալ այս հեղինակը, որ յաճախ յոտակատեսութեան ասպոյցոյցներ ալ կուտայ, ինքզինքը կը մտանէ, սակայն, սկիզբէն մինչև վերջը Թուրքիան ներկայացնելով զո՞հ, իսկ Մ. Քեմալի կենսո-ցը վերածելով հրաշապատում վէպի մը: Անոր դարձոցական օրերէն կը պատմէ զբուրքներ, որոնց խօսքն իսկ չլիտի ըլլար, եթէ Մ. Քեմալը հասած ջըլլար այսօրան դիրքին: Մնաց որ, այդ պատմութիւններն ալ պատմած է գիկտատորը ինք, իր ուզած դոյնը տա-լով անոնց:

Ճօն Միքուշի գիրքը, իր ամբողջութեանը մէջ, փառարանութիւն է Թուրք սոցալական շարժման զարգացման և յողթանակին, Ապտիւլ Համիտի վերջին շրջանէն, Օսմ. Սահմանազրութեանէն մինչև Դաշնակից-ներու մուտքը և միտ ղէպքերը: Հեղինակը պատիւ կընէ միջանկեալ իտօսելու նաև Հայքերու մասին: Ան-ուշտ այնպիսի ձևով մը որ դարձեալ թիւն չպատճառէ պատմութեան հոգևոր հօրը՝ Մ. Քեմալի, և չվնասէ զրբին վաճառման:

Այսպէս, բացատրելով Օսմ. կայսրութիւնը ազգայնացնելու կենսական անհրաժեշտութիւնը, կը գտնէ որ զլիսուր դժարութիւնը կը գտնուի ոչ թէ Մակե-դոնիոյ Յոյներուն, Սերպերուն և Պուլկարներուն շուրջը, որոնց համար «աւելի դիրքին էր գտնել կարգադրութեան եղանակ մը», այլ ուրիշ տեղ:

— «Քուն իսկ իլլաւութեան կեդրոնին, Փոքր-Ասի-ոյ մէջ, կը գտնուի տար և անձուլիլ ամարին մը, հա-յուսիւնը: Բացի մանրակար հոգամաւտ մը, որ պար-փակած է խոքորդային պետութեանց դաշնակցութեան մէջ, այս դժբախտ ժողովուրդը, հայածական՝ չարա-շաւք հակատարբէ մը, ու թերևս ոչ բարոյակի անար-ժան կերպով, այսօր անհետացած է աշխարհի քար-տէտն» (էջ 88):

Հայաջինջ սարսափները արդարացնելու և պատ-մելու արդիական ձև մը, որ անուշտ մեծազոյն հա-ճոյքը պիտի պատճառէ շարքաւորներուն, ըլլան շահ-ստատակ թէ տակաւին ոտքի վրա:

Կարժէ ամբողջութեամբ թարգմանել մնացեալ մասերն ալ:

— «Այդ օրերուն Հայերը միլիոններով կը համբը-ւէին. մէկ մասը ընդարձակ շրջաններ կը գրաւէր Փոքր Ասիոյ արևելեան և հարաւ-արևելեան շրջաններուն մէջ, միւսները ցիր ու ցամ կայրէին կայսրութեան բա-լոր մեծ քաղաքներուն մէջ: Առաջին քրիստոնեաները և փառահեղ անցեալի մը ժառանգարդներն ըլլալու ի-րենց հայարտութեան վրա, կուգար կանխար գիտակ-ցութիւնը իրենց մշակութային մէծ գորգացման, ուր-կից կը կարծէին կարեմալ քաղի ազգային մասնաշա-տուկ կեանքի մը իրաւունքը: Իրենց շարունակական անուրը, միացած իրենց յարաբան բարգաւաճումին, բայլ կուտային մտածել հայկական եին կայսրութեան վերահաստատման մասին: Իրենց դրացին՝ Ռուսիա կը քաղաքներ զիրենց այս յայտն մէջ: Բայց իրենց շուրջ, իրականներուն մօտ ուժգին առեւտրութեան միայն կը հան-դիպէին, զգացում՝ որուն բացատրութիւնը պէտք է փնտռել ուրիշ տեղ քան թէ միայն երևութական պատ-ճառներով մէջ, որովհետև ատար արմատները մխրեւած են երկու հակառակորդ ցեղերու արիւնին մէջ իսկ: Քեմալականները, ինչպէս կոչուեցան քրիստոսարդ Թուրքերու յաջորդները, շատ խառօրէն դատաւիտե-ցին իրենց նախորդներուն գրեթէ բոլոր արարքները. միայն այս հայկական խնդրին մէջ է՝ որ, գտնէ լուե-կաշն, հաւանեցան անոնց բնաջնջումի քաղաքականու-թեան, գոր ամբողջ աշխարհ ձաղկեց իբրև գարշէլի ոճի մը: Եթէ մէկ կողմ թողունք մարդասիրական տե-սակէտը, Հայքերուն իր պետական մարմնէն անջատու-մը Թուրքիոյ համար ոչ նուազ բարցարժակ անհրա-ժեշտութիւն մըն էր, քան Հնդկիկներու բնաջնջումը՝ ձեւմանկեղու պետութիւն մը հիմնելու համար Ամե-րիկայի մէջ (էջ 88-89):

Դէպքերու սրբեթաց հորովումին մէջ, Ճօն Միքուշ կը հասնի այն օրերուն երբ Չօր. Ֆրանսի տնիպէտ յաղ-թական մուտք կը դարձէր Պուլիս, փառաւոր ընդունե-լութիւն մը գտնելով Բեքերի մէջ:

— «Այլ ևս ոչ մէկ յոյս չափազանցութիւն կը հա-մարէր. դարաւոր երազներ իրականութեան պիտի վե-րածուէին. Բիւզանդիոնը անվիճելի կերպով կիշմար քրիստոնեայ աշխարհին ձեռքը: Յունական շրջանա-կներու մէջ, կը հաւատաւէին թէ Դաշնակիցները Պուլիսը գրաւած են միայն անոր համար որ վեհօրհայտն տան իրեն մայրաքաղաքը հեղինակներ ևնր կայսրութեան: Խորամանկ փաստարանը արդէն իր դատը կը պաշտ-պանէր Փարիզի մէջ, Չորսերու խոքորդակն առջև, որ պիտի վնէր երկրին հակառակորդ: Հայերը, միակը որ կանապէս պատճառներ ունէին տրոնջուան թրքա-կան կառավարութեան, վստահ էին Ռիչարմի՝ յաղա-ղութեան պաշտպանի վրա: Մ. Նահանգներուն առա-ջինի գայրաբք թրքական հայածանքի քաղաքականու-թեան դէմ՝ ամենէն ապառաջ գրաւականը կը թէր Հա-յերուն թէ գոհացում պիտի տրուի իրենց քաղաքներն՝ մեծ պետութիւն մը կիմնելու Փոքր Ասիոյ մէջ, — վե-

րածնութիւնը հին Հայաստանի: Քիւրտերն ալ, այս իսկամ աւարտու եւ անկարգ լեռնակառնները, անկարտութիւն կը պահանջէին: Զէ՞ որ օրակարգի վրա էր ժողովուրդներու իքնորոշման իրաւունքը» (էջ 151):

Յուսահատութեան օրեր են Թուրքոյ Համար: Երկիրը՝ խորտակած, ժողովուրդը՝ տասանորդւած, կենդանի ուժերը սպաննած՝ ութ տարւան պատերազմներէն: Կայսրութիւնը դատապարտած էր քաջայման:

Բայց այդ օրերուն ալ, երբ մեր ոտքը դնունէն կտրած էր, Թուրքը կը տքնէր, կը դաւէր, միջոցներ կորոնէր, երկիրը փրկելու համար: Ոմանք Անգլիականներու Միութիւն մը կը կազմէին, ուրիշներ՝ «Արգալային Իրաւանց Պաշտպանութեան» կոմիտէներ, նոյնիսկ տեղական ինքնավարութեան ծրագիրներով (Թրակիա, Պոնտոս): Մ. Քեմալ ծրագիրներ կործար տակաւին Պոլսոյ մէջ, խորհուրդներ տալով սուլթանին եւ ուրիշներու, հոգ չէ թէ իբրև սոսկական անհատ:

«Միւտաֆաիի Հուգուզը Միլլէի», — կըսէին ու կանցնէին այդ օրերուն, Պոլսոյ մէջ: Եւ սակայն, «Արգալային Իրաւանց Պաշտպանութեան» այդ կոմիտէներն էին որ, խարխիս ծառայեցին բուն արգալային շարժման եւ զիւրացուցին Մ. Քեմալի յաղթանակը, ոյժ առնելով Դաշակիցիներու դարձելի խաղերէն:

— «Արգալային Պաշտպանութեան այդ կոմիտէներուն ամենէն միացեալ եւ ամենէն անկեղծը կը գտնւէր կայսրութեան արևելեան մասին մէջ: Գրեթէ ստոյգ էր հայկական պետութեան մը հաստատումը՝ բաղկացած այդ շրջանի նահանգներէն: Դաշակիցիները, զլիաւորաբար Ամերիկա, չէին կրնար դրժել այն խոստումը զոր տաճ էին Արևելքի քրիստոնէաներուն: Տամատ Ծէրիտ փաշայի կառավարութիւնը պատրաստ էր տալու իր հաւանութիւնը, Պոլիսն ու դրացի նեղուցները փրկելու յոյսով: Բայց Հայաստանի իսլամները չէին ուզեր որեւէ դնով Հպատակները դառնալ իրենց ատած հայրենակիցիներուն: Մնաց որ, այս վերջինները անշուշտ պիտի նեղէին գանձը. այս երկրի երկու ժողովուրդներուն, Թուրքին եւ Հայուն միջև թշնամութիւնը այնքան արմատ բուսած, արիւնին մէջ անցած էր որ, բացարձակապէս անկարելի էր իրաւախօհութիւն մը: Այստեղ, Արևելքի մէջ էր որ պիտի սկսէր նոր-թրքական շարժումը» (էջ 159):

Եւ այդպէս ալ եղաւ, երգրումի եւ Սըվազի ծանօթ ժողովներով:

Գիրքը քանի մը տողով կը պատմէ նաև անկումը «Երևանի Հանրապետութեան», սաղը Հայկական մեծ Կայսրութեան, Պաթումի եւ պարսկական սահմանին միջև, ինչպէս նախատեսած էր Սեվիզի դաշնագրով:

«Ժժբախտաբար Հայերուն համար, իրենց պահպան Հրեշտակը, Մեծն Բրիտանիան, ստիպւած էր լքել իր սեփական ծրագիրները Պարսկաստանի եւ Կովկասի մէջ, եւ պարսկէլ այդ շրջանը, Պաթումն ալ մէջն ըլլալով:

«Հայերը, իրենց բախտին ձգւած, նեղը դուրեցան միտամանակ եւ՝ արգալայական Թուրքերուն եւ բոլշևիկ Իրուսերուն կողմէ՝

«... Ինկիլթի դժարութիւն չբաւեց պատրւակ մը գտնելու, Թուրքերու կարծեցեալ շարք մը, վերջնադիր

մը ուղղելու, յետոյ պատերազմ յայտարարելու համար հայկական Հանրապետութեան դէմ: Հրամանատարութիւնը յանձնեցաւ քաջարի զօրավար Քեալիմ Գարա Պէշերի փաշայի: Հայերը, աւելի ընդունակ առևտուրի քան ղինարևեստի, պարուեցան: Կարող անձնատուր եղաւ եւ Հանրապետութիւնը հարկադրեցաւ ստորագրել դաշնագիր մը որ վերջ կը դնէր մեծ կայսրութեան մը երազին:

«Հայաստանի դէմ շահած այս փայլուն պատերազմը, զոր յարուցած էր Մ. Քեմալ յարմար ժամուն, ունեցաւ երեք լաւ արդիւնքներ. — վերահաստատեց զվերջնական կամքը՝ ազգայնական բանակին մէջ. ազատեց կառավարութիւնը թիկունքէն յարձակման մը շարունակական վտանգէն, ուղղակի հաղորդակցութեան մէջ դրաւ Թուրքիան Իտալիոյ հետ»: (էջ 221—222):

Իրողութիւններ, որոնք անշուշտ պատիւ կը բերեն ուսու եւ հայ բոլշևիկներուն...

\* \* \*

Ապրիլ 24ին կատարեցան Արգ. Մեծ Ժողովին ընտրութիւնները: Ճիշտ այնպէս ինչպէս տեղի ունեցած էր Ժողովին «Ինքնավարութեամբ»:

Նախորդ ժողովը ընտրւած էր 1927ին, եւ պայմանաժամը կը լրանար 1931 սեպտեմբերին: Բայց ոչինչ: Մ. Քեմալ մէկ-երկու ամիս պտոյտ կատարեց Սև Մոլու ափերը, յետոյ՝ Բիթլիսի, Իդիսի, Գոնիա, Կեսարիա, եւ փոխանակ ճամբան շարունակելու գէտի «արևելեան նահանգները», անասպարանքով դարձաւ Էնկիլթի եւ հրամայեց լուծել Արգ. Մեծ Ժողովը (1931 մարտ): Անմիջապէս յետոյ, հրամայեց պատրաստել թեկնածուներու ցանկ մը, նոր Ժողովին համար: Բայց, իբրև «ժողովրդավար» մարդ, չնոր՛հ ըրաւ միայն 287 անթո վերապահելու իր կուսակցութեան թեկնածուներուն, իսկ 30 անթ տրամադրեց «անկախներու»:

Բացարտութեան նոր ձև մըն է այս «անկախ»ը: Ուրիշ պարտաւաններու մէջ, պիտի նշանակէր ընդգիծալի: Բայց, Թէթ՛ի պէնջի զանչտն յետոյ, այդ բառն ալ սեւ ցանկը անցաւ: Տետրակէն ջնջեցաւ «Ոնալը»էն դուրս ո՛րեւէ կուսակցութիւն կամ խմբակցութիւն: «Անկախ»ը կապ չունի ո՛րեւէ կազմակերպութեան հետ: Պարզապէս աչքի փոշի է: Ափ մը անկուսակցականներ նստեցնելով Արգ. Ժողովին մէջ, Մ. Քեմալ—Րամէթ—Ճէվդի եռապետութիւնը կուզէ հերքել մենատիրութեան մեղադրանքը:

Բայց այս խեղճատակութիւնն ալ կէս ճամբան մընայ: Թուրքոյ ընտրութիւնները երկաստիճան են: 20 հազար քեչարիկներ կընտրեն 200 Բ. կարգի ընտրող, որոնք ալ իրենց կարգին կընտրեն բուն երեսփոխանները: Արգ, այս խամաճիկներէն ո՛րը պիտի համարձակէր արիաբար պաշտպանել իր թեկնածուները:

Եւ տեղի ունեցաւ անխուսափելին: Տրամադրւած «անկախ» թրոններէն միայն 23ը ունեցան տէր, իսկ մնացեալները իբրև անտէր դոյ՞ նորէն վերապահեցան «Ոնալը»է, որ զանոնք պիտի լեցնէ իր հաւատարմիներով, Պոլսոյ, Թոտոսթոյի եւ Սամսոնի մէջ: Իբրև թէ այս քաղաքներու Բ. կարգի ընտրողները չեն

ուզած քէ տալ անկախներուն Իսկ Իզմիրը, որ ուրախութեան փոթորիկներ բարձրացուց անցեալ տարի, ընդդիմադիր կուսակցութեան և Տէլթէի պէյի ընդունելութեան առթիւ, նոյնիսկ արեւն թափելով, «հարաշուք իմն» դարձեր է թունդ քեմալականք...

Կառավարութիւնը յանցանք ունի՞ այս անցուղարձին մէջ, Գաւ լիցի: Մէկ թիւք միայն, ընդդիմադիր «Էնըրմազը», համարձակեցաւ փափախլ, Պոլսոյ ընտրութեան առթիւ:

— «Համալսարանի սրահը հաւաքած 1500 Բ. կարգի ընտրողներուն մեծ մասը, անուանապէս կամ շատ մը նկատումներով միայն Ոսլթի կը պտտկանի... Եթէ Ոսլթ կարգադիւրպութեան կողմէ արգաս թողած ըլլալին անոնք, արգիւնքը ա՞յս պիտի ըլլար: Այս կէտը միայն Աստուծ գտէ: Մեր գիտցածը այն է որ, շատ մը Բ. կարգի ընտրողներ յուսախար և սրտաբեկ վիճակով դուրս ելան համալսարանի սրահէն:

«Ի նչ նպատակ ունին այն դաւառական ժողովները, որ ընտրութեան մէկ դիւրը ստալ տեղի ունեցան: Բ. կարգի ընտրողներուն հրաման չըրեկցաւ. բայց պէ՛տք էր անոնց ըսել թէ «աւելի ճիշտ կըլլար անկախներու քէ չտալ»:

«Ոսկ իրողութիւն չէ՞ այն պարզան, որ քէ-ատուփին գլուխը գտնուողները կանոնէին քէթոլթիւրը, ճարպիկ շարժումով մը արագ ակնարկ ըր կը նետէին վրան և այնպէս տուփը կը նետէին: Ասոր իմաստը ի՞նչ է»:

Ինչպէս ըսինք, միայն Պոլսոյ սրտակերն է այս — նտիկին մայրաքաղաքին, ուր մարդիկ աւելի գիտակից են և իրողատարաբ աւելի ազատ, քան Անատոլի այս կամ այն քաղաքին մէջ:

Այնպէս որ, իրրե Ազգ. Մեծ Ժողով, Մ. Քեմալ իր թաթին տակ ունի նորէն «Էվլթթ», կֆլետիմներու խառնակոյտ մը, այս անգամ «բաւելալ և ճոխացեալ», քանի որ երևիտիաններու թիւը բարձրացած է 317:

Ի՞նչպիսի տարրերէ կազմած է նոր Ժողովը:

«Լա Ռէփրուպլիք Անչնէն», թուրք ընդդիմադիրներու Փարիզի օրկանը, դիտել կուտայ թէ այս «նոր» երեսփոխանները նորէն անոնք են որ խորհրդարանին մէջ կը նստին 1908ին ի վեր:

— «Անոնք կարգով մաս կազմեցին բոլոր քաղաքական խմբակցութեանց: Մենք գանոնք ճանչցանք իրրե միապետականները՝ Ապտուլ Համիտի օրով, իթթի-հատական՝ 1908ին ի վեր, թունդ ազգայնականներ՝ Մեծ Պատերազմին առեւն, դիկտատուրութեանց կուսակից՝ 1925ին: Վաղն ալ պիտի դառնան արքայականներ, եթէ մենք թոյլ տանք» (1 մայիս):

\* \* \*

«Եթէ մենք թոյլ տանք»...  
Իր ուժին վստահ, կամ արտաքին ուժի մը կըթնած կազմակերպութեան մը տպաւորութիւնը չէ՞ն ընէր այս խօսքերը:

Իրականին մէջ, ըսելու ձև մըն է այս. որովհետև, արտասահման ապաստանած թուրք ընդդիմադիրները չունին այն ուժը որ մտածել տար քեմալականներուն: Թէև, վերջերս, աշխուժութեան նշաններ ցոյց կու-

տան... դրականութեամբ և փոխադարձ ամբաստանութիւններով: Մեծ բան էր, եթէ կարենային արդիւիւրրեւէ արտաքին փոխառութիւն:

Այսպէս կամ այնպէս, իր վերջին երկու թիւերուն մէջ, «Լա Ռէփրուպլիք Անչնէն» կողմէ հասկցնել թէ հասած են օրերը...

Վերջնիթիւր թիւին մէջ, թուրք թիւրքը հրատարակած էր բաց նամակ մը՝ ուղղւած Մ. Քեմալի, ճիշտ երեքուկէս լաշնատարած կէրու վրա, որոնք եթէ թարգմանին, կրնան լեցնել հայերէն օրաթիւրթի մը շորս էջերը, երկու օր: Գրողն է՝ Թուրքիոյ մէջ Ծանօթ հրեայ գործիչ մը, Ալպէն Տուա, որ դիմացն առած Մ. Քեմալը, եղալի կը խօսի անոր հետ — կֆլետիմ — և դասեր կուտայ սպղերու պատմութեան, դիտութեան, փիլիսոփայութեան, կր ճապիկ կատարած բռնութիւնները, կեղծումները և կամայկանութիւնները, կր ծաղիք քեմալական բարենորոգումները, և կը նախատակ անխուսապիւի անկում և անփառունակ վախճան Մ. Քեմալի համար:

Իր փիլիսոփայական մէջ, Պ. Ա. Տուա ողբալով թուրքիոյ գլխուն պայթած փորձանքները, իթթիւտի շըրջանէն մինչև քեմալականը, կր խօսի նաև փոքրամասնութեանց կրած հալածանքներուն վրա:

— «Յանուն պիղծ ազգայնականութեան մը, դուն կը հալածես, ջարդել կուտաս, երկրն կը քշես հրեաները, Յոյները, Հայերը, մինչդեռ հրեաները, Յոյները և Հայերը երկիրն ամենէն դործօս տարբեր կը կազմէին և անոնց բացակայութիւնը ամբողջ թուրքիոյ մէջ յառաջ բերած է ընդհանուր թշուառութիւն մը, որուն հանդէպ անզօր կարկանդակ են զու հրամանադրած կամայկան և քեմալի միջոցները՝ վերահաստատելու համար երբեմնի բարբառաճութիւնը»:

Հեղինակը այս առթիւ կը յիշէ նաև 1915-16ի հայաջինջ սարսափները — մէկ միլիոն մեռեալ, 244,000 հողի կողկաս պապասանակ, 25,000 Սուրիա քըւած և հայաբաւար կիներ և մահկամարը աղիկներ թրքական հարէմներու մէջ փոխադրած:

Եւ կրկին ողբալով թուրքիոյ քայքայումը, կը հարցնէ Մ. Քեմալի.

— «Գիտե՞ս օր Լիօնէն գործարանատէր մը, ոսկիի գնով 3000 հողի բերած ըլլալով մեր հայ հայրենակիցներէն, մետաքսի և գորգի բանուորներ, իր արհեստակիցները իրեն հետեկցան, և այսօր միայն Լիօնի շըրջանը կօգտուի 8000 Հայերու արհեստագիտութեանէն. Հայեր զորս դուն վտարեցիր Փոքր Ասիայէն, առանց հաշուելու այն հայ ատկարակները, գործարանատէրները և մտաւորականները զորս բռնադատեցիր ձկել երթալու և որոնք դաջին հարստացնելու Եւրոպան և Ամերիկան՝ իրենց տաղանդով և կարողութեամբք. բոլորն ալ կինդանի ուժեր որոնցմէ դրկեցիր թուրքեան»:

«Գիտե՞ս» որ 100,000 Հրեաներ ալ, փախչելով զու խստութիւններէն, լքեցին իրենց հայրենիքը և դաջին իրենց գործունէութեամբ և բանդիտութեամբ հարստացնելու արդէն հարուստ ուրիշ ազգեր:

Իայց իրենք, այս մարտաշունչ կամ ողբերգու հրատարակութեանց հեղինակները ի՞նչ կը բանին, ի՞նչ կը խորհին, թուրքեան բարեկալելու —, «նախկին բարբառաճումը» ապահովելու համար:



Նախ, հիմնւելով զանազան երևոյթներու վրա, մէկ օրէն միւսը կը սպասեն տաղալուծ քեմալապետութեան: Ինչո՞ւմ, ի՞նչպէս — Այդ կէտերը մի՛ զբքէք: «Իշլալահ-մալլահ» — Այս տեսակ բռնապետութիւն մը չի դիմանար, այսօրիեի երկիր մը չի կենար սպարի: — Հետեաբար՝ կամ առաջինը պիտի կործանի, կամ երկրորդը: Եւ արդէն նախապատրաստած են վերահաստատելու միապետութիւնը, անշուշտ սահմանադրական: Էնկերիէն թղթակցութիւն մը կը պատմէ թէ պաշտօնեաներու հարիւրին 95ը իրենց սրտին խորէն կը մտղթեն սահմանադրական միապետութիւն:

— «Թէև այս մտղիկը աւելի լաւ կը վճարեն, բայց նկատի առնելով ներկայ տնտեսական թշուառութիւնը, թրջական դրամին զնչու կարողութիւնը աւելի խախտու կը դարձնէ իրենց կիսորը քան համիտան շրջանին, ուր այնքան դէժ է և այնքան անկանոն կը վճարէին: Անոնց կարծիքով, միապետութիւնը շատ աւելի թոյլատու է ստաբիլիէ չը քաղաքական և ընկերային տեսակէտով:»

Իսկ ի՞նչ սկզբունք ունին իրենք, այս թերթին շուրջը խմբած թուրք ընդդիմադիրները, Թուրքիան փրկելու համար:

Նոյն մայիս 1ի թիւին մէջ, թերթին քաղաքական տնօրէնը, նախկին նախարար Մէհմետ Ալի պէյ, գրած է խմբադրական մը, «Աւանդական քաղաքականութիւնը», որուն կը ձայնակցէ խմբադրապետը, Նէմաթի Բիֆաթի:

Անշուշտ կուզէիք իմանալ այդ քաղաքականութեան բովանդակութիւնը:

Նախկին նախարարն է որ կը բանաձևէ.

— «Թուրքիան իլ ներքին քաղաքականութեամբ տեսակետով կրնայ փրկիլ, տակաւին, ցեղերու կատարելալ համերաշխութեամբ: Քիւրտը, Հայը, Յոյնը, Հրեան, Լազը, Ալաբը, Թուրքը պէտք է միմեյնց հաւասարութիւնը վայելին օրէնքին առջև:

«Ժամանակին Օսմանեան կայսրութեան մաս ինչպէս մտնուած է իրենց տեղական ինքնավարութեանը տէր ժողովուրդներու մեծ համադրանակցութիւն մը, Թուրքիոյ մակամին տակ, պատար մը չը՝ պիտի ըլլար

նուսական համայնավարութեան և իտալական աշխարհակալութեան դէմ:

«Այս գաղափարը դիւրաւ կրնայ իրագործել ուրիշ ո՛րիէ կառավարութեան կողմէ, բացի քեմալականէն»:

Մէհմետ Ալի պէյ այս դիտարկն ստթիւ վկայ կը կանչէ բանաստեղծ Լամաթիլը, որ 1854ին ղըրք մը գրած է Թուրքիոյ վրա, և անոր բերնով կը պատմէ Սուլթան Ապտիւլ Մէհմետի խօսքերը՝ իսլամներու և ոչ-իսլամներու հաւասարութեան մասին: Թարգմաննց այնպէս ինչպէս արտագրած են.

— «Կայսրութեան իսլամներուն և ամէն դաւանանքի ոչ-իսլամներուն մէջև քաղաքական, քաղաքային և կրօնական պայմանները այնքան հաւասար դարձնել որ, Սուլթանին օրէնքներուն առջև միայն մէկ և միւն-նոյն ժողովուրդը գտնի, զանազան ցեղերու և կրօններու ձևով: Մէկ բառով, ազգայնացնել ազգերու այն բոլոր հատանները որ բոնած են Թուրքիոյ հողը, այնքան անկողմնակալութեամբ, քաղցրութեամբ, հաւասարութեամբ, ներողամտութեամբ որ, այդ ժողովուրդներէն իւրաքանչիւրը իր պատիւով, ինքնով և ազանովութեամբ շահագրգռած զգայ նպաստելու կայսրութեան պահպանման, տեսակ մը միապետական համադրանակցութեամբ, վեհապետին հովանաւորութեան տակ»:

Ահա ինչ որ կը կոչեն «Աւանդական Քաղաքականութիւն»:

Ահա միտ՛ի փրկարար ճամբան՝ «փրկելու համար Թուրքիան քաղաքական և տնտեսական փրկուածէ, որ օրէ օր աւելի անձկութիւն կը պատճառէ:

Ուրիշ խօսքով, վերագրած դէպի օսմանցիութեան օրերը...

Ողջերը կը փորձեն դառնալ հարիւր տարի ետ, երբ մեռելները կտրած են նահանջին բոլոր ճամբաները:

Ուրեմն, սպասենք որ փրկուած տեղի ունենայ, և Մէհմետ Ալիները մնացեալ փորձամանութեան վրա փորձեն «Աւանդական Քաղաքականութիւնը»...

Ապտիւլ Մէհմետ ու Լամաթիլը օգնական:

# Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ո Ւ Մ

## „ՍՈՑԻԱԼԻԶՄ ԵՆ ԿԱՌՈՒՑՈՒՄ“

«Սոցիալիզմի կառուցումը» Հայաստանում գործանում է «բայլերիկան տեմպով»: Մենք՝ «կապիտալիստական ճահիճում» պարզներս՝ գարմանքով և ապուլութեամբ ենք դիտում «բոլշևիկեան կոնոմիկայի նւաճումները» — այնքան արտակարգ են նրանք:

Ահա, օրինակ, Երևանի Բամիլօպի քաղաքամերձ տնտեսութիւնը: Վերջին պաշտօնական քննութիւնը, յայտնագործել է նրա մէջ հետեւեալ «թերութիւններն ու տնտեսավարութեան խայտառակ վատերը».

«Տնտեսութիւնն ունեցել է 176 կով և 16 դոմէշ. դրանցից 6ը սատկել է շնորհիւ գոմերի տիրող հակաստողչապահական զրութեան, անխում վերաբերմանքի, կերի պակասի և բժշկական անբաւարար օգնութեան... 18 կով հիւանդ է: Գոմերում մէկը և ալըր լճանում, կովերը թաղուած են այդ կեղտի մէջ»: Նախկարյում գնւած է 100,000 խուրձ աւուսյա՝ խուրձը 1,50ր. մինչև 2 խուրձը 20 կոպ.՝ փոխանակ 25 կոպէկի: 18 դոմէշից 12ը ոչ կաթ են տալիս, ոչ էլ աշխատ-

տանքի համար պիտանի են. ի դուր խոտ են ուտում: Կովերից 17ը հիւանդ են վարակել հիւանդութեամբ և կապւած են առողջ գոմէշների հետ: Յունւարից մինչև ապրիլ ծնած 35 հորթից 15ը սատկել է, 7 ունի թոքախտ ու փորլոյծ: Դրանք առաջ էլ 7 հորթ է ստուկած: «Տնտեսութեան ունեցած 597 խոզի գոլինիբրից 320ը սատկել է շնորհիւ ամենախալտառակ անփութութեան: Իսկ 1276 խոզերից և գոլինիբրից մինչև ապրիլ 1 սատկել է 601ը... Այս ամեն մի մայր խոզ ընկել է թոխմախան լիճը և սատկել. ոչ ոք այդ մասին տեղեկութիւն չի ունեցել: Անցել են ամիսներ ու թոխմախան լճի ստույգը հալելուց յետոյ գիսիւր յայտնաբերել է»: «Տնտեսութեան ցեղական թանգարժէք հասերից 14ը «սատկել» են... 1930 թւին 3401 ճուտերից 70ձ վաճառել են, իսկ 1851ը նոյնպէս «սատկել» են: Այսպիսով, երբ ճուտերի մտատորապէս 75 տոկոսը ոչնչացել է»:

Բանկօօպը որոշել է գոմեր չլինել տնտեսութեան համար, որոնք պէտք է պատրաստ լինէին զեկտեմբերից առաջ. յատկացւել է 300,000 ռուբլի, բայց գոմերը «մինչև օրս (ապրիլ) մնացել են կիսատ: Դրա դիտարկ պատճառը չինանիթ ժամանակին չհասցրածն ու տեխպերտնայի անբաւարար լինելն է: Կիսատ չէնքերն էլ կառուցած են մի շարք թերութիւններով... Գոմերը, ինչպէս նաև թռչնաբուծարանը գրեթէ են եղել յոստի նորից են քանդու և օղանցքներ բացել: Շէնքերի ներք լուսամուտքներն չէ անցկացած: Մէջի և ազրի առևակներն, առանց բացառութեան, չեն ծառայում իրենց նպատակին: Բոլոր չէնքերի սաղներն, առանց բացառութեան, ուռչում և թափւում են: Կառուցել են շէմեր (օրինակ՝ պահեստը) առանց դռների... Իրր պատերը պարտաւտ են եղել, մասնամակ ցորից քանդել՝ դռներ բանալու համար... Ոչ մի չէնքի գուռն ու լուսամուտք կողպէք չունի. տեխնիկը պատճառաբանում է, թէ դռների կանթեր չկան, մինչդեռ պահեստում յայտնաբերւեցին մեծ քանակութեամբ կանթեր» (ՁՊ. Հ.», 15 ապր.):

Մրանից էլ փայլուն սպիտակգլի կատուցում... Ահա և մէկ ուրիշը — երևանի պահածոյի գործարանը: Այստեղ էլ «իբ ու գործը կատարել է դասակարգային թշնամի»: Արտասահմանից ստացւել է թիթեղ սուսիերի համար, և գործարանի ինժեները «7 կիլոյանոյ 20,000 թերթ թիթեղից կախարհներ կտարել իւրաքանչիւր թիթեղից փոխանակ 11 կափարիչի, կտրել է 8 հատ», որ նշանակում է «անտեղի կորցրել են 5454 թերթ թիթեղ... 2181 ռուբլի 60 կոպ.»: Դրիմից բերում են 1200 ռուբլիանոյ մի մեքենայ թիթեղ կտրելու համար, բայց գործածութեան չեն դրնում, որով կորցնում են 17,845 թերթ թիթեղ — 7,138 ռուբլի: Մի ուրիշ գէպքում, անփութութեան հետևանքով, կորցնում են 81,420 թերթ թիթեղ — 32,568ր.: 23,000 պատրաստի դատարկ տուփեր լցւում են գործարանի խոնա մասը և ըլլում Ժանդոտում ու փչանում են. վնաս 4000ր.: «Այսպիսով վնասարանները կոնսերվի գործարանին հասցնում են մի քանի ամսւայ ընթացքում 104,719 թերթ թիթեղի կամ 46,487 ռուբլու վնաս»: (ՁՊ. Հ.», 10 ապր.):

Եւ յետոյ, նոյն «գործարանի աշխատանքի պրոցեսում իւրաքանչիւր մեքենայ տասնեակ անգամ փոխադրել են մի տեղից միւս տեղը, իբր թէ նպատակաւոր մար ձևով տեղափոխելու համար, սակայն, տասնեակ հազար ռուբլիներ են ծախսուել այդ ուղղութեամբ ու դարձեալ ուայոնալ չեն տեղափոխել... Մրանից մի տարի առաջ գործարանի համար պատւիրում ու ստանում են 20 վագոնիկ, բայց որովհետև գործարանի համար դրանք պէտք չեն, ուստի և մնացել են գործարանի րակում թափւած, որոնց մի մասն այսօր շարդւած է: Այդ վագոնիկների հասն ինքնարժէքով արժէ մօտ 800 ռուբլի, իսկ 20 հատը՝ 16 հազար ռուբլի... Գերմանական ամենալու տեսակի 6-8 կոնսերվի մեքենայ առանց գործածութեան ամբողջ աշխատանքի ընթացքում թափւած են եղել գործարանում, գորոչու մէջ և ամբողջովին ժանդոնել ու փչացել են: 100,000 մեծ տուփ, որոնք պէտք է 5 տարի դիմանային, ամբողջովին փչացւել են» — կորուստ 40,000 ռուբլի: «Եփած պամիդորը (սոմաթէս) մի տեղից միւսը փոխադրելիս, իբր թէ ուայոնալ միջոցի են դիմել, ցինկից ամաններ են պատրաստել տակ, որոնց հատը նստել է 5ր., սակայն, յետոյ պարզւել է, որ այդ ցինկի ամանը պամիդորը փչացնում է, որից յետոյ դրանք գործածութիւնից հանել են և քցել են մի կողմը:

«Իբր թէ պամիդորի նոր ձևով եփելու համար՝ 700 փութ խակ պամիդոր են լցնում կաթնաները և եփում, բայց այդ «նորը» դուրս չի գալիս և 700 փութը ամբողջովին զէն են թափում: Բացի այդ, փչացնում ու թափում են 6000 փութ ձմերուկ:

«Այս անցած ձմեռը գործարանի մօի բաժնում խոզովակներ են անցկացնում, իբր թէ, ստուած միւր տաքացնելու համար, սակայն, այդ խոզովակները միտն ամբողջովին սևացնում են, որից յետոյ, խոզովակները քանդում, զէն են քցում»: Եւ այլն, և այլն. (ՁՊ. Հ.», 19 ապր.):

Հապա «մի քաբրիկամե՞րը», յայնքն՝ անասնապահական խորհրդային տնտեսութիւնները. «Աղբաբայի տնտեսութեան հորթեր 50-60 տոկոսը կոտորւել է, 1 ենինականի պետֆերմայում մէկ ամսում սատկել է 60-70 հորթ»: «Մեծեռնովկայում կովերը ծնել են, բայց կթողներ չկան... Աղբաբայի խորհրտնտեսութիւններում կովի կրծքից սպիտակ կաթ են կթում, իսկ իրականում ստանում են սև և կիշոտտ պանիր»:

Մորհրդային տնտեսութիւնները ապահովւած չեն կերով. «Մոսկւայից Աղբաբային առաջադրւած է 11 հազար հեկտար զարնանցանի պլան, բայց իրականում Աղբաբան ընդամենը 11,000 հեկտար հող չունի: Ալազեպի խորհրտնտեսութիւնն ըստ պլանի պէտք է ունենայ 31թ. վերջին 40,000 դուլու ոչխար, որի համար պէտք է կատարել 1,100 հեկտար ցանք, բայց ցանքի տարածութիւնն այնքան է իջեցրել (300 հեկտար), որով 20,000 դուլու ոչխար էլ չի կարող պահել» (ՁՊ. Հ.», 12 ապր.):

Ահա և Ցնւշինն ու Կիբշինը, Հայաստանի չինարարութեան ցեմետն ու կիր մատակարարող գործարանները, որոնց աշխատանքները ապր. 1-ին պէտք է աւարտած լինէին: Սակայն, «Ցնւշինի պլանը փոխանակ ամբողջպէս կատարւելու, աւարտւած է միայն

39,6 տոկոսով: Յունւարի պլանը կատարւած է 57,6 տոկոսով, փետրւարի պլանը՝ 48,6%: Գործալըժումների թիւը փետրւարին եղել է 996 բանւորական օր: Այս ամենից յետոյ, Յեմշինի աւարտման ժամկէտը երկարացւած է մինչև եռ. 1, սակայն, ներկայ տեսպերը չեն աշխատում նաև այդ ժամկէտին գործն աւարտելու հնարաւորութիւնը:

Պայտատակ դրութեան մէջ են նաև Կիրշինի աշխատանքները: Կիրշինի իր հիմնական աշխատանքներն աւարտել է փետրւարից արդէն գործարանը «աշխատում» է: Գործարանն ունի 2 վառարան, որոնցից մէկը դեռ չաշխատած փշացաւ, և հաւանական է մի ամսից յետոյ հաղիւ աւարտի նրա սարքաւորումը, իսկ երկրորդը ամառայ մէջ 15 օր հաղիւ է աշխատում:

«Այս ամենից պարզ է, թէ ինչ դրութեան մէջ է պլանը: Առաջին եռամսեակի պլանները կատարւած են 37,3 տոկոսով: Գործարանը մինչև մարտ 28ը փոխանակ արտադրելու 1330 տոն կիր, արտադրել է 280 տոն, պլանը թերակատարելով 88,7 տոկոսով: Եւս մի հանգամանք. արտադրւած 50 տոկոսը փշացած է»:

Ի մէջ այլոց, շատ հետաքրքրական է և Կիրշինի ու Յեմշինի բանւորների զգալիարժեքն ու ղէմքը: Կիրշինի ներկոմարեստի «մօտ 200 բանւորների մէջ չըկայ և՛ ո՛չ մի կոմունիստ կամ կոմերիտական», իսկ Յեմշինում կայ ընդամենը 18 կոմունիստ՝ մօտ հազար բանւորների մէջ:

Կայ և աւելի «սարսափելի»: Պօսքը տանք Հայկոմկուսի պայտատակներին.

«Սոցիալիզմի կառուցման յարաճուն վերելքը և դասակարգային պայքարի սրումը մեր երկրում չէին կարող իրենց անդրադարձումը չունենալ նաև Յեմշինի պէս մի վայրում, ուր աշխատում են 335 հայ, 360 ուս և 10 թուրք բանւորներ: Յեմշինում խցկած դասակարգային խորթ տարբերը՝ դաշնակ, կուլակ, ըսպիտակ զւարդիական, օգտւելով տեղի կուսկազմակերպութեան և պրոֆիւլութիւնների թուլութիւնից, կարողացել են բաւականին ուժեղ կերպով թթու նացիոնալիզմ սերմանել ուս, հայ, թուրք բանւորների մէջ: Այդ են ապացուցում այն բոլոր կտրիւները, որ այսօր նկատոււմ է Յեմշինում:

«Կուս. և պրոֆկազմակերպութիւններն ընկնելով օպորտունիզմի գերիւժ՝ հաշի չեն առել ազգայնականութեան այն ցայտուն օրինակները, որոնք այսօր գոյութիւն ունեն Յեմշինում, և ոչ մի պայքար չեն մղել ինչպէս մեծապետական, նոյնպէս և տեղական նացիոնալիզմի դէմ:

«Յաճախ, ճաշարաններում ուսները և հայերի իրարից բաժանելով՝ կուռել են իրար հետ: Եղել են դէպքեր, երբ ուսները Հրաժարուել են ջրէլ հայերի հետ բարակներում, պահանջելով առանձնացնել ուսները բարակները. «մենք չենք կարող ապրել հայերի

հետ մի բարակում», «մեզ ամէն տեղ հարածոււմ են, չեն թողնում հանդիստ ապրել»: Թուսներն ու հայերն առօրեայ խօսակցութեան ժամանակ իրար վիրաւորելով մէկը միւսին «այսիննի», «արմենաշկա», «տոխ» և այլ անականներ են տալիս: Քննձ մօտ հայ միջ ուղարկել աշխատանքը», «ես հայերին չեմ վստահում» — յայտարարում է տեխնիկը: Այս թթու նացիոնալիզմը, պէտք է ասել, աւելի ուժեղ կերպով նկատոււմ է տեխնիկական պերսոնալի մի քանիսի մօտ: Դատապարտելին այս բոլորի մէջ այն է, որ տեղական կուսակցական կազմակերպութիւնները բացարձակապէս չեն մղել ոչ մի պայքար ազգայնական տրամադրութիւնների դէմ»: («Պ. Հ.» 1 ապր.):

Պրոֆուրային իշխանութեան տիրապետութեան տասնութիւնրորդ տարւայ մէջ այսպիսի՝ «խայտառակ մեծապետութիւն»...

Մենք սուինք առանձին տնտեսութիւններ, բայց աւելի փայլուն չէ և խորիքային տնտեսութեան ամբողջ պատկերը: «Հայաստանի Կ (բ) Կ.-ի Կենտկոմն արժանապրում է 1931 թւականի առաջին եռամսեակի արդֆինպլանին խոչոր թերակատարումը: Փոխանակ առաջին եռամսեակի համար պլանով նախատեսւած 17 միլիոն ռուբլու ընդհանուր արտադրանքի, վերջինս փաստօրէն կազմել է 12,8 միլիոն ռուբլի, այսինքն՝ պլանի 75 տոկոսը: Միաժամանակ բանւորների թիւի նկատմամբ պլանը գերակատարել է 9,2 տոկոսով, իսկ աշխատանքի արտադրականութեան բարձրացման ծրարգրը կատարել է միայն 68,7 տոկոսով: Իւրաքանչիւր բանւորին ընկած արտադրանքը պլանով նախատեսւած 675 ռուբլու փոխարէն, փաստօրէն կազմել է 464 ռուբլի... Առաջին եռամսեակի պլանը թերակատարել է համարեա ըրոր ձեռնարկութիւններում... արդիւնաբերութեան կարեւորագոյն ճիւղերում զգալի ճեղքանձքներ կան»:

Ըստ արդիւնաբերութեան ճիւղերի «ճեղքանձքները» հետեւեալ տոկոսներն են ցոյց տալիս. բամբակադաիչ գործարաններում կատարւած է ծրարգրի 35,2%, կաշւի գործարանում՝ 37,8%, հանքային և շինարարական նիւթերում՝ 61,4%, պղնձարդիւնաբերութեան մէջ, 72,2%, պահածոյի գործարաններում՝ 73,2%, Անի-Պեմզա՝ 80,5%, կարբիտի գործարան՝ 87,5%, Հիւսուսձեղէն՝ 88,1%:

Պէտք է ասելայնք և այն, որ արտադրութեան ինքնարժէք ծրարգրին էլ չի իրազօրուած և «նոյնիսկ որոշ չափով վատացել է՝ համեմատած նախորդ շրջանի հետ (պղնձարդիւնաբերութիւն, տեկստիլ, կաշւի գործարան և այլն)»: («Պ. Հ.» 16 ապր.):

Եւ այս՝ «հնգամեակի երրորդ վճռական տարւայ սկզբին» — խայտառակութիւն է, չէ՞:

### ԲՈՆՈՒԹԻԻՆՆԵՐԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ

«Իրօջակ»-ի խմբագրութիւնը ստացել է մի բնօրինակ և փաստացի գեղուցում Հայաստանի և հայ ախտարկանների վիճակի մասին: Դուրս ձգելով ահաւանդանքները և տեղեկութիւնները մի մասը, որի հիաստարակաբար ինքնը կարող է վտանգել բոլորիկեան լծի տակ ապրողներին, առաջ եմք բերում հետևեալ հատածը:

հԱՐՒ.

... 1925 թուականից սկսած մի քանի անգամ բանտարկուել և աքսորուել եմ: Նոտել եմ Հայաստանի Ձեկարում, գաւառական բանտում: Տեսել եմ, թէ ինչպէս տարբեր կերպով են վերաբերում բանտարկեալներին հետ չեկիտաները և թէ ինչ բարձր, սպեռնական տրամադրութիւն ունեն կալանաւորները: Առաջին անգամ արտօրուեցի 1926 թ.ին: Երբ Երևանից ուղարկուած էին աքսոր, բանտում մեծ ցոյց կաշաւ. ճանտեր խօսեցինք ու «Մեր Հայրենիք»-ով ճանապարհ ընկանք: Թիֆլիս, Մետեխի բերդում ճանկրկցելի շատ ծանօթներին: Նոյնպէս և Մոսկուայի Բուտիրկա բանտում, ուր մեզ պահեցին 3 ամիս: Երեք ամիս էլ չարչարեցին Սվերդլովսկի բանտում: Այլա՛ մի ամիս Ձեկարինսկի բանտում: Այստեղից՝ Վերինիւրալսկի քաղաքական մեկուսարանը: Ամէջ տեղ գտնուած էի ծանօթ ընկերներ կամ Հայրենակիցներ:

Մեր քաղաքական մեկուսարանի բանտարկեալներին ընդհանուր թիւը Հասնում էր 300 հոգու, որոնք պատկանում էին զանազան կուսակցութեանց կամ անկուսակցական մարդիկ էին: Թէ ինչ դժոխային պայմաններ է մէջ էինք պահուած, կարող էք երեւակայել: Բաւական է ասել՝ բոլորիկեան մեկուսարան:

1928 թ.ին ապտուեցի բանտարկութիւնից արտօրովալում մնալու պայմանով, բայց ինձ յաջողեց անցնել հայրենիք: 1929 թ.ին նորից բանտարկեցի Մոսկուայի Ձեկարի կարգադրութեամբ և անիջապէս փոխադրուեցի Թիֆլիս, Չակչեկայի նկուղը: Այստեղից էլ՝ արտօր Թուսաստանի ներսերը: Ճանապարհին հանդիպեցի բազմաթիւ ծանօթ և անձանօթ հայերի, որոնց նոյնպէս ջշում էին արտօր: Իրոք մէջ էլ տեսնում էի բարձր տրամադրութիւն, կամք, սովորութիւն և քաջութիւն: Ամենքը, ում հետ խօսել եմ, հաւատում էին, որ վերջ պիտի դայ այս կացութեան: Բանտերն ու արտօրակայերը, սահաարակ, իրենց միջազգային հասարակութեամբ, միակ տեղն են, ուր մարդիկ իրար հետ խօսում են ազատ և շին քաշում իրենց գրացմունքներն ու գաղափարները յայտնելուց: Եւ զնայած որ անտեսական դրութիւնը չափազանց անմխիթար է, մարդիկ հիւանդանում են, մեռնում ու խելագարուած են կրած նեղութիւններից, բարոյական մակարդակը բարձր է: Ամենքը իրար օգնում են, իրարու ոչինչ չեն խնայում, ամէն կերպ աշխատում են կրպել միմիանց հետ և կարիքատրներին օգնութեան հասնել նմխապէս ու բարոյապէս: Բանտն ու արտօրովայրը, խորհրդային իշխանութեան ներքոյ, միակ տեղն են, ուր զեռ մնացել է ընկերատրութիւնն ու անձնագրահութիւնը, ուր մարդը զեռ մարդ է և ոչ հաստը ու ընչամոլ գաղան:

Չանազան ժամանակներ բանտերում մեռածներից այս բողէիս յիշում եմ Մուշեղ Դարմանեանին, որ մահացաւ Կազանի բանտում, Արտաշէս Միլլրոյեանին (Թիֆլիսի բանտում):

Աքսորի կենքը անասնել էր: 1929թ. ես նորից յաջողեցրի վերադառնալ հայրենիք, բայց այս անգամ ստիպուած էի աղբիւր փախտուական: Ինձ պէս հարկաւորներ կային Հայաստանի լուսնրում: 1929 թ.ի վերջերին սկսեց ըռի կուկկախուացման խելագարութիւնը, և, իրրե զրա հետևանք, վայրենի րռնութիւններն ու հայածանքները: Մանաւանդ հրէշաւոր էր կուրակաթափութիւնը, այսինքն՝ քիչ-շատ ունեւոր գիւղացիների գէմ մղւած կուրու. գիւղացու ձեռքից խլում էին ամէն ինչ՝ արտ, տաւար, լծկան, գութան, սայլ, տուն և միայն երեք օրւայ ուսուլու հաց տալով՝ ամբողջ ընտանիքով թափում էին վողուց և ջշում արտօր: Ո՛չ ոք իրաւունք ունէր խելցճերին պատուարելու իր յարկի տակ կամ օղնելու, հակառակ զվարում սպառնում էին նոյն վիճակին ենթարկել: Մարտիւր տրերել էր ամէն տեղ: 150-200 հողինոց կոմունիստական զինւած խմբեր պտտում էին զիւղուց և մի հրամանով րոտր գիւղացիներին գրում կողեկուր. անմիջապէս գիւղացիներն ունեցւածքը ամբարւում էր մի տեղ՝ անասուն, ցորեն, ալիւր և այլ ապրանքներ:

Մարտիկ էր մասնւել ամբողջ ժողովուրդը, ոչ միայն կուրակները կամ խորհրային կարգերի անհարպատ տարերը, այլ և բանտրն ու չբաւոր գիւղացիութիւնը: Ժողովուրդը ամէն տեղ յուզեց ու խռուեց. գիւղերնրը րոտր գիւղացիք հաւաքում էին մի տեղ պաշտպանելու համար, ցերեկները բաժանւում էին իրարից: Յերեկը այնքան վտանգ չէր սպառնում. ինչ որ կատարւում էր գիւղուց էր կատարւում: Ժողովուրդը աշխատում էր զինել ինչով որ կարող էր՝ ոչ միայն գէնքով, այլ և խաչերկաթով, եղանով, ձեռքը ընկած երկաթի կտորով:

Ամէն տեղ սաստկացաւ փախտականութիւնը: Ժողովուրդը այս ու այն կողմ էր ընկնում, Դաշակցութիւն էր փնտրում: Դաշակցութիւնը աշխատում էր հանգստացնել ու խաղաղացնել մտքերը, գգուշացնում էր, որ Ձեկայի գոհ չընան և ընդհարումներ չունենան իշխանութեան հետ: Բայց գրգուումը այնքան մեծ էր, որ րոպէ առ րոպէ սպառնում էր պայթիւն:

Շատ չանցած՝ սկսեցին Ջոյնի Ջորի, Դարալագեանի, Նախիջևանի տարերային ապստամբութիւնները: Ժողովուրդը ելեկարականացած՝ օրէցօր սպառում էր խորհրային իշխանութեան տապալման: Տիրում էր տեղային տրամադրութիւն: Տեղ-տեղ կոլտոգ բերող կոմունիստների գէմ գրուր եկան և կանայք, որոնք աղմկուտ ցոյցեր կազմակերպեցին: Այսպէս, Գարիմարիս գիւղում Հայ և թուրք կանայք միացած ծեծեցին չեկիտներին և նրանց ձեռքից խլեցին բանտար-

կեանքներին: Ամբողջ Հայաստանը դարձել էր վառողի շանմարան. մի կայծ բաւական էր, որ ընդհանուր հրդեհ վառւի:

Պորճաբային իշխանութիւնը վախեցաւ և խոճակոթութիւն համարեց նահանջել: Յայտարարեց, որ կառավարութեան հրամանը սխալ է հասկացել, որ կոլիտոգները պէտք է կազմեն յօժար կամբով: Սկսեց կուլիտոգները քայքայում: Հինգ օրւայ մէջ Հայաստանում կուլիտոգ չմնաց: Ժողովուրդը քաջալիրած էր յաղթանակից՝ ուղղակի դուրս էր գալիս կառավարութեան դէմ: Ամէն կողմ սպանուած էին կոմունիստներ: Գիւղերում կոմունիստները զիջելները պահուած էին դադարի տեղերում: Առաջ ժողովուրդն էր փախչում ու պտուտում, հիմա՝ կոմունիստները: Այնպէս էին կիճկել, խեղճացել: Քուում էր, թէ բոլշեիկիստ իշխանութիւն չկայ այլևս:

Այս դրութիւնը տեսց մինչև 1930թ. դարունը, երբ կառավարութիւնը սկսեց սիրաշահել ժողովրդին, հաստատցնել, թէ սխալ ալլա չէ կրկին: Նոյն իսկ մի շարք կոմունիստ գործիչներ բանտարկեցին «քեալադէոլոգիական» համար: Յուցադրական դատեր եղան: Փախուսականներին ներում չտրւեց: Կուլակ տնտեսութիւնների դէմ տրւած արդելքը վերաբերին. վերադարձրին յափշտակածից ինչ որ մնացել էր: Այսպիսով խաբեցին ժողովրդին, դժգոհներն ուժերը ջլատեցին և ժամանակաւորապէս հանգստացրին:

Մտքերը որոշ չափով հանգստացնելուց յետոյ, բոլշեիկները դիմեցին մաքրագործման քաղաքականութեան. կասկածելի տարրերին ձերբակալել և աքսորել: Այդ նպատակով գիւղերն ուղարկում էին պրոլետարտորներ, որոնք դաշնակցական կեղծ վկայականներով աշխատում էին դաշնակցական կազմակերպութիւններ առաջ բերել և ապա ձերբակալութիւններ կատարել: Զանազան դաւաճանների միջոցով կեղծ կոմիտէներ էին կազմում, ժողովրդի մէջ արտասահմանի գրակառութիւն էին տարածում, նոյն իսկ գրած ու գէնք էին տալիս, թէ՛ Դաշնակցութիւնն է ուղարկել արտասահմանից ապստամբութիւն կազմակերպելու համար: Այս խաղերը, սակայն, մեծ յաջողութիւն չունեցան. փորձած ժողովուրդը չէր հաւատում: Շուտով յայտնի դարձան բոլոր պրոլետարտները, և Ձեկայի դժմակը պատուեց ամենքի աչքի առջև:

Ես շարժումներին մասնակցութիւն չունէի: Ապրում էի ինձ համար փախսական: Երբ այլևս վիճակ դար-

ձաւ անտանելի, մեծ ցաւով հեռացայ Հայաստանից: Իմ յետևը թողի միայն լաց ու թշւառութիւն: Ժողովուրդը առեւտրութեամբ էր լեցած դէպի խորհրդային իշխանութիւնը և անհամբեր սպասում էր նրա տապալման: Ամենքը սպրում էին տանջանքների մէջ, օրւայ հացի ու հազնելիքի, կենսական տարրական պիտոյքների կարոտ: Եղած ապասնքը տրուում էր միայն կոմունիստներին և կոլիտոգի անդամներին: Այնքան ծանր էր դրութիւնը, որ մարդիկ երանի էին տալիս համախառն իշխանութեան:

Կոմունիստները ժողովրդի այս տրամադրութիւնը դիտէին, այդ պատճառով ամէն կերպ աշխատում էին նրան զինաթափել, պարագլուխներին բանտարկել և աքսորել, պտասկտում ձգել մէջքը, տկարացնել: Հայաստանի ժողովուրդը, մանաւանդ դաշտաբնակ մասը բոլորովին զինաթափւած է: Նոյնը կարելի չէ ասել թուրքերի մասին. Հայաստանի թուրք ժողովուրդը զինւած է: Կառավարութիւնը քայքայեց ապստամբ էր դրում թուրքերի զինման վրա: Եւ, սահասարակ, հայիւրի հետ համեմատում՝ թուրքերը աւելի նպաստաւոր դրութեան մէջ են սպրում և վայելում են որոշ արտոնութիւններ: Պատճառը՝ թուրք-բոլշեիկիստ բարեկամութիւնն է: Սահմանամերձ դաւանները վխտում են թիւրքական գործակալներով, որոնք կազմակերպական աշխատանք են կատարում և զինում են Հայաստանի ու Կովկասի մահմեդականներին: Նախիջևանի վրայով գէնք է փոխադրում դէպի Հայաստանի թրքաբնակ մասերը և Աղբբէյլան: Այսպէս, բոլշեիկ կառավարութիւնը մի քանի անգամ բռնել է Բաշքէնդի վրայով անցկացուող գէնքեր: Նախիջևանի թուրք կոմունիստներից շատերը օգնում և համախորհուրդ գործում են Մուսթաֆա Քեմալի գործակալների հետ:

Բնորոշ է հետեւեալ պարագան: Չնչին քայքայութեամբ, Հայաստանի ամբողջ ժողովուրդը, բոլոր խաւերը միամտան վերաբերում ունին դէպի խորհրդային իշխանութիւնը: Այսպէս, Ջղիճի և Դարալագինայի ապստամբներին ճնշելու համար առաջ տարին հայկական զորքեր, բայց չուտով յետ բերին, որովհետև հայ զինուորները մերժել էին կրակել հայ զւղղակիների վրա: Յետոյ, կուբ դաշտ հանցելին ոտա ցորաստեր և վտանգելի հայ կոմունիստներ: Հայ գորսախարի մէջ էլ, թէև զինուորի վիճակը համեմատաբար աւելի լաւ է, դժգոհութիւնը շատ մեծ է. ժողովրդի թշւառութիւնը անցնում է բանակում գտնուող երիտասարդութեանը:

### Լ Ո Ւ Ե Ե Բ

Հայաստանի մի գիւղից ստացած մի նամակից քաղում ենք հետեւեալ կտորը: ԽՍԲ.

... 17 ապրիլ, 1931.

... Այս տարի չտեսնած միս մթերում կատարեց, բոլոր ձայնագրութիւնների անասունները գրեթէ վերցւած են: Բացի գրանից, ամէն գիւղում դուրս են բերած ուռճացած անտեսութիւններ: Հէնց իմ սպրած գիւղում չորս տուն պարտադիր կերպով մասնակցելու են միս մթերման՝ վճարելով իրենց անասունների կերպի ակրկին: Բացի դրանից, թէ կուլակային և թէ ուռճացած անտեսութիւնները իրենց բուր-

### Ե Բ Կ Ի Թ Յ

գը, իւղն ու պանիրը պարտադիր պիտի վաճառեն պետութեան: Այս երկրում ամէն ինչ փոխւած է: Ամէն իրաւունք կոլիտոգներին է: Պետութիւնը ամէն բանով նրանց է օգնում. բացի կոօպերատիւց մասնաւոր շուկայում բան չի ճարում, իսկ կոօպերատիւր գնում է նոյնպէս դասակարգային գծով. տալիս է նրան, ով որ իրեն է հետևում (կոլիտոգներին):

Մարտ 24 նամակից.— Թահսիլարները շարունակում են գիւղացիների ունեցածը առնել իր ձեռքից: Մտացու ոչխարն ու տուարը հաւաքում տանում են: Փախսականների ամբողջ ստացւածքը դրուել են:

# Ն. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆԷՆ

## ՍԵՒ-ՔԱՐԵՑԻ ՍԱՔՕԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆԸ

VI

Նոյեմբեր 15-ին ինձ նորից տարին դատարան: Այժմ ես բաւական ծանօթ էի քերթերի հետ. ծեծուելուց չէի վախենում: Գնացիք մեախեամբն (որտեղ վճիռ են տալիս):

Երբ որ ես ներս մտայ, բոլոր ոստիկաններին հեռացրին՝ յայտնելով, թէ քննութիւնը ծածուկ պիտի լինի: Ճապա րէյսիսն (նախադահ) մի կարճահասակ, սպիտակ միրուքով մարդ էր, չալ աչքերով: Սրա դէմքը տեսնելով՝ կարծեցի, թէ մի սև օձի պատահեցի: Նախագահի երկու կողմերում նստել էին չորս անդամներ, որոնցից երկուքը հայեր էին: Այդ 4 անդամի ձայները տարբեր էին. մէկ հայի և մէկ թիւրքի ձայնը ջուռնա էր (մէկ օրից սկսած մինչև 6 ամիս կարող էին պատիժ տալ), իսկ միևս երկուսինը ջուռնայաք էր (մէկ տարուց սկսած, մինչև 101 տարի):

Երբ ամենքը նստեցին, ինձ էլ հրամայեցին նըստել: Ապա նախագահը դարձաւ ինձ—

— Քիւրքճա բիլ՞ բան:

«Ո՛չ, չգիտեմ», պատասխանեցի ես:

Կանչեցին Մէհմէդ էֆ.—ին, որը նորից սկսեց թարգմանի պաշտոն կատարել: Սկսեց քննութիւնը:

Նախագահը ասաց, թէ՛ ջանի որ քննիչի մօտ չեմ քննուել, այժմ պարտաւոր եմ քննուել: Ես պատասխանեցի, թէ՛ առանց հիւպատոսի ներկայութեան չեմ կարող ոչինչ պատասխանել: Նախագահը դարձաւ դատարարին.

— Ի՞նչ անենք, ստիպւած ենք ուղարկել Կարին հիւպատոսի ներկայութեան քննելու համար:

Դատարարը պատասխանեց, թէ՛ վերջերս հրաման եկած է ձերբակալւածներին միայն 9 ժամ հեռաւորութեան վրա հիւպատոսին տանել, իսկ այստեղից մինչև Վան կամ Կարին 35 ժամայ ճանապարհ է: Նախագահը դարձաւ ինձ, թէ՛

— Լսեցի՞ր ինչ ասաց դատարար էֆէնդին: Դէ՛, պատասխանիր՝ վերջնադճալ:

Ես կրկնեցի, թէ՛ չեմ կարող ոչ մի պատասխան տալ առանց հիւպատոսի ներկայութեան:

Դատարարը երրորդ անգամ ասաց.

— Քե՛զ համար աւելի լաւ է քննուել: Յետոյ չասեն՝, թէ՛ ինձ չհասկացրին:

Ես դարձաւ հրահարեցի:

Այն ժամանակ նրանք դնացին խորհրդակցական սենեակը և մի ժամից յետոյ դուրս գալով՝ կարդացին դատավճիռը: Ինձ, որպէս փախտականի և կասկածելի մարդու՝ 101 տարւայ բանտարկութիւն, իսկ Միւթարին, ինձ առաջնորդելու համար՝ 5 տարւայ:

Երբ թարգմանը հասկացրեց ինձ պատիժս, էլ ինչե՛ր չանցան մտքովս: Ապուշ կորած նայում էի դատաւորների երեսը:

Ընթերցումը վերջացնելուց յետոյ ինձ վերադարձրին բանտ:

Աղաս ինձ տեսաւ թէ՛ չէ՛ հարցրեց, թէ՛ ի՞նչ վճիռ կայացրին: Ասացի, թէ՛ 101 տարւայ բանտարկութիւն վճուեցին: Պէտք էր տեսնել, թէ՛ որքան ցաւեց մարդը ու սկսեց խրատել. «Ասուած ողորմած է, մի՛ վախենար, ջանի ես այստեղ եմ, ջեղ եղորս պէս կը պահենք»:

Այդ օրւանից յետոյ, ես համարեաւ 10 օր ոչինչ չկերայ ու ոչ ոքի հետ չխօսեցի, բացի իմ աղայից: Սա էլ, դժբախտաբար, թիւրքերէն չգիտէր, ես էլ քրդերէն չգիտէի. իրար մի կերպ հասկացնում էինք: Դրութիւնս վատ էր և նրանով, որ ոչ մի կերպ չէի կարողանում տեղեկութիւն տալ Աղբիւրին կամ Գուրգէնին:

Մի ելք գտնելու համար, սկսեցի ծանօթանալ բանտարկեալ հայերի և բանտի պաշտօնականներէ հետ: Ոստիկան Մուրադի հետ շատ մտերմացայ:

Մի օր Մուրադը եկաւ մի ջիջ հարբած ու սկսեց ինձ հետ խօսել. «Պ. Մարգիս, այսքան ժամանակ է այստեղ ես և ձեր կողմերից լուր չտասցաք. մի՛ թէ՛ եղբայր կամ բարեկամ չունենաք: Ես դաջաւած պատասխանեցի, թէ՛ «Նոյաբայ էլ ունեմ, բարեկամ էլ, բայց այստեղ մտերիմ մէկը չունեմ, որ նրա միջոցով իմացնեմ իմ բանտարկեալ լինելս, որպէսզի ինձ ազատեն»: Մուրադը ասաց, թէ՛ փոստով կարելի է յայտնել, բայց եթէ ես բարեկամութիւն ունեմ վաճառականների կամ «վերինների»\*) հետ, ինքը յարմարութիւն կը գտնէ: Ասաց ու հեռացաւ:

Այդ գիշեր հոգիս նորից խռոված էր: Մտածում էի, թէ՛ եթէ դրոյց օգնութիւն չհասնի, բոլորովին կորած եմ: Եթէ ամիս է բանտում էի, բայց՝ ոչ մի տեղից ոչ մի օգնութիւն: Ինձ վճիռ տալուց յետոյ, բանտարկեալները և դրսի մարդիկ հաւատացնում էին, որ 2-3 ամսից յետոյ ինձ Կարին կը փոխադրեն, որովհետև պատահել էր, որ ցինկուրութիւնից փախած ու Մուշ եկած մի ջանի ուռուստանցիներ, Կարին հիւպատոսի պահանջով, տուրք-յանձնել էին ռուս հիւպատոսին: Իմ վերաբերմամբ, սակայն, այդպիսի բան չպատահեց: Այդ պատճառով, բանտարկեալները այն համոզումը կազմեցին, թէ՛ ես մի անտէր-անտերական

\*) «վերիններ» անւանում էին տեղական յեղափոխականներին՝ Աղբիւրին, Գուրգէնին և քնկերներին:

մարդ եմ: Բանտարկեալներէր այս կարծիքը աւելի էր ազդում իմ վրա. ես շարաքննեցի որչ ուսում էի, ոչ խօսում. օրս անցնում էր տխուր-տրտում:

Բանտարկեալ հայերը հետս չէին կարողանում խօսել՝ վախենալով պաշտօնեաներից. մի անգամ նկատեցին, որ երկուստարդ սասուցիի վարդապետ խօսում է հետս, և խեղճ տղին 50 դրամի հարած տունն է երեք ամիս էլ չլքեալակալ պահեցին: Ջերբանցի աղան էր միայն, որ միխթարում էր ինձ և խորհուրդներ տալիս:

Մի գիշեր, ժամը մէկին, նստած էի անըզուն խտրի վրա և մտածում էի, թէ՛ մի՞թէ մերոնք այսքան ժամանակ է չիմացան իմ ուր լինելու, կամ մի՞թէ մտքերովը չի անցնում իմացնել եղբայրներին ու մօրս սովորեցնել, թէ ի՞նչ միջոցի պէտք է զիմի, որ ոռւսաց կառավարութիւնը ազատ է ինձ այս սոսկալի դրութիւնից: Երբեմն ասում էի, թէ՛, երևի, յարմարութիւն չկայ. կամ, գուցէ, մոռացե՞լ են իրենց Սաքօին: Վերջը ինձ օխրտ էի տալիս. ո՛չ, չպէտք է յուսահատուել..

Մյս մտածումները մէջ էի, մէկ էլ, յանկարծ, դուռը կամաց հրում ու թրխկացնում են: Չորս կողմս նայեցի. բանտարկեալները պարկած՝ խռմփացնում են: Թրխկոցը կրկնեց: Կամա՛ց տեղիցս ելայ ու մօտեցայ դռան վերև դռնաղ ծակին, որտեղից գիշեր ժամանակ պահապանները ներս էին նստում: Մակի առջև կանգնած էր Մուրադը, որ ցածր ձայնով ասաց ինձ. «Քաշխիչս պատրաստի՛ր, բարի լուր եմ բերել»: Ես դարմացայ. ի՞նչ բարի լուր, ո՞րտեղից: Գուցէ մերո՞նք իմացել են տեղս և յարմարութիւն գտել ազատուելու:

Մուրադը որևէ կասկած չլարուցանելու համար՝ բարձր ձայնով վրա բերեց. «Գիտենալով, որ ձեր կողմերի հացերին կարօտցած կը լինես, մի քիչ բերի քեզ համար»: Ու կապուցը յանձնելով՝ ցածր ձայնով ասաց՝ «Պատասխանը կը սպասեմ»:

Կապուցը ստան՝ շտապով վերադարձայ տեղս ու սկսեցի բանալ: Եւ, իրաւ, մէջը հաց ու պանիր կար: Հացի միջից դտայ մի տոմսակ: Ուրախութիւնիցս ինձ կրքորի և, առանց գզուշանալու, բացի ու ստորադրութիւնը կարդացի. Աղբիւրն աւ Գուրգէնն էին: Իսկոյն չորս կողմս նայեցի, թէ՛ մի գուցէ մէկը լրտեսում է և համոզուելով, որ ամենքը քնած են, սկսեցի կարգալ: Գրում էին.

«Միբելի Անմկը: Ահաւասիկ մի քանի օր է, որ ելած ենք տեղս: Պոս մասին դրած ենք Մեծ Բաղաբ: Գրաբերի վրա վստահ եղիր: Տիգրանը\*» մեզ մօտ է: Գրիբ մի քանի հասցնեցին: Աղբիւր և Գուրգէն: Բարձրաւանդակ, 16 դեկտեմբերի»:

Տոմսակը մի քանի անգամ կարդալուց յետոյ, ուղեւորեցի որ վեր կացրի Մխթարին: Մա գարթնեց դէգոն ու ստորնշալով: Այդ միջոցին արթնացաւ և մեր աղան, որ ինձ տեսնելով արթուն՝ գթահարած ասաց. «Ջանբմ, դեռ արթո՞ն ես, մի՛ վախենար, քնի՛ր»:

\*) Երբ յուլիս 13-ին Ջազայիր աղան մեզ բերեց Մաշ, բանտարկելու համար, նայմ գիշերը Տիգրանը գնում է Տալարիկի, տարեանդակ է ուղարկում Սայրաձոր (Այսլաթ) Աղբիւրի և Գուրգէնի մօտ, և արմգ գալիս են Տալարիկ:

Թէև ներքնայէս շատ ուրախ էի, բայց ինձ տխուր էի ձևացնում: Աղան նստելով՝ կանչեց Մխթարին. «Տղա՛, Մխօ, դու քնած ես»: «Այո՛ր, աղա՛, քնած եմ», պատասխանեց Մխթարը: Աղան ասաց՝ «Հա՛, անհաւատ, իսկի չի վախենում», պարկեց ու քնեց:

Ես յայտնեցի Մխթարին, թէ տղաներից տոմսակ ստացայ, բայց թուղթ չունեմ, որ պատասխանեմ. ի՞նչ անենք: Մխթարը խորհուրդ տուց խնդրել աղաւթց, նա չի մերժի ու բերել կը տայ: Գործը մնաց առաւօտեան: Պարկեցիքը ու մի լաւ քնեցիքը: Յոյսը՝ կեսանք է տալիս մարդկանց...

Առաւօտեան աղաւթին յայտնեցի, որ թուղթ է հարկաւոր տուն նամակ գրելու և փող սուբլու համար: Աղան խիցոյն բերել տուց մի քանի թերթի թուղթ, և այնուհետև իմ դրութիւնը սկսեց լաւանալ. միշտ յարաբերութեան մէջ էի մերոնց հետ:

1899թ. յունւար 15-ին, երեկոյեան ժամը 10-ին, Նադր օմբաշին եկաւ աղայի մօտ և ասաց. «Մարդիս էֆէնդիի մուժտես տուր»: Աղան իմ փոխարէն ասաց. «Ղարիբ տղայ է, մեղք է. եթէ մի լուր բերել ես, չուտով ասա»: Տասնապետը հանելով ծոցից մի նամակ՝ տուց ինձ և ասաց, թէ՛ փող էլ է եկել, որ վաղը կը բերէ: Իսկոյն բացի ու սկսեցի կարգալ. «Սաքօ ջան, ես ջո շղթայած ջանիղ մտտաղ: Չվախենաս՝ խնդրք ենք տել մեր նահանգապետին և Կարնոյ ոռուսաց կոնսուլին, շուտով կազատեն քեզ: Ուղարկում ենք երեք տաճկաց լիբա. եթէ ձեռքը հասնի, իմաց տուր մեզ: Ընդունիր ջերմ համբարներս: Քո ջոյր Մարօ\*» և եղբայր Աւաքել. Թիֆլիս»:

Աչքերիս չէի հաւատում: Մի քանի անգամ կարդացի, և ուրախութիւնս չափ ու սահման չունէր: Ուրեմն, մերոնք խնդրք են տել կառավարութեան ինձ ազատելու համար: Էլ չէի վախենում. անշուշտ, թիւրքերն էլ էին կարողացել նամակը և լսել նահանգապետի և հիւպատոսի անունները...

Այլևս իմ զէֆնի զէֆ չէր հասնի: Այդ օրը զինուորներից մի սազ գնեցի և սկսեցի անդալաբ ածնել ու երգել: Էլ չէի վախենում. կառավարութիւնն էլ, ժողովուրդն էլ լսել էին, որ ես պիտի ազատեմ ոռուսաց ձեռքով:

Իմ սազը աղային շատ դուր եկաւ: Երբ տիրում էինք, առնում էի սազը և այնպիսի ուրախութիւն էինք սարքում, որ մոռանում էինք մեր նեղութիւնը:

Այդ օրերը փաշտն ինձ իր մօտ կանչեց և յայտնեց, թէ հիւպատոսը ինձ համար աշխատում է և մինչև մայիս 25-ը ինձ պէտք է փոխադրել տայ Կարին և կամ ինքը պիտի գայ Կարին, ներկայ գտնուելու համար իմ քննութեան, որովհետև մեր թագաւորը չի ընդունում մեր կայացրած վճիռը: Եւ նորից ասաց, թէ՛ «Արի՛, ճիշտը խոտուտանիք, որ քեզ չուտով Կարին ուղարկեմ, համ դու կազատես, հա՛մ ես»: Ես պատասխանեցի, «էֆէնդի՛, ես ոչինչ չգիտեմ»:

\*) Բայր Մարոս հայրենակիցն է: Ես Թիֆլիս եկած ժամանակս ապրում էի նրա մօտ: Իմ երկիր գնալու ժամանակ Մարոս միշտ աշխատում էր արգելել, պատուա բերելով, թէ՛ երազներս յայտը չեն մեկնում հաճապարկորուքեանց վերաբերեալ: Մաքօ:

Նորից ինձ վերադարձրին բանտ: Բանտարկեալները սկսեցին շարք ու փորձ անել, թէ ինչո՞ւ կանչեցին ինձ և ո՞րը կուզարկեն: Ես պատմեցի եղելութիւնը:

Նամակ էի գրում մեր տունը և պատասխան ստանում: Նմանապէս, Մուրադը միջոցով, շարունակ նամակներ էի ուղարկում Բարձրաւանդակ:

Այդ ժամանակ էր, որ րոնեցին մեր ընկեր Դժոխքին, որը մի ամսի չափ մնաց բանտում: Մենք երկար, նստած, խօսում էինք իրար հետ ներկայի և ապագայ անկիւնների մասին: Դժոխքը արդարացաւ և կապուտեց բանտից: Արտասուքը աչքերին համրուեց ինձ ու դուրս եկաւ բանտից: Ես շատ ուրախ էի, որ տեսայ մի ընկերոջ, և հասկացանք իրար:

Փետրարի 20-ին Գուրգէնից և Սևորբից Տաւորիկից նամակ ստացայ: Նրանք գրում էին, թէ Տիգրանին երկու ընկերներով ուղարկել են Ջրաբերդ\*, որոշ տեղեկութիւններով ու ծրագրով անկիւնների մասին: Եւ աւելացնում էին, որ Դժոխքը բանտից ապաուելուց յետոյ պահպանողական զիբք է բռնել: Գուրգէնը յայտնում էր, որ մտալիր է Դաշտն իջնել և մի խումբ կարճակերպիչով՝ գնալ Յրոնք գիւղը «Ղառողի ծուխը ցոյց տալու համար, որպէսզի այս ամառ կարողանանք մեր բազմաթիւ պատրաստութիւնները տեսնել, մինչև Ռուսաբայէն մերձից գալը»:

Ես պատասխանեցի. «Սրբելի ընկերներ՛ր, Ստանալով ձեր նամակը՝ շատ ուրախացայ: Աւելի լաւ կը լինէր, որ Տիգրանի պէս մի ոյժ Ջրաբերդ շուղարկէիք, որովհետև ճանապարհին հազար ու մի վատնից կայ: Ձեր գրածները կարելի էր փոտով ուղարկել: Գալով Գուրգէնի Դաշտ իջնելու և իսխտ հակառակ եմ, որովհետև բաւական ծանօթ եմ տեղական պայմաններին. մի հասարակ դէպք բաւական է, որպէսզի անմիջապէս կտաւաբութեան յայտնեն, մանաւանդ որ ամէն մի հայ գիւղում կան զաղտնի խաֆիաներ\*\*): Աւելի լաւ կը լինէր, եթէ ձեր բոլոր կարգադրութիւնները կատարէիք տեղական խմբերի միջոցով»: Ձեր Անմեղ: Մշոյ բանտ:

Այդ ձեռն ես ծանօթացայ բանտարկեալ քերք աչքի ընկնող մարդկանց հետ: Դրանք մէջ էր Սասունցի Դաղաւալի Ալին, որ գաղափարուած էր 101 տարւան: Միջանառակ, բարակ կամուճակով մի երիտասարդ էր: Լաւ երգում էր քրդական երգեր: Մի անգամ ինձ հրապիրից իր մօտ: Ես սապ էի անում, իսկ նա երգում էր: Նրբէք և Սասնոյ-Տաւորիկի երգը: Ես զբի առի ինձ հասկանալի մի քանի բառեր:

Պատերազմի ժամանակ քրդերը կանգնած են լինում Գալէ-Գուգանի մօտ, մի փոքրիկ բլրի վրա: Ենթիկ և Սէմալ գիւղերի հայերը ամբասնում են բլուրների վրա և սկսում են երգել քրդերէն ու երգով իրար հասկացնել իրենց նպատակը: Երբք մէջ յիշում է Սեմալոյի ոչն Գրգօի քաղութիւնն ու հարստութիւնը: Քիւրդերի հարամանատար բայակցի ցեղապետ Ամօ բէքը երգով ա-

սում է. «Գրօ՛, Գրօ՛, լաօ, դու չէ՞ զանի թվինդ չէի, շուր չէի. դու պարնէն թղթիս, տատիտայ Հատէ ժամէ, Փլա լի՛ի, կաւկա չի՞նք»: (Գրգօ՛, Գրգօ՛, տղա՛յ, դու ի՞նչ գիտես թէ ինչ է հրացանն ու թուրը. վերցրո՛ւ համբիշը և գնա՛ եկեղեցի: Հայտ ի՞նչ է, պատերազմը ի՞նչ է): Գրգօն պատասխանում է. «Այ Գրգօ՛ւր, Գրգօ՛ւր, բարիտա կախօ՛ւր, լվրա բամամ Փարանէ շուխուլէտա չի՛ի լվրա շերետա վալլատի Ծամ՝, Հատէ Ծամ» (Ես Գրգօն եմ, Գրգօն, ջո հօրեղարայր՝). այս ամողըը Հայաստան է: այստեղ ի՞նչ գործ ունես, գնա ջո երկիրը Ծամ): Այսպէս երգելով՝ սկսում են շարժւել՝ առաջ մեզմ, յետոյ կամաց-կամաց տաքանալով՝ խառնում են իրար, և կրիւր ընկնում է:

Յետոյ պատմեց իր մասին: Երբ իրինք լսում են, որ հայերին թալանում են, մօտ հարիւր մարդ հաւաքած՝ գնում են թալանից բաժին բերելու: «Ճրբ հասանք Տաւորիկ, տեսանք, որ ո՛չ մի բան չկայ: Մեր ընկերներից մէկը ասաց, թէ հայերը խելօք են և իրենց թանկագին իրերը թազցրած կը լինեն լեռնիւրում ու անտառներում և մեղանից բաժանելով՝ գնաց մօտակայ անտառ: Այնտե՛ղ, յանկարծ, խշխշոցի ձայն է լսում և կարծելով, թէ հայերն են, որ իրենց իրերն են թազցնում, հեռանալով ամբասնում է: Նա մտածում է նոյնպէս, որ դա հայ աղջիկի պիտի լինի, որին սարը չեն տարել՝ վախենալով, որ քերք կընկնի և այժմ քերքերին տեսնելով՝ թազնում է: Ու շտապում է դէպի խշխշոցը և, յանկարծ, իր դէմն է դուրս գալիս մի անարկու արջ իր թոթովներով: Արջը յարձակում է քերքի վրա, կրծոտում է նրա երեսը և կտրում վիզը:

«Մի քանի ժամ անցնելուց յետոյ, կասկածեցինք, թէ մի գուցէ շատ է հեռացել, ու հայերը նրան սպանել են: Սկսեցինք որոնել: Եւ հետքով գնալով՝ դասանք նրա յուշտուած դիակը: Արջը մեկ տեսնելով՝ փախաւ: Դիակը վերցրին ու հեռացանք՝ առելով, թէ խելճ հայերը մնացել են անօգնական, ուստի Ասածու հարամանով արջերն են օգնութեան հասնում: Ու հարամ համարելով հայերի աւարը՝ վերադարձանք մեր տեղերը»:

Ապրիլ ամիսն էր, երբ նորից նամակ ստացայ Գուրգէնից: Նա գրում էր. «Սրբելի Անմեղ. Ձնայելով որ դու հակառակ ես իմ դաշտ իջնելուն, բայց ես իջայ: Ի՞նչ արած, եթէ դու լինէիր իմ տեղը, անպատճառ դու էլ այնպէս կանէիր, ինչպէս որ ես: Այս գիւրք պաւհով հասանք տեղս: Քիչ հանգստանալուց յետոյ, մեզ մօտ եկաւ տեղիս յայտնի գործիչ Ռուբէնը\*\*): Նա միւս օրը մեզ տեղափոխեց միւս թաղը՝ անյարմար համարելով այստեղ մնալը: Վաղը պիտի կազմենք տեղական կոմիտէ: Իսկ միւս օրը գնալու եմ Յրոնք գիւղը: Գուրգէն: Մուշ»:

Նամակի պարունակութիւնը իմ վրա վառ տպաւորութիւն արաւ և րոպէ առ րոպէ սպասում էի մի

\*) Ջրաբերդ — Կարս: Հ. Յ. Դ. Ջրաբերդի կենտրոնական Կոմիտէն:

\*\*) Վերջերս տանկիները հայ գիւղերում դրին խափիաներ, որպէսզի հետևեն և քան-փիլալայինքի երկալու մասին իսկոյն իմացնեն կառավարութեան:

\*) Քիւրդի համար ամենամագաւաքեր բանն է, երբ անհատաւ հայը նրան առում է զես քս հօրեղարայրն եմ:

\*\*) Մշոյ Աղջան գիւղացի, որ ֆահատակեցաւ Գուրգէնի եետ միամին Յրոնք գիւղում:



վատ զէպզել: Վճռեցի նամակին պատասխանել, բայց Մուրադը ինձ ասաց, որ այս գիշեր Գուրգէնը ետք՝ հոգով, կաթոլիկ Նորաշէն գիւղի վրայով, մտնում է ծրնոք:

Փետրւար 20-ին, Տիգրանը\*) երկու ընկերներով գնում է ծրնոք, որպէսզի Խնուտի վրայով անցնի Զրաբերդ: Թիւրք խաֆիաները ծրնոք գիւղում նկատում են Տիգրանին և շտապում են Բաղէշ, կուսակալի մօտ: Վերջինս ուղարկում է ոստիկանապետ Ալայի-բէգ Իգար էֆ. և մշեցի Դալիբ էֆ., որը այդ ժամանակ Բաղէշ էր եկել բողոքելու համար Մուշի միւթէսարիՓ Մուսթաֆա փաշայի դէմ: Ու նոյն ժամանակ Մուշից 200 զինուոր էր փոխադրուած Մանազկերտ: Հակառակի պէս, սրանք էլ նոյն օրը իջնանում են ծրնոք գիւղում:

Մայիս մէկի առաւօտեան, ժամը 10-ին, Ալայի բէգը և Դալիբ էֆ. Ստանեակ ձիւուորներով իջնանում են ծրնոքի ոչխար տանը: Ռէս Սլօն շատ մօտ էր Ալայի բէգին, ուստի վերջինս նրան մի կողմ է կանչում և պահանջում է, որ ջանփիւղայիների տեղը յայտնէ իրեն: Ռէս Սլօն մի ժամ ժամանակ է պահանջում, գնում է եկեղեցու մօտ, կանչում է ոչխարային, տէր Մուշեղին և մի քանի աղեցիկ անուրիկներ՝ խորհրդակցելու համար, թէ ինչպէ՞ս տանեն դործը: Այդ միջոցին դալիբ է մարազի տէրը՝ Ռիօն և ասում է, թէ՛ «Տղերքը մեր մարազումն են, այնպէս վարենք, որ չխուզարկեն»: Ռէս Սլօն առաջ կարծում էր, թէ գիւղում մարդ չկայ, այդ պատճառով էլ մտածում էր, թէ կը հաւաքէ մի քանի լիբա, որից ինքն էլ բաժին կունենայ: Բայց երբ լսում է, որ տղերքը մարազումն են և, մտածանող, որ Ալայի բէգն էլ երան արձաթէ ջաննայն է խտացել, իսկոյն գնում և յայտնում է Փրոյալիների տեղը և իր մեծ որդի Ստեփանին էլ ուղեցոյց տալով՝ ուղարկում է մարազ:

Ալայի բէգը կանչում է Ռիօնի և ասում. «Գնա՛, հիւրերիդ ասա, որ արդէն մեր ձեռքումն են և թող չփորձեն դիմադրել: Եթէ անձնատուր լինեն, Մարգարէի սուրբ գերեզմանով և Սուլթանի զինով խոտանում են, որ ձեռքից եկածին չափով կաշխատեմ ձեզ համար ներումն ձեռք բերել»: Ռիօն գնում է տղերանց մօտ և տեսնում է, որ ճանապարհի յղանակներինց այնպէս են քնել, որ կարծես անմեղ երեսաներ լինեն, որոնք ծեծ ուտելուց յետո՛ւ պարկել քնել են: Ռիօն ասում է, թէ՛ «Արտասուրը աչքերիս մօտեցայ Գուրգէնին և կամաց ասացի. «Պարո՛ն»: Թէպէտ այդ բոպէնի պահպանը չէր թողնում որ արթնացնեն: Գուրգէնը իսկոյն վեր կացաւ և ասաց. «Ի՛նչ կայ. խէր լինի»: Ես հեկեկալով պատասխանեցի. «Աստուած գրել է մեր գլխի խէրը. պաշարած է»: Ալայի բէգը ասում է՝ թո՛ղ անձնատուր լինեն»: Այս լսեց թէ չէ, շտապով հաւաքեց գէնքերը և կանչեց ընկերներին. «Տղերք, մինչև հիմա գահաւս տարաք՝ «կրիւ չկայ, կրիւ չկայ», ասա ձեզ և կրիւ. վեր կացէ՛ք»: Եւ դառնալով ինձ ասաց, «Գնա՛, ասա Ալայի բէգին, որ մենք արգէն ցանկանում էինք իրան տեսնել կուռի մէջ և ոչ թէ

ձեռներս կապած»: Ծնկներս դողողալով դուրս եկայ մարազից: Երբ Ալայի բէգը ինձ տեսաւ, շտապով մօտըս եկաւ և ասաց. «Ի՛նչ խաբար»: Ես պատասխանեցի, թէ չեն համաձայնում: Ալայի բէգը գոյնը նետեց և ասաց Դալիբ էֆ.-ին. «Պէտք է լուր տալ միւթէսարիՓին»: Դալիբ էֆ. անձնական թշնամութիւն ունէր միւթէսարիՓի դէմ, ուստի հակառակեց և ասաց, թէ՛ «Մենք եկել ենք կուսակալի կողմից, դրա համար էլ անհաւատներին պէտք է ողջ-ողջ բռնել ու տանել կուսակալին»: Եւ հրամայեց զօրքին կրակել զէպզի մարազի դուռը, որտեղից սկսեց կատաղի գնդակահարութիւն:

Այդ օրը մի մանրալճառ չարչի, Միշի երկու արկղ նաւթ առած, տանում էր գիւղերում ծախելու և զըտնուում էր ծրնոքում: Դալիբ էֆ. նրան տեսնելով՝ հրամայում է նաւթի արկղները բերել իր մօտ: Իերում են: Հրամայում է բարձրանալ տանիքը, փորել հողը և բանալ փայտը, որպէսզի նաւթը լեցնելով վրան՝ վառեն ու մարազի մէջ դռնաղեներին դուրս հանեն: Երբ փայտը բացուում է, Դալիբ էֆ. ինքը ստնում է նաւթը և ուզում է բարձրանալ տանիք: Ռէս Սլօն փորձում է արգելել, բայց Դալիբ էֆ. բարկացած՝ քաշում է մտրակը և հայհոյելով ասում է. «Մեր թագաւորի համար բոլոր էսլամները ջանփիւղայի պէտք է դառնան», և ուրջին է հրամայում տանիքը բարձրանալ: Հէնց այդ պոպէին ներսից սկսեցին հրացան արձակել, և հերոս Դալիբը զլրբում է դեմին: Ռէս Սլօն սարսափահար՝ վերցնում է կիսամեռ Դալիբին և տանում է իր սենեակը: Ալայի բէգը իսկոյն մարդ է ուղարկում Մուշ միւթէսարիՓի մօտ, որտեղից էլ լուրը հասաւ մեզ:

Մէկ էլ, յանկարծ, լուեց փողի հնչիւնը, և զինուորները սկսեցին պատրաստութիւն տեսնել: Բանտի արեւելեան պատուհանները նայում էին ուղիղ Մուշի դաշտի վրա: Դաշտի մէջ տեղում երևում էր ծրնոք գիւղը: Մարազի ծուխը ջուլա-բուլա կեր էր բարձրանում: Բանտարկիւնների մէջ ծայր է տեսնուած ջրիչոյց. ասում էին, թէ Բաջալտից 800 հայրի են դուրս եկել, 100ը զնացել է դէպի Վան, 100ը՝ Կարին, 100ը՝ Ախալթ, 150ը՝ Տիգրանակերտ, իսկ մնացած 150 հոգին էլ պաշարած են ծրնոքում և մարդ են ուղարկել Սերբ փաշային, որ զայ իրենց պաշարները ազատ է: Հազար ու մի ստապակալեան պատմութիւններ էին արւում: Մի քանիսն էլ ասում էին, թէ դալիբ և Սարգիս էֆ.-ին բանտից ազատելու: Զօրքի պատրաստութիւնը տեսնում էր ահազին հարաբ-հրոցով: Առատ փամփուշտ էին օրաժամում: Զինուորները համբուրում էին իրար հետ և նայում ծրնոք գիւղին, որտեղից անգուրթ ծուխը շարունակում էր բարձրանալ՝ լափելով ութը հերոս նահատակներին:

Տղաները Դալիբին զլրբելուց յետո՛յ սկսում են երգել «Պուեցի՛ք, տղերք, կուռեցի՛ք ջաջ-ջաջ»: Կրակը, սակայն, անկարելի է դարձնում մարազում մնալը: Պէտք է դուրս գալ ինչ գնով էլ լինի: Բաժանում են երկու մասը. մի մասը փորձում է առաջ դուրս գալ, բայց հէնց որ դուռը բաց են անում, զնապիններ կարկուտի պէս թափւում են ներս և սպանում են տղաներին: Զինուորներն ու խուժանը ջաջաչիւրած՝ դուրս են

\*) Տիգրանը երկու ամիս ուշացել էր: Պատճառը այն էր, որ Մուշի գիւղերում զբաղւած էր վառօդ պատրաստելով:

գալիս գիրքերից ընկածները գէնքերը կողոպտելու նրպատակով: Ողջ մնացածները գոչում են «ուռա՛» և հրացանները արձակելով՝ յարձակում են թշնամու վրա: Սկսում է մի յուսահատական կռիւ: Տղերը կռոււմ են մինչև վերջին փամփուշտը և նահատակում են: Գուրգէնը հասնում է մինչև մի ժամ հետո գտնուող գետը, բայց տեսնելով, որ փամփուշտները վերջացել են, հրացանի բանալին նետում է ջուրը և ինքը սպանւում է հալածուող զինուորներից: Թշնամիները կտրում են նրա գլուխը...

Այդ գիշեր սարսափելի էր ինձ համար. չէի կարողանում շունչ քաշել: Ուրախ էր միայն իմ աղան. նա հիացած էր տղաների հերոսութիւնից: Եւ անընդհատ հարցնում էր ինձ. «Աստուծ սիրես, տաս՛, ճի՛շտ է, որ 600 հոգի են»: Ես պնդում էի, որ տեղեկութիւն չունեմ, բայց նա չէր հաւատում:

(Շարունակելի)

Մ Ի Ճ Շ Տ Ո Ւ Մ

Ընկ. Սամսոնը Թաւրիզից, խնդրում է մեզ նշտել. որ «Դիօշակ»-ի 1929թ. № 12-ի «Սեւ Քարեցի Սաֆօ ինքնակենսագրութիւնը» գրութեան մէջ յիշած Թորոսը Գալուստ Այոշեանցը չէ: Գալուստ Այոշեանցը այդ թւականին թիֆլիսում էր և ուներ «Կալկազ» անունով զինագործարան: Իսկ Սաֆօ յիշած Թորոսը թիֆլիսեցի իշխան Յովսէփ Արղուբեանի է, ո՛չ իսմաիլեան իշխանը: Այս Յ. Արղուբեանը յաճախ լինում էր Քրիստափորի մօտ և մասնակցութիւն ուներ ինքնակաճ թւականների դաշնակցական գործերին: 1890թ. աշնանը նարակազմ Դաշնակցութիւնը գանձակեցի՝ Տիգրան Ստեփանեանին ուղարկում է Սալմաստ, որից յետոյ ուղարկում է նաև այդ Յ. Արղուբեանին՝ Թորոս ծածկանունով: Սա մի որոշ ժամանակ մնաց Սալմաստում և, կարծեմ, 1891-ի վերջերին կամ 92-ի սկզբներում կանչւում է թիֆլիս: Այստեղից նա ուղարկւում է Պոլիս: 1897-ին այդէն նա Դաշնակցութեան շարքերում չէր. Քրիստափորը նրան հետացրել էր նրա անվայել վարք ու բարքի պատճառով:



Յ Ա Կ Ո Ր Զ Ա Ր Ի Ֆ Ե Ա Ն

(Մահուան 11-ամեակի առթիւ)

Մէկը հանրապետութեան շրջանի Հ. Յ. Դ. նոր սերնդի ղեկավարներից: Մի մոլեռանդ գաղափարապաշտ, մի անսպառ եռանդ, բազմակողմանի ձիրքերով օժտւած մի երիտասարդ մտատրուական:

Հայաստանի Աշակերտական Միութեան Կ. Կոմիտէի նախագահ, խմբագիր այդ մարմնի «Դպրոցների Դրօշակ» ուսաստառ թերթի, լուսագոյն աշխատակիցներից մէկը Հ. Յ. Դ. Աշակերտական Միութեան օրգան «Շանթ» թերթի, 1918-ին անդամ Հ. Յ. Դ. Երևանի Գաղաքային Կոմիտէի, անդամ Հ. Յ. Դ. Աշակերտական Միութեան Վարչութեան, 1919-ին անդամ Հայաստանի Հ. Յ. Դ. Աշակերտական Միութեան Կ. Կոմիտէի, 1920-ին նաև անդամ Հ. Յ. Դ. Ուսանողական Միութեանց Անդրկովկասեան Բիւրօի:

Մնեւ է 1898-ին Նալբանդում, ուր այբբանագրապույցի էր հայրն իբր ուսուցիչ պաշտօնավարում էր:

Երևանի գիմնազի աւարտելուց յետոյ 1919-20 թ.թ. ձմեռն արձանագրւած էր Ալեքսանդրապոլում բացւած Հայաստանի անդամների համալսարանում:

Իբրև հայ նոր սերնդի գործիչ աչքի ընկաւ 1917-ին՝ հանդիսանալով մէկը դպրոցների ազգայնացման համար պայքարող աշակերտութեան ղեկավարներից: Պարա-

զուին էր 1917-ի անհաւ. Երևանի գիմնազիների այդ նըպատակով կողմակերպած դասադուլի:

Այդ դասադուլի և յարակից ցոյցերի հետևանքով կազմւած «Հայտարար ժողով»ներում՝ բազկացած Երևանի մանկավարժների, մշակութային հիմնարկութեանց, ծնողների և պայքարող աշակերտութեան ներկայացուցիչներից՝ Զարեֆեանը հանդէս եկաւ ա՛յնպիսի հուժկու թափով և պատրաստութեամբ, որից անկարելի էր շակնածել: Այդ ժողովներում յայժանակից «ազգայնացում» պահանջող աշակերտութիւնը, իսկ նրա ստեղծանք՝ Զարեֆեանն էր:

Իրատես էր, առողջ դաստիարակ ունէր և արամաբանելու անվիճելի ընդունակութիւն: Համոզումների մէջ անըրբելի էր. բնատուր խելք ունէր, բայց նաև զգացումների խորութիւն:

Ոտում էր հանդարտ, սաւանջ սեթևեթանքի, բայց խօսում համոզմամբ — այդ պատճառով էլ ղեկեկցիկ ու տպաւորիչ:

1917-ի ամրան աշխատում էր Երրակի շրջանի կազմակերպական գործերում: Նրա ջանքերով Ալեքսանդրապոլի Հ. Յ. Դ. Աշակ. Միութիւնն էլ այդ ամառ աւելի՛ իտացրեց իր շարքերը և լծւեց Երրակի շրջանի կուսակցական դարծին:

Նոյն տարւայ ձմրան «Էկայի» ճակատ» նշանաբանով եղած աշակերտական մեծ շարժման օրերին՝ Երևանում մի բարձրամարդ ժողովուրդ անզուլարար վերադարձեց: Հոգեկան ծանր տաղանայ էր ապրում, որ չէր կարող ժամ առաջ գործի լծել: Հարզի կրտսեղներու՝ անցաւ Ալեքսանդրապոլ, ուր համախմբւած էր դինտրազրւած աշակերտութեան մեծ մասը:

Ձերմ զգացումներով կապւած էր Նժդէհին, և ցնցումներէ ժամանակ վաղու՞մ էր նրա մօտ: Հիմա էլ էր պարագլուխ մի խումբ աշակերտների, մտաւ նրա «կրտսեղ» գործարար: Այդ խումբը գործարար ներքին կենսութեամբ անփոխարինելի զեր կատարեց, իսկ այդ գործարարն էր ամբողջ կազմով, բացի Ալեքսանդրապոլի և Ջարիֆաթի շրջանների դինտրական յաջող գործողութիւններից՝ ճակատագրական զեր խաղայն Դարաքիլիսէի պատմական ճակատամարտում:

Ջարիֆանը, որ մասնակցել էր այդ ճակատամարտին հայրենասիրական ջերմ զգացումներով, զրեց նրա համառօտ պատմութիւնը և 1918-ի ամրան հրատարակեց «Շանթ» թերթում:

1919-ին մասնակցեց Հ. Յ. Գ. Թ. Ընդհանուր ժողովին՝ իբր պատգամաւոր Հ. Յ. Գ. Աշակ. կազմակերպութեանց Անդրկովկասեան Բիւրօի:

Նա քամակցում էր նաև Երևանային և Ռայոնական ժողովներին և կուսակցական այլ կարևոր խորհրդակցութեանց:

1920-ին, Հ. Յ. Գ. Անդրկովկասեան Ռուսնողական Միութեանց համադուժարը հարկ վերջացած, տեղի ունեցաւ մեծամասնական-քեմալական զինակցութեան առաջին քայլը Հայաստանի դէմ — այսօրւայ մեծամասնականների շատազոված մայիսեան հակա-«յիդափոխական» ընդվզումը:

Աշակերտական և Ռուսնողական Բիւրօները այդ դէպքերի հետեանքով միանալով կազմեցին Միացեալ Բիւրօ», նախադժեցին «Ց պարտականութեանց և Ց պահանջներին» մի յուշագիր և «կուռով հայ ժողովրդի անշարժութիւնը պաշտպանելու» կտրուկ առաջարկով ներկայացրին Հ. Յ. Բիւրօին:

Ջարիֆանը, որ այդ կէտերի բանաձևման մէջ մեծ դեր կատարած էր՝ առիթ ունեցաւ կուսակցական մարմինների մի խառն նիստում հանդէս գալ մի փոթորակից ճառով և նրանց տրամադրութիւնները պարտադրել այնտեղ:

Այդ օրերին, ինչպէս Հայաստանին վտանգ սպառնացող ամէն դէպքում, Միացեալ Բիւրօն» յայտարարեց իր ուժերի զորահաւաքը: Ջարիֆանն անցած ռուսնողական մի խմբի գլուխ, փութաց խռովութեանց առաջի թատերալայրը—Ալեքսանդրապոլ: — Այստեղ

զիկալարելով նաև տեղի դաշն. աշակերտներն ու ռուսնողները՝ հանդիսացաւ մեծամասնականների ներքին ճակատի քայքայման վարդապետներից մէկը: Հետագրբերական էին մանուսակը նրա յօրինած հայրենաշունչ և ազատաշունչ կոչերն ու թուռացիկները, որոնք աշակերտական տասնակները մեծամասնականների հետուհայ տիրապետութեան ընթացքին ցրում էին տներում և գիշերները՝ փակցնում փողոցներում:

Վերջին անգամ ռուսնողական մի խմբով նա անցել էր Իջևանի շրջանը: Ծամբարակի՝ կոիւններին սպանւեց 1920թ. մայիս 27-ին Երեկոյնական, իր Երիտասարդութեան արշալոյսին, 22 տարեկան հասակում, երբ իր տաղանդի ամպերը նոր էին կուտակւել, որոնց վերահաս տեղումին բուրբ սրտատրոփ սպասում էինք:

Անխնայ էր դէպի ամէն ոք, որ մեղանչում էր Հայաստանի անկախութեան պաշտպարի դէմ: Կուսակցութեան ներսում շեղումներ ունեցող ընկերները դէմ լեցում էր ստեղծութեան զգացումով: Ատու՞մ էր մանուսակը հայ մեծամասնականներին:

Առանձին հաւատով էր լեցւած Դաշակցութեան սպալայի հանդէպ: Նրա գրօշի տակ Արեւելքում գալոց յիդափոխութեան մեծ ցնցումներ էր երազում: Ապրում էր՝ այս յոյսով և տարօրինակ էր նրա երազակերպու: Յիդափոխական կամ քաղաքական մի կնճիտ յալիստուկում էր նրան ինչպէս բանաստեղծութիւն: Ողևորւած էր «Արեւելեան Միջազգայնական»ի գաղափարով, բայց ի տես իսլամական իրականութեան՝ նա լեցում էր դառնութեամբ:

Ինքը հալածւած և անիրաււած մի ժողովրդի գաւաակ, հակումներով և գաղափարաբանութեամբ անհասարակաւ՝ առանձին զգացումներ էր տածում Հայաստանի մանր ժողովուրդների հանդէպ: Ուզում էր, որ ազգային հալածանքների սև դառնութիւնը ճաշակած հայութիւնը բովանդակ նւաճող, կոտորող ու ձուլող մարդկութեան մէջ, թոյլին հանդուժելու, նրա հանդէպ արդարադատ լինելու, նրա մարդկային իրաւունքները յարգելու ապացոյցը տար: Նա պատկերացնում էր Հայաստանն իբրև առաջին որբան փոքրիկ ժողովուրդների իրականօրէն ազատ դաշնակցութեան:

Աշխարհը դրացաւ Ջարիֆանի պէս մի փայլուն դէմք ինչպէս մեր ժողովրդի ապագայի համար: Յաւալի է, սակայն, երբեք տարօրինակ. ինքն արդէն յամախ գզում էր, որ մի անցորդ է, և մի կարճ ուղի միայն ունի իր առջև: Նախազգացումն իրականացաւ և «Անցորդ» ծածկանունը միայն մնաց իր ընկերների յիշողութեան մէջ իբր սիրելի մի նշանակ՝ նրա գոյութեան խորհրդի:

# 40 ՏԱՐԻԱՅ «ԴՐՕՇԱԿ»ՆԵՐԻ ԲՈՎԱՆԵՂԱԿՈՒԹԻՒՆԸ

(1891 — 1901թ. № 1 — 120)

«Դրօշակ»-ի առաջին թիւը լոյս է տեսել 1891թ. մայիսին, Թիֆլիսում: Դրանից առաջ, 1890 թ. հրատարակել է Ն. Յ. Դ. Մանիֆեստը և «Դրօշակի թրուռցիկ թերթ» № 1ը: 1891թ. սկզբին լոյս է տեսել «Դրօշակի թուռցիկ թերթ» № 2ը: Ն՛ 1 թուռցիկ թերթը կորած է դժբախտաբար: Ն՛ 2-ից կայ միայն մէկ օրինակ, Ն. Յ. Դ. Կենտրոնական Դիւանում:

«Դրօշակ»-ի առաջին և երկրորդ համարները ապւել են Թիֆլիսում, Ն. Յ. Դ. գաղտնի տպարանում: Երրորդ և չորրորդ համարները՝ Թումանիայում: Հինգերորդ համարից սկսած մինչև 1914թ. «Դրօշակ»-ը հրատարակուած էր ժընևում: 1914թ. մինչև 1925թ. «Դրօշակ»-ի հրատարակութիւնը ընդհատուած է: 1925 թ.ից սկսած լոյս է տեսնում Փարիզում:

1891թ. մայիսից մինչև 1931թ. մայիս հրատարակել է 308 համար «Դրօշակ»:

Չանազան ժամանակներ «Դրօշակ»-ի խմբագիր կամ խմբագրութեան անդամ են եղել՝ Խոտտոմ, Ս. Չաւարեան, Գրիստ. Միքայէլեան, Ս. Շիխան, Ա. Վառանեան, Տ. Յովհաննիսեան, Գ. Խաթակ, Յովնան Դաւթեան, Մ. Վարանդեան, Է. Ակունտի, Ա. Ահարոնեան, իսկ 1925 թ.ից սկսած՝ «Դրօշակ»-ը լոյս է տեսնում Ն. Յ. Դ. Իււրթի անմիջական ղեկավարութեան տակ:

Այստեղ առաջ կը բերենք համար առ համար «Դրօշակ»ի բոլոր թիւերի համառոտ բովանդակութիւնը, գլխաւոր նիւթերը: Սկզբի շրջանի «Դրօշակ»-ների յօդածների մեծ մասը անտարագիր էր: Ապա ստորագրուած էին Է. Ակունտին, Դարիբը, Միամանթօն, Հայ-Գուսանը, մասամբ Մ. Վարանդեանը և մի քանի ուրիշներ: Մենք փակագծի մէջ կը գնենք և հեղինակների անունը, որքան որ հնարաւոր է ճշտել նրանց ինքնութիւնը:

1891թ. լոյս է տեսել «Դրօշակ»-ի երկու համար:

№ 1-ի բովանդակութիւնն է. Առաջնորդող յօդած, որի մէջ բացատրուած է «Դրօշակ»-ի կոչումը: Ապա ամբողջութեամբ առաջ է բերւած Վարժապետեանի նախագիծը Թիւրքահայաստանի ինքնավարութեան. արտաքին տեսութիւն. ներքին տեսութիւն և թղթակցութիւններ Կարնից և Ալաշկերտից:

№ 2-ի Առաջնորդողը ներկած է պարտիզմակամ կռիւն: Առաջնորդողը անմիջապէս յետոյ, բացատրութիւն է տրուած № 1-ի առաջնորդողի հետևեալ կէտի մասին. «Մեր այժմեան պահանջները՝ մոտադրապէս նոյնն են, ինչ որ յայտնւած են Ներսէս Գատրիարբի ծրագրում»: — «Մենք կարևոր ենք համարում յայտնել, որ մենք այդ գրեթէ քաջի առաջ ենք ունեցել այն դէպքը, որ Սուլթանը իւր քարի կամքով մտցնի Տաճկա-Հայաստանում Ներսէս Գատրիարբի ծրագրում պահանջւած բարեփոխութիւնները, որ շատ անհաւանական է»: Ապա՝ «Մի ընկերոջ անձնական դիտողութիւնները ժողովրդի տրամադրութեան մասին»: Նամակ Պարսկաստանից: Լուրեր Տաճկաստանից: Արտաքին տեսութիւն:

1892-ին հրատարակել է «Դրօշակ»-ի միայն մէկ թիւ՝ № 3ը:

Առաջնորդողում՝ «Մեր ծրագիրը»՝ Սիմօն ու Գրիստափօրը սկսում են պարզաբանել Ն. Յ. Դ. ծրագիրը:

զիրը: Ապա լուրեր Տաճկաստանից — Արաբի ձերբակալուելը և այն: Նամակներ Ալաշկերտից, Կարնից, Վանից, Խնուսից, Տրապիզոնից: Ներքին տեսութիւն: Յայտարարութիւն՝ Դաշնակցութեան Կանոնադրութիւնից՝. մահան պատժի մասին:

1893ին լոյս է տեսել «Դրօշակ»-ի երկու թիւ՝ № 4 և 5ը: Ն՛ 4-ի առաջնորդողը խօսում է 1892 թ.ին յաջողած ուձակտնոնի ու տրամադրութիւնների անկման մասին և վեր է հանում յեղափոխութեան անհրաժեշտութիւնը: Ապա — Տեսութիւն Վասպուրականի՝ գրւած Ս. Չաւարեանի ձեռքով: Լուրեր Ալաշկերտից, Մշից, Սասունից, Վանից, Թաւրիզից, Թիֆլիսից: Թիֆլիսից Ս. Չաւարեանը գրում է Գր. Արծրունու յուղարկաւորութեան մասն: Արտաքին տեսութիւն:

№ 5. Առաջնորդող՝ «Այբ ու բէն», որի մէջ Գրիստափօրն ու Սիմօնը բացատրում են յեղափոխական այբուբէնի առկայի տարւած — «Հայ ժողովուրդը պատմութիւն է ուղւում»: Նամակներ Կարնից, Վանից (Պետո), Երզնկայից, Պոլսից և այլն: Հաղորդում է Արաբի, Գ. Արքանեանի, Մ. Տամատեանի, Պ. Շատախչեանի մասին հայլին: Վերջը՝ «Հայ յեղափոխականը տաճկական բանտում» (Պետօի գրած):

1894ին լոյս է տեսել «Դրօշակ»-ի 9 թիւ՝ № 6-14 և № 6-ի յաւելւած: Այսուհետև առաջ կը բերենք միայն գլխաւոր նիւթերը:

№ 6. Առաջնորդողը Սիմօնն ու Գրիստափօրը շարունակում են «Այբ ու բէն»ը — «Ի՞նչ կարգեր կարող են ապահովել ժողովրդի արդարացի պահանջները»: Արաբի խմբի կռիւը. Արաբի մահը: Լուրեր Երկրից:

№ 6ի «Յաւելւած»-ով հաղորդուած են լուրեր Երկրի զանազան վայրերից: «Այբ ու բէն»-ի շարունակութիւնը:

№ 7. Առաջնորդող՝ «Սով և գողթակաւորութիւն» (Յովնան): Լուրեր Երկրից: «Այբ ու բէն»-ի շարունակութիւնը՝ գրւած Խոտտոմի կողմից:

№ 8. Առաջնորդող՝ «Վերջին դէպքի առթիւ» Աշըգեանի մահափոթը, (Պաթակ), լուրեր Երկրից: «Այբ ու բէն»-ի շարունակութիւնը (Խոտտոմ):

№ 9. Առաջնորդող՝ « Ժողովուրդը կը յաղթի » (Յովնան): Լուրեր Երկրից:

№ 10. Առաջնորդող՝ «Մեր ծրագիրը» — Ն. Յ. Դ. ծրագրի բնագիրը: Լուրեր Երկրից:

№ 11. Առաջնորդող՝ «Մեր ծրագիրը»՝ շարունակութիւն և վերջ: Լուրեր Երկրից:

№ 12. Առաջնորդող Սասունի ապստամբութեան առթիւ (Յովնան): Լուրեր Երկրից: Մարգար Վարժապետի կախիւր Բաղէլում:

№ 13. «Սասնոյ Ապստամբութիւնը և կոտորածը» (Արայէլ): Լուրեր Երկրից: Ժիրայրի կախիւր:

№ 14. Առաջնորդող՝ «Մասունի դէպքի առթիւ» : Տեղեկութիւններ Մասնոյ ապստամբութեան մասին : Լուրեր Երկրից :

1895թ. լոյս է տեսել «Դրօշակ»-ի 22 թիւ. № 1-22 :

№ 1. Առաջնորդող՝ Նախորդ տարւայ ընդհանուր ստուգութիւն : Մանրամասնութիւններ Մասնոյ կռիւնների մասին : Լուրեր Երկրից :

№ 2. Առաջնորդող՝ Տանկիներ, քիւրդեր, քիւրդեր և սուլթանական կառավարութիւնը : Լուրեր Երկրից : Հայկական հարցը արտասահմանում :

№ 3. Առաջնորդող՝ «Զէնք» : Լուրեր Երկրից : Եւրոպական մամուլը :

№ 4. Առաջնորդող՝ «Ո՞վ է մեղաւոր» : Լուրեր Երկրից :

№ 5. Առաջնորդող՝ «Պատմութիւնն է ուսուցիչ» : Լուրեր Երկրից :

№ 6. Առաջնորդող՝ «Ընթերթի Դրուժինը նոյնն է» (Յոյնական), Երկրի վիճակի մասին : Լուրեր Երկրից : Գ. Արխանտանի, թ. Կ. Փաշայանի դատավարութիւնը : Հայկական հարցը արտասահմանում :

№ 7. Առաջնորդող՝ «Մասուն» (Յոյնական), Մայիս 11-ի գողովորդային ցոյցը Պոլսում : Լուրեր Երկրից :

№ 8. Առաջնորդող՝ «Րէֆորմներ» (Յոյնական) : Լուրեր Երկրից :

№ 9. Առաջնորդող՝ «Րէֆորմներ» (չարունակութիւն) : Լուրեր Երկրից : Ապստամբութիւն Մակեդոնիայում : Եւրեւմատ՝ Դժոխքի նամակը. «Հնչակ» և «Դրօշակ» :

№ 10. Առաջնորդող՝ «Րէֆորմներ» (չարունակութիւն) : Լուրեր Երկրից : Մակեդոնական ապստամբութիւն :

№ 11. Մասունի տարեդարձը. Մասուն (Թաթուր), «Մի տարի է» (Ս. Շիւան), «Ազատութիւն կամ Մահ» (Յոյնական) :

№ 12. Առաջնորդող՝ «Աւերում են, կոտորում են» (Յոյնական). «Րէֆորմներ» (չարունակութիւն). Մամբրէ վարդի դատապարտութեան տեղեկագիրը : Սարախանեան ներսէս վարդ. : Նամակներ Երկրից :

№ 13. «Րէֆորմներ» (չարունակութիւն) Սոսոմ-մանութիւն Մամբրէ վարդ.-ի. Սարախանեան Ն. Վ. (չար.) Երգնկայի Տազնապարտ :

№ 14. Առաջնորդող՝ «Կամայի կուի առթիւ» (Ս. Շիւան). Երգնկայի տաղնապարտ : Րէֆորմներ (վերջ) : Սոսոմվանութիւն Մամբրէ վ.-ի (վերջ) : Լուրեր Երկրից :

№ 15-16. Առաջնորդող՝ « Նոր Սարախաններ » (Յոյնական) : Երգնկայի տաղնապարտ (Ղարա Միլիթ) : Տեղեկութիւններ Երկրից :

№ 17-18. Առաջնորդող՝ «Կուե՛նք, կոտորում են» (Յոյնական) : Տրայպիտի շարքը : «Առաջնորդող» Րէֆորմներ (Յոյնական) : Շաբի փաշայի ընդունելութիւնը Կարնում (Ռոստոմ) : Կոտորածներ : Լուրեր Երկրից : Բահրի փաշայի մահափորձը :

№ 19. Կոչ Տրայպիտի Կենտր. Կոմիտէի : Առաջնորդող՝ «Ներկայ ռուսներ» (Յոյնական) : Զարդի լուրեր Երկրից : Հայդուկային խմբի կուրը Քէօպրի-Քէօյում :

№ 20. Առաջնորդող՝ «Կը հրդեհուի» (Յոյնական) : Կոտորածներ Բաբերում, Երգնկայում : Լուրեր Երկրից :

№ 21. Առաջնորդող՝ «Պիտի ոչնչանայ» (Յոյնական) : Նամակ Կարինից (Ռոստոմ) : Կոտորածներ :

№ 22. Առաջնորդող՝ «Զէյթուն» : Զէյթունի ապստամբութիւն : Կոտորածներ :

1896թ. լոյս է տեսել «Դրօշակ»-ի 28 թիւ. № 1-28 :

№ 1. Առաջնորդող՝ Տեսութիւն նախորդ տարւայ : Հայդուկային խմբի կուրը Դէլի-Պապայում : Կոտորածի լուրեր Կարնից, Սարբերդից, Տրայպիտից : Լուրեր Երկրից :

№ 2. Առաջնորդող՝ «Տմարդի պայմաններ» (Զէյթունի առթիւ) : Կոտորածի լուրեր :

№ 3. Առաջնորդող՝ «Ցարի կառավարութիւնը» : Պարսկա-Տանկական սահմանադրից : Կոտորածներ : Լուրեր Երկրից :

№ 4. Առաջնորդող՝ «Վճռողը կուի է» : Կոտորածներ, կողպուտ, աւերում :

№ 5. Առաջնորդող՝ «Մահճեղական ամբոխ դերը» : Պարսկա-Տանկական սահմանադրից : Կոտորածներ ու բանտարկութիւն : Լորդ Սորբերբի ճառը :

№ 6. Առաջնորդող՝ «Մահճեղական ամբոխ դերը» (չար.) : Ինքնապաշտպանութեան կռիւներ : Կոտորածներ :

№ 7. Առաջնորդող՝ «Զէյթունը անձնատուր» : Հայդուկային կռիւներ : Կոտորածներ :

№ 8. Առաջնորդող՝ «Առաջն առնել» (գաղթականութեան) : Կոտորածներից յետոյ Կարնում : Կոտորածներ :

№ 9. Առաջնորդող՝ «Զվատնեք կուել» : Կոտորածից յետոյ Կարնում (Թաթուր) : Պարսկա-Տանկական սահմանադրից : Կոտորածներ : Լուրեր Երկրից :

№ 10. Առաջնորդող՝ «Յեղափոխական գործիչը» (Յոյնական) : Կոտորածներ :

№ 11. Առաջնորդող՝ «Նոր դիմակը» (կոտորածների առթիւ) (Յոյնական) : Կոտորածներ : Լուրեր Երկրից :

№ 12. Առաջնորդող՝ «Վնասակար տարբեր» (Ռոստոմ) : Թղթակցութիւններ Երկրից : Կոտորածներ :

№ 13. Առաջնորդող՝ «Բարոյական նեցուկ» (Օր. Շահնապարեան-Տիկ. Նի. Զօրեան) : Թղթակցութիւններ Երկրից : Կոտորածներ :

№ 14. Առաջնորդող՝ «Ո՞ւր բարոյ» (Պետո) : «Հնտանքը Ի՛նչ եղաւ» (Ռոստոմ) : Թղթակցութիւններ Երկրից : «Թիւրքերոյ շուրջը» (Ս. Միխայսեան) :

№ 15. Առաջնորդող՝ «Յեղափոխական դիտակցութիւն» (Ս. Յովհաննիսեան) : Թղթակցութիւններ Երկրից :

կրից: Պարսկա-տաճկական սահմանագլխից I. Քիւր-բիոյ շուրջը (Ս. Միխասեան):

№ 16. Առաջնորդող՝ «Ոչինչ չի վախցնի» (Յով-նան): Կռիւ Վանի մէջ: Պարսկա-տաճկական սահմա-նագլխից, II: Քիւրբիոյ շուրջը (Ս. Միխասեան):

№ 17. Առաջնորդող՝ «Ի դէն» (Լ. Սարգսեան): Արթո (Կենսագրական): Նամակներ Երկրից:

№ 18. Արթո (Թոստոմ): Կռիւներ Վանում: «Զին-ւած ընդդէմադրութիւն» (Լ. Սարգսեան): Լուրեր Եր-կրից: Ծէրօ, Զաթօ:

№ 19. Մարտիրոս Բապունեան: Առաջնորդող՝ «Դիպլոմատ-հրէշներ» (Թոստոմ): Վանի դէպքերը: Լուրեր Երկրից: «Քիւրբիոյ շուրջը» (Ս. Միխասեան): Այս նամարից է սկսուած Ս. Միխասեանի յօււածներէ շարքը, որ շարունակուած է յաջորդ նամարներում:

№ 20. Առաջնորդող՝ «Սասնոյ երկրորդ տարեգա-րը Պոլսում» (Մ. Յովհաննիսեան): Տեղեկութիւններ Բանկ Օթթոմանի գրաւման մասին:

№ 21. Բանկ Օթթոմանի գրաւումը: Առաջնորդող՝ «Ժողովրդի Ոյթը» (Սմբատ): «Օսմանեան բանկի պա-շարուում» (Հրաչ):

№ 22. Պեսօ (Թոստոմ): Տեղորոշական գործո-ղութիւն Վանում (Սմբատ): Նամակներ Երկրից:

№ 23. Առաջնորդող՝ «Մի՛ արատուորէք» (Մ. Յով-հաննիսեան): «Երեք մահ» (Բարկէն, Գնունի, Սուրէն) (Սմբատ): Սամաթիոյ կռիւը:

№ 24. Առաջնորդող՝ «Զէնք, գէնք» (Թոստոմ): Բանկի գրաւման մանրամասնութիւնները (Գարօ) և:

№ 25. Առաջնորդող՝ «Ճամբից չլեզենք» (Վարդ): Պաս-գիւղի կոտորածը: Բանկի դէպքի մանրամասնու-թիւնները:

№ 26. Աւետիս Մարտիան (Ան. Բայանթար): «Ա-մէն բան թողէք» (Վարդ): Լուրեր Երկրից: «Ընդ հար-կեր մահաեղականներէ վրայ» (Թոստոմ):

№ 27. Բարկէն-Սիւնի (Ս. Միխասեան): «Կը շա-րունակենք» (Յովհանն): Լուրեր Երկրից:

№ 28. Առաջնորդող՝ «Անդունդից Անդունդ» (Վարդ): «Թ՛ ու յիշեն» (Ս. Միխասեան): Դաշնակցա-կան խմբի կռիւները Վանում, Լուրեր Երկրից:

1897թ. լրջս է տեսել «Դրօշակ»-ի 16 թիւ՝ № 1-16.

№ 1: 1896-97 թ. տարեկան տեսութիւն: Հայդուկ-ներ: Հայդուկային խմբի կռիւը Հայոց Զորում: Լու-րեր:

№ 2: Օսմ. Յեղափ. կուսակցութեան ա. չըջարե-րականը: Առաջնորդող՝ «Վերջապէս» (այս չըջարեա-կանի առթիւ): Հայդուկ. խմբի կռիւը Արտուկայ լեռ-ներում: Կրետական հարց: Լուրեր:

№ 3. Արտաշէս Անդրէասեան (Վոսմեան), Առա-ջնորդող՝ «Դիւանագիտութիւն»: Լուրեր Երկրից: «Եւ-րոպական վերջին նամամատութիւն» (աբնորոգում-ների ծրարքի առթիւ):

№ 4. Մարօ (Կենսագրութիւն): Առաջնորդող՝ «Կրետէն պատուած է»: Նամակներ Երկրից: Կրետէն մասին:

№ 5. Առաջնորդող՝ «Կեցցէ՛ Յանդընութիւնը» (Յունաստան ու Կրետէ): Նամակներ Երկրից:

№ 6. Առաջնորդող՝ «Դարձեալ կոտորած»: Նա-մակներ Երկրից:

№ 7. Առաջնորդող՝ «Յուն-Տաճկական պատերազ-մը»: Նամակներ Երկրից: Հնչակ-դաշնակցական միու-թեան առթիւ:

№ 8. Առաջնորդող՝ «Քալէ» (Վոսմեան): Թըղ-թակցութիւններ Երկրից: Թոսուցիկ թերթ Հ. Յ. Դ. Վասպուրականի Կ. Կ-ի № 2:

№ 9. Արտաշէս Միսակեան (Կենսագրութիւն): Ա-ռաջնորդող՝ «Կրետէի ինքնավարութիւնը»: Նամակներ Երկրից:

№ 10. Առաջնորդող՝ «Ո՞ւր, թէ՛ յեղափոխութիւն» (Երիտասարդ թիւրքերի մասին): Նամակներ Երկրից:

№ 11. Պանաստրի արշաւանք: Առաջնորդող՝ «Պա-սի՛ւ Հայաստանին»: Ռմալիս գործողութիւններ Պոլ-սում: Պաշիկ Գնունի (Կենսագրութիւն): Լուրեր:

№ 12. Առաջնորդող՝ «Ատուած, Ֆէտայիներն ե-կան» (Պանաստրի առթիւ): Պանաստրի արշաւանքի մանրամասնութիւնները: Կռիւներ Վանում:

№ 13. Արտաշէս Մ. Դեւեան-Եղիպտացի (Կենսա-գրութիւն): Առաջնորդող՝ «Վե՛րջ այս գրութեան»: «Հայոց մի յաղթութիւնը»—Պանաստրի առթիւ. Հանս-Փիշէր: Նամակներ Երկրից:

№ 14. Առաջնորդող՝ «Յեղափոխական նէյիները»: Պանաստրի կռիւը (շար.): Նամակներ Երկրից:

№ 15. Յակոբ Գարակէղոսեան-Զաւէն (Կենսագրու-թիւն): Առաջնորդող՝ «Դէպքերը թո՛ղ իտեսն»: Նա-մակներ Երկրից:

№ 16. Արիստակէս Զօրեան—Կարօ (Կենսագրու-թիւն): Առաջնորդող՝ «Հեւանդ Մարդը»: Պանաստրի կռիւը — նահանջ: Լուրեր:

1898թ. լրջս է տեսել «Դրօշակ»-ի 11 թիւ՝ № 1-11

№ 1: 1897-98թ. տարեկան տեսութիւն: «Քիւրբ-բիան և իր ներքին թշնամիները, I. «Հէլլէնականու-թիւն»: Քաղաքական տեսութիւն: Նամակներ Երկրից, Քարիպից:

№ 2: Սողաթէլ Պան Մ. Զոհրաբեան (Կենսագրու-թիւն): Առաջնորդող՝ «Ժողովուրդը և Արանները»: «Քիւրբիան և իր ներքին թշնամիները. II. Մակեդո-նական խնդիրը»: Քաղաքական տեսութիւն: Նամակ-ներ Երկրից:

№ 3. Առաջնորդող՝ «Հայաջինջ խաղաղութիւնը» (Մ. Վարանդեան): Տեղեկագիր Տարօնի և չըջակայի: Թղթակցութիւններ Երկրից:

№ 4. Առաջնորդող՝ «Մեր ներքին թշնամիները» (Մ. Վարանդեան): Թղթակցութիւններ Երկրից: «Քա-

յանի զաղաքականութիւնը և հետեանքը» (Մ. Վարսու-  
դեան) : «Կայսրյո Գիրքը 1896—1897» : Կրետէ :

№ 5. Կարապետ Դաւթեան—Պան (կենս.) : Առաջ-  
նորոգող՝ «Երեսասարգ Թիւրքեան» (Մ. Վարսուդեան) :  
Թղթակցութիւններ Երկրից : Կլատտոն (Ս. Մինաս-  
եան) : Մակեդոնիա :

№ 6. Առաջնորդող՝ «Ակն ընդ Ական» : Գիւրգիբի  
նիթապ» (քիւրդերէն), Տր. Ս. : «Կոչ քիւրդերուն»  
(Հայերէն) : Եմէնի և Ալքանիայի խոսումութիւնները :  
«Պոլիտարխատի յաղթանակը» (Բելգիայի, Տրանսայի  
և Գերմանիայի խորհրդարանական ընտրութիւնների առ-  
թիւ) : «Առաջին Գայլ» (Համազործակցութիւն թիւր-  
քերի հետ) : Լուրեր Երկրից :

№ 7. Առաջնորդող՝ «Յեղափոխութեան Զորավի-  
զը» : Պիտարք : Նամակներ Երկրից :

№ 8. Ասու. Միլզայեան — Կրէտացի (կենսագրու-  
թիւն) : Առաջնորդող՝ «Տարեդարձը» (Պանասոսի առ-  
թիւ) : «Նեիլոլա Ի-ի շրջաբերականը» (Լազէի Ողա-  
ղութեան Վեհաժողով) :

№ 9. Առաջնորդող՝ «Աւերլը դաս մը» (Կրետէի  
առթիւ) : «Մեր նշանաբանը» (Մար) : Նամակներ Եր-  
կրից :

№ 10. Առաջնորդող՝ «Պարտի հերոսները» : «Զի-  
նակի խումբի մը յաղթական չուն Բագրևանդէն Ուր-  
լաթ» : «Ութերի համազորութիւն» (Մ. Վարսուդեան) :  
Լուրեր Երկրից :

№ 11. Գիրքոր Գլրճեան — Պարոյր — Հայկազն  
(կենս.) : Առաջնորդող՝ «Ոնելազարը» (Արդիւ Համի-  
դը) : Սարմաստի 9 նահատակները : Նամակներ Երկրից :

1899թ. լոյս է տեսել «Դրօշակ»-ի 10 թիւ՝ № 1-12  
և սար. 15, յուլիս 15, նոյեմբ. 15 և դեկտ. 15 ընդար-  
ձակ յանձնարաններ Վերակազմելու Հնչակեան Կուսակ-  
ցութեան և Արփ. Արփիարեանի մասին :

№ 1. 1898—99թ. տարեկան տեսութիւն (Քրիստա-  
փոր). այս համարից «Դրօշակ»-ը լոյս է տեսնում  
Քրիստափորի խմբագրութեանը : «Նոր Տարի» : «Ազիզ  
Մէրիկ» (Հայ Գուսան) — Այս համարից սկսում է Հայ  
Գուսանի աշխատակցութիւնը : Մահլիճի նահատակնե-  
րի յեշտակին : «Կովկասեան Ոսարիկներ» (Է. Ակնուն-  
նի) — այս համարից սկսում է Է. Ակնուննու «Կով-  
կասեան Ոսարիկներ»-ի շարքը : Գաղաքական տեսու-  
թիւն» : «Մեծ մարդկանց փոքրիկ դատախազը» (Ա. Զո-  
լպանեանի մասին) : Լուրեր :

№ 2. «Յայտարարագիր Հ. Յ. Դանակցութեան՝  
ուղղած Բերլինի զաշնագիրը ստորագրող պետութիւն-  
ներին» : 1898—99թ. տարեկան տեսութեան շարունա-  
կութիւնը (Քրիստափոր) : «Կովկասեան Ոսարիկներ» (Է.  
Ակնուննի) : Նուրբ Փաշա Նուրբեան (մահան առ-  
թիւ) : «Մեծ մարդկանց փոքրիկ դատախազը» (չար.) :  
«Ոսար» (Ղարիբ) — այս համարից սկսում է Ղարիբի  
աշխատակցութիւնը :

№ 3. Նշանաւոր եւրոպացիների կարծիքը Հայկա-  
կան ինքրի մասին : Առաջնորդող՝ «Յաղթանակը կոի-  
ւոյ» : «Երկու կրակի մէջ» : Կուսուբաշի նահատակնե-  
րը : Նամակներ Երկրից : Գաղաքական տեսութիւն —  
Կրետէ, Մակեդոնիա, Փիլիպոնիա : Մամուլի տեսու-  
թիւն : Գրաստական — «Ի խաչ Հան զգա», Գ.եան և  
Գալիպոլեան, 1899 :

№ 4. Նշանաւոր եւրոպացիների կարծիքը Հայկա-  
կան ինքրի մասին : Առաջնորդող՝ «Քաղաքական զրա-  
մա թէ Փարս» (Լազէի Ողաղութեան Վեհաժողովի  
առթիւ) : Ջէյս Բայա՝ «Հայոց Հարցը վերջին 20  
տարում» : «Կովկասեան Ոսարիկներ» (Է. Ակնուննի) :  
«Թիւրք կառավարութեան դիմումները Դանակցու-  
թեան հետ բանակցելու» : «Պատիւր» (Ղարիբ) : Լուրեր :  
Յանձնար — «Մուսթեան կամ համբաշի գործակցու-  
թեան խնդիրը նոր Հնչ. Կուսակցութեան հետ» :

№ 5. «Հայաստան և Մակեդոնիա» — Յայտարարու-  
թիւն Հ. Յ. Դանակցութեան և Մակեդոնական Գերա-  
դոյն Կոմիտէի : Առաջնորդող՝ «Ամբոխային Տրամա-  
բանութիւն» (Քրիստափոր) : «Կովկասեան Ոսարիկներ»  
(Է. Ակնուննի) : «Թիւրք կառավարութեան դիմումները  
Դանակցութեան հետ բանակցելու» (վերջ) : «Կուսակցու-  
թեան» (Ա. Թեկրեան) : Լուրեր :

№ 6. Նշանաւոր եւրոպացիների կարծիքը Հայկա-  
կան ինքրի մասին : Առաջնորդող՝ «Ամբոխային Տրա-  
մաբանութիւն, II.» (Քրիստափոր) : Գուրգէնի և իր  
խմբի նահատակութիւնը : «Կովկասեան Ոսարիկներ»  
(Է. Ակնուննի) : «Էլ ի՞նչ աղօթիք» (Ղարիբ) : Լուրեր Եր-  
կրից և արտասահմանից : Յանձնար յուլ. 15 — «Վե-  
րակազմ. Հնչ. Կուսակցութեան տեսական հայեացք-  
ները» :

№ 7. Արամ Արամեանի շահը : Առաջնորդող՝ «Եզ-  
րայր ենք մենք» (Հայ-մակեդոնական գործակցու-  
թիւն) : «Կովկասեան Ոսարիկներ» (Է. Ակնուննի) : Նա-  
մակներ Երկրից : Յովսէփ Աստուրեան (կենս.) : «Մայ-  
րը» (Ղարիբ) :

№ 8. Արամ Արամեանի (կենս.) : Նշանաւոր եւր-  
պացիների կարծիքը Հայկ. ինքրի մասին : «Ամբոխա-  
յին Տրամաբանութիւն, III.» (Քրիստափոր) : «Բաց  
նամակ Հայ Ինտելիգենցիային» (Հայ Ինտելիգենցիա) :  
Թղթակցութիւններ Երկրից : «Կովկ. Ոսարիկներ» (Է.  
Ակնուննի) :

№ 9. Առաջնորդող՝ «Մենք և մեր հակառակորդ-  
ները» : Կախողանից առջ (Արամ Արամեանի նամա-  
կը) : «Կովկասեան Ոսարիկներ» (Է. Ակնուննի) : «Կի-  
ցօ» : Թարգ. Ամ. Զիլարանից : Լուրեր : Յանձնար 15  
նոյեմբերի — «Վերակազմ. Հնչ. գործիչների բարոյա-  
կանը» :

№ 10. Սերոբ-Ազիբի (կենս.) : Առաջնորդող՝ «Ա-  
զատութեան կրակը» : Սերոբի մահը (նամակ Մուլիցի) :  
«Կովկասեան Ոսարիկներ» (Է. Ակնուննի) : «Արտասու-  
թեան ճանապարհին — Բանտապետը», «Ընկերը» (Ղա-  
րիբ) : Յանձնար 15 դեկտեմբեր — Արփ. Արփիարեանի :

1900թ. լոյս է տեսել «Դրօշակ»-ի 10 թիւ՝ № 1-10 :

№ 1. 1899—1900թ. տարեկան տեսութիւն : «Մեր  
զաղաքական համակիրները Թիւրքիայում» (Մակեդո-  
նիա, Երեսասարգ Թիւրքիա, Գիւրգիբի) : «Հայկուկի  
Նոր Տարին» (զրակ) : «Պատուրի կուրբ» : Անլո-  
Տրանսպարեան պատերազմը : Արիւնտա Թիթիմոր» (Ղա-  
րիբ) :

№ 2. Առաջնորդող՝ «Ամբոխային Տրամաբանու-  
թիւն, IV» (Քրիստափոր) : Կիլիկիոյ կաթոլիկոսական  
հարց : Եւրոպ. Հայ Ուսանող. Մուսթեան : «Կովկասեան  
Ոսարիկներ» (Է. Ակնուննի) : Լուրեր Երկրից :

№ 3. Գուրգէնի (կենս.) : «Ամբոխային Տրամաբա-  
նութիւն» (Ա. Թեկրեան) :

նութիւն, Վ» (Քրիստափոր)։ «Կովկ. Խարրիկներ» (Է. Ակնունի)։ «19րդ դար» (գաղաք-սոց. տեսութիւն)։ «Մէջքի Կարիեէ» (Պետո, գրական)։ Լուրեր Երկրից։

№ 4. Առաջնորդող՝ «Ամբոխային Տրամաբանութիւն, ՎԼ» — վերջ (Քրիստափոր)։ Պարսկ-Տաճկական սահմանադիրից։ «Կովկ. Խարրիկներ» (Է. Ակնունի)։ «Ջաւոն» (Ղարիբ)։ Այլ և այլ լուրեր։

№ 5. Առաջնորդող՝ «Իէպի՛ Երկիր» (Է. Ակնունի)։ «Կովկ. Խարրիկներ» (Է. Ակնունի)։ «19րդ դար» (շար.)։ «Մաթէօ Ծալիկնէ», Պր. Մերիմէ (գր.)։ Նամակներ

№ 6. Նշանաւոր Եւրոպացիների կարծիքը Հայկ. Խորհրդի մասին։ «Պատմական Չարիքը» (Քրիստափոր)։ «Կովկ. Խարրիկներ» (Է. Ակնունի)։ «19րդ դար» (շարուանկութիւն)։ «Աշուղը» (Ղարիբ)։ Լուրեր։

№ 7. Առաջնորդող՝ «Ոճրագործը գա՛հ վրա» (Արգիւլ Համիլ)։ «Մուրեցիներ» (յեզուիտութիւն և ներքին թշնամիներ)։ Բաց նամակ Հայերուն (Տամաս Մահմուտ փաշա)։ «Կովկ. Խարրիկներ» (Է. Ակնունի)։ «Կուր գաշտում» (Ղարիբ)։ Լուրեր։

№ 8. Առաջնորդող՝ «Միութիւն Թիւրքերի Հետ» (Քրիստափոր)։ «19րդ դար» (շար.)։ Հայկական Հարցը Փարիզի համաժողովներում։ Լուրեր։

№ 9. Առաջնորդող՝ «Pro Armenia»։ «Պատմական Չարիք» (Քրիստափոր)։ «Կովկ. Խարրիկներ» (Է. Ակնունի)։ «19րդ դար» (շար.)։ «Պրո Արմէնիա»-յի առաջին համարի բովանդակութիւնը։ Եւ այլն։

№ 10. Առաջնորդող՝ «Անվերջ դասեր»։ «Կովկ. Խարրիկներ» (Է. Ակնունի)։ «Պրո Արմէնիա» (№ 2 և 3)։ Տիրացու Գրիգորը. (Ղարիբ)։ Նամակներ Երկրից։

1901թ. լրս 5 տեսել 9 թիւ «Իրօշակ»։ № 1-9։

№ 1 — Հ. Յ. Դ. տաննամեակին ներկած բացառիկ թիւ, ճոխ, պատկերագրող։ Առաջնորդող՝ «Տաւնամեակ — 1890—1900»։ «Իշանակցութեան Տաննամեակին» — բերթած (Հայ-Գուսան)։ «Անցած Օրեր, Գալիք Օրեր» (Է. Ակնունի)։ «Վերջին Ժպիտը» (Արմէն Գարօ)։ «Տաննամեակին առջև» (Վար. Վահան)։ «Հայկական Կարմիր Ուղի» (Ն. Ա.)։ «Պաշտօնական տեղեկագիր (Բարկէն վարդ. — տեղեկագիրը Պարտիարքին Տաօնի մասին)։ «Ազատութեան Ոգին» (Ղարիբ)։ «Իրօշակ»-ի 10 տարւայ նիւթերի ցանկը։

№ 2. Առաջնորդող՝ «Կուր հայրերի գիպումս»

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն
Զանգեզուրի Աղէտը (Կոչ Հ. Յ. Դ. Բերօթի) . . . 97
«Իրօշակ»-ի Բաւասմանակը (Միբազր) . . . 98
Կովկասառայեցը և իր հարկանքը (Ռոստոմ) . . . 100
Ռոստոմի ինքնագիրը . . . 101
Զօրավար Նապարէգեան (Ս. Վրացեան) . . . 102
Մարտիպը և Ազգային հարցը (Գ. Գիւզաբեան) . . . 104
Թիւրքիայ շուրջ . . . 109

որդիքը»։ «Կովկ. Խարրիկներ» (Է. Ակնունի)։ Սերոբ-Աղբիւր (Կեն.)։ «19րդ դար» (շար.)։ «Պրո Արմէնիա» (№ 5, 6, 7, 8)։ Լուրեր։

№ 3. Առաջնորդող՝ «Պատմական Չարիք» (Քրիստափոր)։ Սերոբ-Աղբիւր (շար.)։ «Պրո Արմէնիա» (№ 9, 10, 11, 12)։ Ռուստաւորներ (Ղարիբ)։ Պուլխարիոյ Ապրիլեան յեղափոխութիւնը։ Թղթակցութիւններ Երկրից։

№ 4. Առաջնորդող՝ «Հայ-քրդական յարաբերութիւններ» (Քրիստափոր)։ «Կոչ Բիւրդերին», Պէտեր Խան-պէյի որդի Ապուլբաշան։ «Մայիսի 1ը Թիֆլիսում»։ Սերոբ-Աղբիւր (շար.)։ «19րդ դար» (շար.)։ Պուլխարիոյ Ապրիլեան յեղափոխութիւնը (շար.)։ Նամակներ Երկրից։

№ 5. Առաջնորդող՝ «Հայ-քրդական յարաբերութիւններ, II» (Քրիստափոր)։ Հայաստանի վիճակը։ «Կովկ. Խարրիկներ» (Է. Ակնունի)։ Սերոբ-Աղբիւր (շար.)։ «19րդ դար» (շար.)։ «Պրո Արմէնիա» (№ 13, 14, 15, 16)։ «Իարքնի Երգը» (Ղարիբ)։

№ 6. Առաջնորդող՝ «Մասունի եօթնամեակը»։ «Մրդկահարը» (Մ. Գորիկ)։ «Սեղծ Հայեր»։ «Վերջին դէպքերը — Սասուն, Մուշ»։ Թղթակցութիւններ Երկրից։ «Պրո Արմէնիա» (№ 17, 18)։ «Իարքնի Երգը» — շար. (Ղարիբ)։ № 6-ի հարեմը՝ «Վերջին շարթ»-այ լուրեր։

№ 7. Առաջնորդող՝ «Արթուն լինէ՛ք»։ «Հայաստանի վիճակը — Մուշ»։ Թղթակցութիւններ Երկրից։ Սերոբ-Աղբիւր (վրջ)։ Պուլխարիոյ Ապրիլեան յեղափոխութիւնը։ Ռազդարեանի X համալս. կոնգրեսը Գլխակովում և Հայկական Հարցը։

№ 7-ի յանձնած՝ «Վերջին Երարթ»։

№ 8. Առաջնորդող՝ «Սպասողական վիճակում»։ Հայկ. Հարցը Տրանս. Ռոբհրաբանին մէջ։ Թղթակցութիւններ Երկրից — Մուշ, Վասպուրական։ «19րդ դար» (շար.)։ Տրանսիայի սոցիալիստները և Հայկական Հարցը։ «Կեանքի գիմաց» (Մ. Գորիկ)։

№ 9. Չորս կարողան—Պետրոս Մէրէմեան և ընկերներ։ Առաջնորդող՝ «Բանակաւորութեան Չայնը»։ Ալիշան (Մահան առթիւ)։ «Հայերը» (Ամ. Զիպրեան)։ Թղթակցութիւններ Երկրից—Սղերդ, Խարրիկ։ «Կովկ. Խարրիկներ» (Է. Ակնունի)։ «19րդ դար» (շարուանակութիւն)։ «Սեղեղեցի՛ք Չայնը» (Աւրան—Ռ. Զարգարեան)։ «Իարքնի Երգը» (Ղարիբ)։

(Շարունակելի)

Հ Ա Տ Ա Ս Ս Ն Ո Ւ Մ
«Սոցիալիզմ եւ կառուցում» . . . 113
Բանութիւնների աշխարհում . . . 119
Լուրեր Երկրից . . . 117
Սեփաքից Սաֆօի ինքնակենսագրութիւնը . . . 118
Միք գանքը . . . 122
40 տարւայ «Իրօշակ»ների բովանդակութիւնը . . . 124